

ՎԱՐԶԻԿ



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԵՄՔԱՐԱԳԵՏՈՒԹՅՈՒՆԻ ՌԵՍՏԱՐԱՎԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE

YARDZK
CITY OF SOUL

N 12

2016



Սամվել Արվազյան, Ամիրան Բաղիբյան
ՏԱԹԵՎԻ ՃՈՃՎՈՂ ԱՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ



էջ 1

Սամվել Կարապետյան
ԹՐԻՆ ԿԱՆՔԸ



էջ 12

Գևորգ Ղազարյան
ԱՎՆԻ ՀԱՅ ՀՈՌՈՒՄՆԵՐԸ



էջ 19

Առոս Օհանյան
ՄԻ ՀԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ



էջ 27

Անի Բաբայան
**ՆՈՐԱՀԱՅՑ ԵՋ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՍԲ. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ
ՎԱՆՔԻ ԵՎԵՂԵՑՈՒ ԳՍԲԵԹԻ ԳԵՂԱՐԿԵՍՏԱԿԱՆ
ՀԱՐՂԱՐԱՆՔԻՑ**



էջ 31

Սահակ Կարդանյան
ԶԱՄՈՇՓԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ



էջ 35



N 12

2016

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ
ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Editor-in-chief

SAMVEL KARAPETIAN

ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ
ԷՄՄԱ ԱԲՐԱԿՅԱՆ

ԽՄԲԱԳԻՐ

Editor

EMMA ABRAHAMIAN

ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԽՄԲԱԳԻՐ-ՍՐԲԱԳՐԻՉ

Proof-reader (Armenian text)

HASMIK HOVHANNISSIAN

ԳԱՅԱՆԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ԹԱՐԳՄԱՆԻՉ

Translator

GAYANE MOVSISSIAN

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՄԱԿԱՐԳՁԱՅԻՆ ՔԵՎԱԿՈՐՈՂ

Designer

ARMEN GEVORGIAN

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՆԱՅԻՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ

RESEARCH ON ARMENIAN
ARCHITECTURE FOUNDATION
Engaged in informational Activity

ՎԿԱՅԱԿԱՆ N 03U089223

ՏՐԿԱԾ 13.10.2010

Certificate No. 03U089223

Given 13.10.2010

ՀԱՄԱՐԻ ԹՈՂԱՐԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Responsible for this issue

SAMVEL KARAPETIAN

ԵՐԵՎԱՆ, ԲԱՂՐԱՄՅԱՆ 24Գ

Baghramian 24g, Yerevan, RA

<http://www.armenianarchitecture.am>

<http://www.raa.am>

✉ raayer@sci.am

☎ 010 52 15 25

© ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ

© Research on Armenian Architecture

ՏԱԹԵՎԻ ՃՈՃՎՈՂ ՍՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Սամվել Այվազյան, Ամիրան Բաղիշյան

Նյութն ավելի հակիրճ տարբերակով լույս է տեսել «Ճարտարապետություն և շինարարություն» հանդեսում (2016, № 3-4, էջ 32-39):

Հնագույն ժամանակներից Հայկական լեռնաշխարհում տարաբնույթ գործառույթներով (հիմնականում պաշտամունքային) լայն տարածում են ունեցել կոթողային հուշարձանները: Դրանցից են մ.թ.ա. Ե-Դ հազարամյակների մենհիրները, Բ հազարամյակում տարածված ցլակերպ և ձկնակերպ վիշապաքարերը, մ.թ.ա. Թ-Է դարերի ուրարտական արձանագիր կոթողները, մ.թ.ա. Բ դարի արամեերեն արձանագրությամբ արտաշեսյան սահմանաքարերը և այլն:

Հայկական քրիստոնեական ճարտարապետության ձևավորման և զարգացման ընթացքում առանձնակի տեղ և դեր ունեն կոթողային հուշարձանները, որոնք, կրելով նախաքրիստոնեական վաղնջական ժամանակների նմանատիպ կառույցների հարուստ ժառանգությունը, սկզբնավորվել են Դ-Է դարերում քառակող պատկերազարդ (Կարմրաքար, Գառնահովիտ, Թալին, Հառիճ և այլն), ինչպես նաև աստիճանաձև պատվանդանի վրա կանգնեցված քառակող կամ բազմանիստ սյուների (Դսեղ, Անգեղակոթ, Երևան (Ավան), Օշական, Առինջ, Որոտնավանք և այլն) տեսքով: Դրանք պատկանում էին խոյակով, ծավալային խաչով: Հուշասյուն-կոթողային հուշարձանների ծավալատարածական հորինվածքի զարգացման օրինակներ են Օձունի, Աղիտուի, Տաթևի (ավերակ) կոթողները, Ցաղաց քարի և Հանդաբերդի մոտ գտնվող վանքի դամբարան-կոթողները և այլն:

Թ դարում կոթողակերտության զարգացմամբ սկզբնավորվում է նաև խաչքարային արվեստը՝ բազմահազար քանդակային հորինվածքներով ու բովանդակությամբ լրացնելով հայկական և համաշխարհային արվեստի գանձարանը:

Որպես յուրահատուկ ճոճվող կառույց՝ գեղարվեստական բարձր արժանիքներով հայկական կոթողային արվեստի պատմության, ինչպես նաև համաշխարհային ճարտարապետության գանձարանում ուրույն տեղ ունի Տաթևի վանքի գավազան-սյունը¹:

Հիմնադրման մասին միակ փաստարկը պատմիչ Սյունյաց եպիսկոպոս Ստեփանոս Օրբելյանի նկարագրությունն է. «...Ահա զայս իսկ աւարտեալ զամս մետասան՝ կանգնէ և մերձ եկեղեցոյն (խոսքը Պողոս-Պետրոս եկեղեցու մասին է, որը հիմնադրվել



Տաթևի ճոճվող սյունը հյուսիս-արևմուտքից, 2012 թ.

է 895 թ.) հանդեպ դրանն հարատյ սին մի զարմանալի յանուն սրբոյ Երրորդութեանն ի մանր քարանց պատուածեալ ի չափ 30 կանգնոյ...»²:

Այստեղից ստացվում է, որ գավազան-սյունը հիմնադրվել է 895+11=906 թ., սակայն պատմիչը,

¹ Համաշխարհային ճարտարապետության պատմության մեջ նմանօրինակ կառույցներն առհասարակ խիստ սակավաթիվ են: Ամենահայտնիներից են Սպահանի Հարլադան գյուղի (այժմ՝ Սպահանի շրջագծում) մզկիթի մինարեթները (1315 թ.), որոնցից մեկի ճոճմանը համընթաց տատանվում է նաև երկրորդը:

² Ստեփանոս Օրբելյան, Պատմություն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 225:

մեկ այլ գլխում նկարագրելով խոնարհագրիների ավերածությունները, գրում է. «...կամեցան եւ զքանչելի սինն կործանել զմեծ Տէր Յովհաննիսին որ երկու ամա յառաջ քան զմեծ եկեղեցին էր կանգնեալ և տեսեալ հրաշս ինչ ոչ իշխեցին հայիլ. նմանապէս և ոչ ի մեծ եկեղեցին...»³: Այս դեպքում հիմնադրման թիվը ստացվում է 904 թ. (906-2=904): Երկու տարվա տարբերությանն առանձնակի մեծ կարևորություն չտալով՝ գավազան-սյան հիմնադրումը կարելի է վերագրել 904-906 թթ., չնայած մեր կարծիքով տրամաբանական է 906 թ., քանի որ Պողոս Պետրոս տաճարի մեծածավալ շինարարության ընթացքում հազիվ թե ավարտվեր նման եզակի սյան կառուցումը, մյուս կողմից էլ սյան կանգնեցումը կարող էր նվիրված լինել Մայր եկեղեցու բացման հանդիսավոր արարողությանը:

Գավազան-սյունը, որպես հայկական կոթողային արվեստի ստեղծագործություն, առանձնանում է իր յուրահատկություններով: Չուգահեռներ անցկացնելով նմանատիպ կառույցների միջև՝ նկատում ենք, որ

ա Մինչ այդ կանգնեցված բոլոր կոթողներին, որոնց առավելագույն բարձրությունը հասնում է մինչև 6 մ, բնորոշ է լայնածավալ, աստիճանաձև հիմնային կառուցվածքը:

բ Գրեթե բոլոր կոթողների սյուների բներն իրականացված են մեծածավալ, միակտոր քարերով:

գ Հիմնականում մեզ են հասել կիսակործան վիճակում:

Մինչդեռ Տաթևի ճոճվող գավազան-սյունը

ա Կոթողների շարքում ունի ամենամեծ (8,3 մ) բարձրությունը և ամենափոքր երկաստիճան հիմքը:


բ Սյան բունն իրականացված է հայկական «Միդիս» տիպի քարաշարվածքով, կրաշաղախով:

գ Շուրջ հազարամյա պատմության ընթացքում ենթարկվելով բնական և արհեստածին բազմապիսի արհավիրքների՝ մեզ է հասել խարխուլ, բայց ամբողջական և կանգուն վիճակում:

դ Հակառակ մինչ այդ և դրանից հետո կառուցված հայտնի բոլոր կոթողների, որոնք ունեցել են ստատիկ վիճակ, ի սկզբանե կառուցվել է հողակապային հանգույցով հիմքի վրա՝ որպես դիմամիկ կառույց, որտեղից էլ առաջացել է ճոճվող գավազան կամ ճոճվող սյուն անվանումը:

Սյան գործառույթի վերաբերյալ կան ավանդաբար փոխանցված տարաբնույթ մեկնաբանություններ (որպես հոգևորականության որոշ դասի համար հոգևոր-էներգետիկ ուժի ստուգում, սպասվող երկրաշարժերի, հեծելագորով մոտեցող թշնամիների մասին ահազանգ և այլն), սակայն մեր ներկա խնդիրն է ներկայացնել սյան կառուցվածքը:

Երկաստիճան խարխիսը բաղկացած է երկու մեծաչափ, միակտոր բազալտներից, որոնցից ստո-



Տաթևի ճոճվող սյունը հյուսիս-արևմուտքից (լուս.՝ մինչև ժԹ դարի վերջը՝ արտատպված Գ. Խալփախչյանի նշյալ հոդվածից)

րինը հիմքում ունի քառակուսի հատակաձև, իսկ վերին կեսում անկյունային թեք հատումով փոխակերպվում է ութանիստի, որի վրա նստում է խարխիս՝ ավելի փոքր չափերի երկրորդ ութանիստ աստիճանը: Վերջինիս վրա կանգնած սյան ութանիստ բունը միջնամասում երկատվում է զույգ պարանահյուս գոտիով՝ այն բաժանելով 2,66 մ և 2,13 մ ուղղաձիգ մասերի: Սյունը պսակված է քանդակազարդ ութանիստ խոյակով, որի վրա կանգնած է ցանցկեն, երկկողմանի մշակված և շրջանակի մեջ առնված թևավոր խաչը՝ քանդակազարդ պատվանդանով: Սյան իրանի որոշ հատվածներում կան տարբեր ժամանակներում քանդակված վարդյակներ և խաչեր, իսկ հարավային նիստին՝ արևի ժամացույց հավքի պատկերի ներքո:

ԺԹ դարի վերջերին սյունը շրջափակվում է ժամանակաշրջանի ոճին ու ճաշակին համապատասխան ցանկապատով՝ կառուցված քարից և մետաղից, որն իր ակտիվ ծավալներով և չափերով խաթարում է սյան նախնական տեսքի ճիշտ ընկալումը:

1931 թ. Սյունիքի երկրաշարժից Տաթևի գրեթե ամբողջ համալիրը խիստ վնասվում է, որոշ շինություններ վերածվում են փլատակների, սակայն գավազան-սյունը խարխիվում է միայն միջնագոտուց ներքև ընկած մասով: Երկրաշարժից հետո այն ներառվում է մետաղական ձգիչ օղակների մեջ, որոնց շնորհիվ էլ կանգուն է մինչ օրս: Չնայած սեյսմիկ ուժերին դիմակայելու և կանգուն մնալու հիմնական երաշխիքը նրա ճոճվելու ունակությունն է, Թ. Թորամանյանն այս իմաստով մեծ դեր է վերագրում նաև ավանդական քարաշարվածքի և

3 Նշվ. աշխ., էջ 313:



Տաթևի ճոճվող սյունը հյուսիս-արևմուտքից (լուս.՝ Գուրոսի, ԺԹ-ի դդ.)

կրաշաղախով միջուկի (լիցքի) առանձնահատկություններին⁴:


Տաթևի գավազան-սյան յուրահատկություններն ու առեղծվածային համարվող ճոճվելու (երերալու) երևույթը տարբեր ժամանակներում հետազոտողների ուշադրության կենտրոնում են եղել, որոնք, սակայն, հիմնականում բավարարվել են լոկ նկարագրություններով և ճոճվելու փաստն ամրագրելով:

Ս. Ջալալյանը գավազանի ճոճման հատկությունը ենթադրաբար վերագրում է հիմքում սնդիկի առկայությանը⁵, որն այնուհետև կրկնվում է նաև Էմիրի (Սիմոն Գուլամիրյան)⁶ և Ե. Լալայանի⁷ նկարագրություններում:

Վ. Հարությունյանը և Ս. Սաֆարյանը, անդրադառնալով գավազանի ճոճվելու երևույթին, այն բնորոշում են որպես երերացող կառուցվածք՝ կրնկավոր հիմքի վրա, առանց սկզբունքային մեկնաբանության և վերլուծության⁸:

Հաջորդ հետազոտողները՝ Ա. Երիցյանը և Գր. Քոչոյանը, կատարել են գավազանի ճոճման տեսական վերլուծություն, ստացել տատանման անկյան աստիճանային արժեքներ, սակայն չեն քննել ճոճման հողակապային կառուցվածքը⁹:

Ա. Երիցյանի վերլուծության համաձայն՝ սյունը ճոճվելիս ուղղահայաց առանցքի հետ կազմել է 16°19' անկյուն և կատարել 2,13 մ (1 սաժեն) շառավղով շրջանագծային պտտական շարժում:



Տաթևի ճոճվող սյան տեսական շեղումը, առանցքաչափական տեսքը և հողակապային կառուցվածքի կտրվածքն ըստ Գ. Խալփախյանի

Գրեթե նույնպիսի տվյալների է հանգել նաև Գր. Քոչոյանը՝ 15° թեքման անկյուն և 1,96 մ շառավղով շրջանագծային շարժում:

Նշենք, որ այսպիսի տվյալներով ճոճման դեպքում գավազան-սյան ծանրության կենտրոնը, ըստ ֆիզիկայի օրենքների, դուրս կգա թույլատրելի սահմաններից (եթե, իհարկե, ներքևի հատվածներում չունի գերծանր զանգվածով լցանյութ), և այն ուղղակի կտապալվի:

Գավազան-սյան՝ անհամեմատ մանրամասն վերլուծություններ է կատարել Հ. Խալփախյանը 1961 թ.¹⁰: Հենվելով չափագրումների և հաշվարկների վրա՝ նա ստացել է ծանրության կենտրոնի մոտավոր դիրքը, սյան 3°56' թեքման անկյունը, 0,53 մ շառավղով հողակապային շարժում առաջացնող խարսխի երկու աստիճանների՝ տարակենտրոն կորություններով միմյանց վրա նստող գնդային մակերևույթները, իսկ սյան ստատիկ (ուղղաձիգ) կայուն դիրքն ապահովելու իմաստով ենթադրում է, որ ստորին աստիճանի կենտրոնում առկա է 35-38 սմ

4 **Թորամանյան Թ.**, Հայկական ճարտարապետություն, Երևան, 2013, էջ 183-184:
 5 **Ջալալյան Ս.**, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, Տփղիս, 1858, Բ, էջ 268:
 6 **Էմիր**, Տաթևի վանքը, «Արարա», 1892, Բ, էջ 29:
 7 **Լալայան Ե.**, Միսիան, «Ազգագրական հանդես», 1898, գիրք Գ, № 1, էջ 139:
 8 **Арутюнян В., Сафарян С.**, Памятники армянского зодчества, Москва, 1951, с 49.
 9 **Ерицов А.**, Татевский монастырь, Пятый Археологический съезд в Тифлисе. Протоколы подготовительной комиссии этого съезда, Москва, 1882 с. 408-412, 420.

10 **Խալփախյան Հ.**, Տաթևի երերացող սյունը, «Էջմիածին», 1962, Թ, էջ 45-57:



Տեղաշարժված քարը հանելուց հետո երևում է միջնագոտու կենտրոնի անցքը, 1987 թ.



Խարսխի երկու աստիճանների միացման հանգույցում տեղադրված ձողաքանոնը, 2014 թ.

տրամագծով անցք, որի եզրագծով նստում է գնդաշին մակերևույթով վերին աստիճանը: Այսպիսի հողակապային կառուցվածքով մա գուգահեռներ է անցկացնում ռուսական հայտնի «Վանկա-վստանկա» խաղալիքի հետ: Այս վերլուծության արդյունքները մախորդների համեմատ ավելի իրատեսական են, սակայն Խալփախչանը նույնպես համարում է, որ սյունը ճոճվել է բոլոր ուղղություններով:

1980-ական թվականներին Հուշարձանների պահպանման և օգտագործման վարչության նախագծային ինստիտուտի կողմից կատարվող Տաթևի վանական համալիրի վերականգնման համար հետազոտական և նախագծային աշխատանքների ծրագրի շրջանակներում մեր կողմից, ի թիվս այլ կառույցների, 1987 թ. կատարվեցին և 2015 թ. վերանայվեցին մա ճոճվող գավազանի բնօրինակային հետևյալ հետազոտությունները.

–Ճոճման հնարավորությունը պարզելու համար փոշուց, բուսարմատներից և այլ գոյացություններից մաքրեցինք երկաստիճան խարսխի երկու մեծակտոր քարերի՝ աստիճանների հպման մակերեսները, որից հետո մարդկային ուժի գործադրմամբ ճոճեցինք սյունը: Գազաթի մասում տատանման չափն աչքի ընկալմամբ կազմում էր մոտ 30-35 սմ:

–Վերոնշյալ քարերի հպման հարթությունում առկա բացվածքը հետազոտելու նպատակով 1 մ երկարության ձողաքանոնը մտցնելով բացվածքի մեջ՝ տարբեր անկյուններով հորիզոնական շարժումներով բացահայտեցինք, որ խարսխի ութանկյունաձև աստիճանաքարերը միմյանց հպվում են երկու՝ հարավարևմտյան և հյուսիսարևելյան գագաթներում, իսկ մնացած հատվածներն ուղղակի ազատ են, և արևմտյան նիստի հյուսիսային անկյունում այդ բացվածքը հասնում է մոտ 1,3 սմ-ի: Մրանով հերքվեց և բացառվեց մախորդ հեղինակների տեսական հետազոտությունների հիմնական

թեզը, ըստ որի՝ սյունը ճոճվել է բոլոր ուղղություններով: Այն տատանվել է միայն մեկ՝ ութանիստի հարավարևելյան և հյուսիսարևմտյան գագաթներով անցնող առանցքի ուղղությամբ (հենվելով նշյալ առանցքին ուղղահայաց ուղղության վրա գտնվող երկու հանդիպակաց փոքր մակերեսներին):

–Սյան իրանի վերևի և ստորին հատվածների կապակցման խնդիրը պարզելու նպատակով մետաղական կապերից մեկն ապամոնտաժվեց, տեղահանվեց միջնագոտու ներքևի, կրամիջուկից պոկված և տեղաշարժված մի քար: Արդյունքում պարզեցինք, որ սյան միջին գոտու կենտրոնում առկա է 12-14 սմ տրամագծով անցք, որի միջով անցնող կրաշաղախը սյան երկու մասերը կապում է միմյանց:

Ինչպես արդեն նշել ենք, Տաթևի սյունը կանգուն է մնացել անգամ այն դեպքում, երբ վանքի բոլոր կառույցները բազմիցս քանդվել են երկրաշարժերից և թշնամիների հարձակումներից: Այստեղից հետևում է՝ բացի այն, որ սյունն ունեցել է բացառիկ հոգևոր խորհուրդ (նվիրված է Մուրբ Երրորդությանը), կառուցողները, հասկանալով բարձր և ուղղաձիգ շինության փլուզման հակվածությունը, ջանացել են ստեղծել տարաբնույթ վտանգավոր ուժերին հաջողությամբ դիմակայելու մեխանիզմ: Ըստ էության, ճարտարապետներն ու շինարարները հաջողությամբ իրագործել են իրենց մտահղացումը, որի շնորհիվ էլ սյունն առ այսօր կանգուն է: Գոյության ավելի քան 11 դարերի ընթացքում երկրացնցումները կառույցը չեն տապալել, քանի որ դրանք մարվել են սյան տատանումների շնորհիվ, իսկ թշնամիների ջանքերն ավարտվել են սարսափով՝ տեսնելով «...հրաշա...» սյան ճոճքը:

Այժմ փորձենք բացատրել, թե որն է ճոճման «գաղտնիքը»: Համաձայն չլինելով ճոճման սխեմայի ու բնույթի՝ մինչ այժմ եղած մախորդ ուսումնասիրությունների եզրահանգումներին՝ ներկայացնում ենք հաշվարկների հետազոտությունների և բացահայտումների մեր տարբերակը:

Երկաստիճան՝ երկու միակտոր բազալտներով խարսխի վերին աստիճանը, որ միաձույլ կառուցված է



Խարսխի երկու աստիճանների հյուսիսարևմտյան միստերի բացվածքը, 2014 թ.



Խարսխի երկու աստիճանների ճեղքից թափանցող հանդիպակաց լույսը, 2014 թ.

սյան բնի բազալտե շարվածքի հետ, ազատ նստած է ստորին աստիճանին: Սյան ստատիկ վիճակում աստիճանների հպման մակերևույթները, որոնք երկու առանձնացված հատվածներ են, գտնվում են խարսխի հարավային միստի արևմտյան և հյուսիսային միստի արևելյան անկյան տիրույթներում և մեկ գծի վրա՝ պայմանական հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք ուղղությամբ: Նշվածին ուղղահայաց՝ տատանման ուղղության երկու ծայրերում խարսխի երկու մասերի (աստիճանների) գագաթները միմյանցից հեռացված են 1,3 սմ-ով: Կարող ենք փաստել, որ սյան ճոճքն այդ միակ ուղղությամբ է, որը շեղված է արևելք-արևմուտք առանցքից 22°30', և կարելի է պայմանական համարել հարավ-արևելք – հյուսիս-արևմուտք ուղղություն:

Խարսխի երկու մասերի հպման տիրույթները և միմյանցից հեռացված գագաթները նկատելի են նույնիսկ անգն աչքով, իսկ եթե ուշադիր նայենք ճոճման հանգույցին (հողակապին) մեր՝ պայմանական ընդունված հարավարևելյան կամ հյուսիսարևմտյան կողմից, աչքի մակարդակը համատեղելով երկու մասերի հպման բացվածքին, կնկատենք ճեղքի միջով թափանցող հանդիպակաց լույսը:

Որպեսզի սյունը կարողանա ճոճվել, պետք է խարսխի վերին աստիճանի՝ միակտոր քարի ստորին մակերևույթն ունենա որոշակի՝ գլանային կորության ուռուցիկություն, իսկ ներքևի աստիճանի՝ միակտոր քարի վերնամասը կարող է լինել հորիզոնական կամ գոգավոր մակերևույթով, սակայն շատ ավելի մեղմ կորությամբ, քան վերին աստիճանի ուռուցիկությունը (այդ պատճառով հաշվարկներում ներքևի աստիճանի վերնամասն ընդունում ենք հորիզոնական մակերևույթով): Սյան ճոճումն ապահովող վերին աստիճանի հիմքի կորության կենտրոնը պետք է գտնվի սյան ուղղահայաց առանցքի վրա և պարտադիր ծանրության կենտրոնից բարձր, որի նվազագույն չափի դեպքում էլ կապահովվեն սյան ճոճումն ու անշրջելիությունը (եթե, իհարկե, այնքան մեծ ուժ չգործադրվի, որ ծանրության կենտրոնի ուղղահայաց պրոյեկցիան դուրս գա հիմքի մակերեսից): Սա հիմնավորվում է ֆիզիկայի օրենքներով, որ

նշված պայմանի դեպքում հորիզոնական ուժի կիրառմամբ սյունը ճոճելիս վերջինիս ծանրության կենտրոնի պրոյեկցիան միշտ կգտնվի տվյալ դիրքի հենման կետի և սյան ուղղահայաց առանցքի միջակայքում, հետևաբար ծանրության ուժի ազդեցությամբ սյունը կվերադառնա նախկին՝ ուղղահայաց դիրքին: Այնուհետև իներցիայով կթեքվի հակառակ կողմ ու նորից դեպի նախկին դիրք և այսպես ճոճվելով՝ կանգ կառնի շփման ուժերի ազդեցությունից:

Ներկայացնենք տատանման բնույթը, հողակապի կառուցվածքն ու չափերը:

Նախապես գտնենք ճոճվող սյան ծանրության կենտրոնի կոորդինատները հիմքի՝ խարսխի վերին աստիճանի հիմնամասի կենտրոնի նկատմամբ՝ ընդունելով, որ սյունը կազմված է միևնույն տեսակաբար կշիռն ունեցող նյութերից (նույնը համարելով բազալտե մանրահատիկներով կրաշաղախե միջուկն ու բազալտից շարվածքը): Միաժամանակ նշենք, որ առայժմ չգիտենք միջուկի ողջ կրաշաղախի ճիշտ բաղադրությունը: Քիչ հավանական է, սակայն չի բացառվում, որ սյան ներքևի հատվածներում գործածված լինի արճիճ՝ ծանրության կենտրոնը հիմքին մոտեցնելու միտումով (ելնելով վտանգավորությունից և օգտագործման անհարմարություններից՝ սնդիկի գործածման վերոնշյալ ենթադրություններն իրատեսական չենք համարում), որը լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունի, սակայն անկախ իրական վիճակից՝ տատանման սխեման ու կառուցվածքը չեն կարող փոխվել, կփոփոխվեն միայն տատանման լայնությամբ ու անկյունը:

Մեր կողմից կատարված հաշվարկներն ու վերլուծությունները հետևյալն են.


Ծանրության կենտրոնի հորիզոնական կոորդինատը՝ $X = 0$, քանի որ սյունն ուղղահայաց առանցքի շուրջը սիմետրիկ է կառուցված:

Ուղղահայաց կոորդինատը որոշում ենք՝

$$Y = (\sum M_K \times Y_K) : M \text{ բանաձևով, որտեղ}$$

- M_K -ն մեկ ուղղահայաց առանցքի վրա տեղադրված սյան՝ տարբեր երկրաչափական ձևեր ունեցող հատվածների մասսաներն են:

Տաթևի սյան ճոճման սխեմա





Ե-Է դարերին բնորոշ թևավոր խաչի բեկոր (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2012 թ.) և դրա վերակազմությունը ըստ Ս. Այվազյանի և Ա. Բաղիշյանի, 2016 թ.

-Y_K-ն նույն հատվածների ծանրության կենտրոնների, որոնք գտնվում են տվյալ հատվածի երկրաչափական կենտրոնում, կոորդինատներն են՝ դիրքը ճոճման կետի՝ հիմքի նկատմամբ:

-M-ը բոլոր հատվածների մասսաների գումարն է:

Քանի որ սյունը համարել ենք միակշիռ նյութից կազմված, վերը նշված բանաձևում մասսաները կարող ենք փոխարինել ծավալներով և տեղադրելով համապատասխան արժեքները՝ կստանանք $15,36 : 4,758 = 3,2282$ մ:

Այսպիսով՝ սյան ծանրության կենտրոնի կոորդինատներն են՝ $X = 0$, $Y = 3,23$ մ:

Ստացված արժեքներով գտնելով ծանրության կենտրոնը՝ պարզվում է, որ այն տեղադրված է անմիջապես սյան բնի միջին մասով անցնող գույգ պարանահյուս գոտու տակ:


Հարկ է նշել, որ սյան գագաթի սկզբնական խաչը, որը կարող էր լինել նաև վանքի տարածքում գտնվող, ստորին մասում *Յովսէփ* անձնանվան փորագրությամբ բեկորված թևավոր խաչը, ԺԵ դարում փոխարինվել է ցարդ պահպանվածով: Նախնական խաչն ավելի բնորոշ է Ե-Է դդ. և տվյալ պարագայում կլիներ երկրորդական օգտագործմամբ: Սա նաև այն հազվագյուտ խաչերից է, որոնց հիմնաքից դուրս եկող բուսատերևներն ուղղված են ոչ թե դեպի խաչի բունը, այլ հակառակ:

Այս յուրահատուկ լուծումը վերարտադրվել է նաև փոխարինված շրջանակի մեջ առնված թևավոր խաչի հորինվածքում: Նման երրորդ խաչապատկերն առաջմ հանդիպում է միայն Թալինի կոթողներից մեկի պահպանված խորանարդաձև պատվանդանի դիմերեսին¹¹:


Եթե սկզբնականը եղել է ավելի մեծ և ծանր, ապա ծանրության կենտրոնն ի սկզբանե կարող էր գտնվել նշված պարանահյուս գոտու ճիշտ հորիզոնական առանցքի վրա: Ամեն պարագայում վստահորեն կարող ենք պնդել, որ նշյալ գոտին, բացի գեղագիտական նշանակություն ունենալուց, գիտակցաբար տեղադրվել է հենց սյան ծանրության կենտրոնի մակարդակում՝ շեշտելով այն:

Ծանրության կենտրոնի բարձրությունն ունենալուց հետո գտնենք խարսխի վերին աստիճանի հիմնամասի գլանային կորության կենտրոնը, այսինքն՝ որոշենք այն շառավիղը, որով հիմնականում տեղի է ունենում սյան տատանումը: Շառավղի չափը կախված է հիմնամասի լայնությունից՝ $2n = 118,0$ սմ և k կորության վերելքից՝ տվյալ դեպքում խարսխի երկու աստիճանների գագաթների միջև բացվածքից, որը մեր չափումներով մոտ $1,3$ սմ է (ճշգրտությունը կախված բազալտի խոշոր ծակոտ-


¹¹ Լուսանկարը տես **Մնացականյան Ս.**, Հայկական վաղմիջ-նադարյան մեմորիալ հուշարձանները, Երևան, 1982, էջ 9:



Ճոճման հանգույցի կտրվածք b-c առանցքով
 (Կառուցվածքն ավելի ակնառու ցուցադրելու համար ճոճման R շառավիղը իրական 13,395 մ չափից փոքրացված է)




Կտրվածք 1-1՝ հենման տիրույթով դեպի վեր
 (Ֆեմնան տիրույթի գնդային ելունների տարբերակ)



ճոճման հանգույցի կտրվածքը հենման a-a կետերի առանցքով

(Կառուցվածքն ավելի ակնառու ցուցադրելու համար ճոճման R շտապվիլը իրական 13,395 մ չափից փոքրացված է)



Կտրվածք 1-1՝ հենման տիրույթով դեպի վեր
(Ֆենման տիրույթի հորիզոնական տարբերակ)

կենտրոնից՝ 1-3 մմ): Օգտագործելով $R = (k^2 + n^2) : 2k$ բանաձևը՝ հաշվարկենք R շառավիղը.

$$R = (1,3^2 + 59^2) : 2 \times 1,3 = 1339,496 \text{ սմ} = 13,395 \text{ մ}$$


Ստացվում է, որ խարսխի վերին աստիճանի հիմնամասի կորությունն այնպես է տաշված, որ դրա կենտրոնը չորս անգամ և մի փոքր ավելի բարձր է տեղակայված սյան ծանրության կենտրոնից, որը ֆիզիկայի օրենքներով ապահովում է սյան տատանումը:

Այժմ տեսնենք, թե ինչ կառուցվածք պետք է ունենա երկաստիճան խարսխի աստիճանների միմյանց հպման տիրույթը՝ երկու առանձնացված միանման հատվածները: Այն առաջնահերթ պետք է ապահովի սյան ստատիկ վիճակի կայունությունը: Տեսականորեն սյունը կարող էր կայուն լինել և ճոճվել, եթե մույնիսկ հենվեր գլանային տաշվածքով հիմնամասի մեկ ծնիչով միայն, որն անցնում է ներկայացված սխեմայի a-a առանցքով, սակայն հաշվի առնելով, որ գործնականում խարսխը տաշվում է ձեռքի գործիքներով (անխուսափելի են անհարթությունները), և հետագա ճոճման ընթացքում կառաջանան որոշ տրորվածքներ, ինչպես նաև կլինեն անցանկալի դյուրին (աննշան ուժի կիրառմամբ) տատանումներ, հենման այդ ծնիչը պետք է փոխարինվեր փոքր-ինչ լայն մակերեսով (տիրույթով), որը կապահովեր նաև առավել կայուն վիճակ, իսկ ճոճման համար կպահանջվեր ավելի մեծ ուժ: Մետաղական ձողաքանոնը խարսխի երկու աստիճանների բացվածքի մեջ տարբեր ուղղություններով շարժելով՝ մոտավոր որոշեցինք երկու առանձնացված հատվածների լայնությունները, որոնք տատանվում են 20 սմ սահմաններում: Հենման տիրույթը որոշելուց հետո հարց էր առաջանում, թե ինչու այն չի ձգվում ամբողջ a-a առանցքով, այլ կենտրոնական մասում աստիճանները հեռացված են միմյանցից, որի ապացույցն է նաև հանդիպակաց կողմից լուսի անարգել թափանցումը: Հենման տիրույթի a-a առանցքով միասնականությունն ընդմիջված է խարսխի վերին աստիճանի ամբողջական գլանային տաշված հիմնամասի կենտրոնական հատվածում գոգավոր՝ գնդային կամ էլիպսոիդային փորվածքի միջոցով: Վերջինիս, ինչպես նաև հենման տիրույթի ճշգրիտ կառուցվածքը հնարավոր է ներկայացնել միայն խարսխներն առանձնացնելուց հետո կամ հատուկ գործիքային հետազոտմամբ, սակայն այն կարելի է կռահել՝ նկատի ունենալով հենման տիրույթի գործառական նշանակությունը (կայունության ապահովում և տատանման սահունություն) և սյան ճոճվելու նպատակը (դիմակայում սեյսմիկ ուժերին, մարդկային ուժով ճոճվելու հնարավորություն և այլն):


Հենման տիրույթների կառուցվածքը տրված է գծագրերում երկու տարբերակով.

ա) Երբ դրանք խարսխի երկու աստիճանների վրա էլ հորիզոնական մակերևույթներ են.

բ) Երբ դրանք մի աստիճանի վրա գնդային սեգմենտով փոքր ելուններ են, մյուսի վրա՝ ճիշտ նման փորվածքներ, ընդ որում, ելունները կարող են լինել կամ վե-



Կտրվածք ճոճման ուղղությամբ



Հենման տիրույթի գնդային ելունների տարբերակով կտրվածք



Հենման տիրույթի հորիզոնական տարբերակով կտրվածք

րին, կամ ստորին աստիճանի վրա: Հակված ենք կարծելու, որ դրանք խարսխի վերին աստիճանի հիմնամասում են, որի դեպքում սյան տատանման հետընթացի ժամանակ վերին գնդային ելուններն ավելի սահուն կվերադառնան նախկին դիրքին: Նշենք, որ ելունով տարբերակում սյան հորիզոնական հարթության մեջ հնարավոր պտտական, վտանգավոր շարժման դիմակայությունը հորիզոնական տարբերակի համե-

մատ ավելի է մեծանում (մինչ օրս սյան վրա նման շարժումով թելադրված շեղումներ չկան)¹²:

Այսպիսով, հստակեցնելով տատանման հանգույցի կառուցվածքը, կարելի է ներկայացնել նաև սյան ճոճման բնույթն ու չափերը: Բնականաբար սյունն ավելի հեշտ կարելի է տատանել, երբ հորիզոնական ուժը կիրառվի ծանրության կենտրոնից՝ պարանահյուս գոտուց վերև ընկած հատվածում (ինչքան բարձր, այնքան ուժի մեծ բազուկ և համապատասխանաբար մեծ պտտող մոմենտ, իսկ մարդկային հասակը թույլ չի տալիս նշված մակարդակից վերև վտանգավոր ուժ կիրառել): Հիմնամասից վերև համապատասխան հրող ուժի դեպքում, որը որոշակի բարձրության վրա հասու է նաև մարդուն (ռեզոնանս առաջացնելու պայմանով), սյունը սկսում է ճոճվել հենման հանգույցում:

Ճոճման առաջին պահին (սկզբնական փուլ) տեղի է ունենում պտտական շարժում 1 կետերով (անմիջական հենման տիրույթի վերջնակետեր. տե՛ս գծագիրը) անցնող առանցքի շուրջը մինչև այն պահը, երբ խարսխի վերին աստիճանի հիմնամասի գլանային տաշվածքի կորության կենտրոնը, որ բարձրացված է հիմնամասից 13,395 մ, կհայտնվի այդ առանցքի ուղղաձիգի վրա: Նշված դիրքում կորության կենտրոնի տեղափոխումը հավասար է առանցքի՝ հենման տիրույթի կենտրոնից ունեցած հեռավորությանը՝ մոտ $20 : 2 = 10$ սմ, իսկ խաչքարի գագաթի տեղաշարժը՝ 5,84 սմ, սյան ծանրության կենտրոնինը՝ 2,41 սմ: Սյան առանցքի շեղումն ուղղաձիգից կկազմի $0^\circ 25' 40''$: Գծագրերում այս փուլի շարժումը ցուցադրված չէ, քանի որ այն չնչին է, իսկ 20 սմ հենման տիրույթը՝ մոտավոր:

12 Սյան հենման տիրույթի՝ երկու առանձնացված հատվածների առավել ամրողական և սպառիչ ուսումնասիրման համար նկատենք. 11,4 տոննա կշռով և հենման տիրույթի 20 սմ լայնությամբ սյունը մարդահասակին համապատասխանող բարձրությունից (150 սմ) տատանելու համար (առանց ռեզոնանսի երևույթն օգտագործելու) անհրաժեշտ F ուժը հավասար է 0,76 տ ($F = F_{\text{հակ. X L}_{\text{հակ.}} : L_{\text{մարդ}} = 11,4 \text{ տ X } 0,1 \text{ մ} : 1,5 \text{ մ} = 0,76 \text{ տ}$): Նման ուժը մարդկային հնարավորությունից վեր է: Սրանից հետևում է, որ ճոճելու համար կպահանջվի 20 սմ-ից փոքր հենման տիրույթ, որը մարդկային 60 կգ ուժի դեպքում ստացվում է 1,58 սմ ($L_{\text{հակ.}} = F_{\text{մարդ}} \text{ X } L_{\text{մարդ}} : F_{\text{հակ.}} = 0,06 \text{ տ X } 1,5 \text{ մ} : 11,4 \text{ տ} = 0,0079 \text{ մ} = 0,79 \text{ սմ}$ ուժի բազուկ, այսինքն՝ $2 \text{ X } 0,79 \text{ սմ} = 1,58 \text{ սմ}$ հենման տիրույթ): Երկու՝ և՛ 0,76 տ ուժի, և՛ 1,58 սմ տիրույթի դեպքում էլ ստացվում են ոչ իրատեսական արժեքներ հավանաբար այն պատճառով, որ հենման տիրույթի չափերը մոտավոր են, և հաշվի չի առնված, որ կարելի է թեկուզ և փոքր, բայց որոշակի հաճախականությամբ ուժ կիրառելով՝ հասնել ռեզոնանսի: Մեզ հաջողվեց սյունը շարժել ուժի նման կիրառմամբ:

Ամեն պարագայում անհրաժեշտ է հատուկ գործիքներով հետազոտելով հստակեցնել անմիջական հենման տիրույթի՝ երկու առանձնացված հատվածների ճշգրիտ չափերը և ապացուցել մեր ներկայացրած երկու տարբերակներից մեկի իսկությունը: Դրանից հետո կարելի է անգամ ճշտել սյան տատանման նպատակներից մեկը՝ հոգևոր որոշակի արարողության ժամանակ մարդկային ուժի կիրառմամբ ճոճելու հնարավորությունը:

Ներկայացված տատանման սխեման օգտագործելով՝ հնարավոր է նաև սեյսմիկ հաշվարկների միջոցով ցույց տալ սյան ճոճվելու շնորհիվ երկրաշարժերին դիմակայելու փաստը և միաժամանակ պարզել առավելագույն ուժգնության ցնցումները, որոնք կտապալեն այն:

Ճոճման երկրորդ փուլում սյունը կատարում է գլորման շարժում՝ ունենալով $R = 13,395$ մ շառավղով և վերը նշված գլանային տաշվածքի կորության կենտրոնով շրջանագիծ: Այս շարժումը կատարվում է մինչև այն պահը, երբ նշված կորության կենտրոնը հայտնվում է հիմնամասի ծայրակետի՝ b-ի (հետադարձի ժամանակ՝ c) ուղղաձիգի վրա: Տվյալ դիրքում կորության կենտրոնը տեղաշարժվում է 59,6 սմ, խաչքարի գագաթը՝ 35,04 սմ, ծանրության կենտրոնը՝ 14,86 սմ: Սյան առանցքի շեղումն ուղղաձիգից կկազմի $2^\circ 31' 28''$: Սկզբունքորեն այս փուլը կարելի է համարել ճոճման լավագույն՝ օպտիմալ միջակայք, որովհետև սրանից հետո՝ 3-րդ փուլում, ինչպես ստորև կտեսնենք, կառաջանա շրջման մեծ վտանգ:

Երրորդ փուլում տատանման անկյունը մեծացնելով (դեռևս չշրջվելով)՝ սյունը նորից կատարում է պտտական շարժում՝ այս անգամ արդեն հենվելով b ծայրակետին: Պտտումը շարունակվում է այնքան, մինչև ծանրության կենտրոնը հայտնվի b ծայրակետի ուղղաձիգի ուղղությամբ (սահմանային դիրք), որից հետո, եթե շարունակվի ուժի կիրառումը, այն դուրս կգա հենման մակերեսից, և սյունը կշրջվի: Այս փուլի շարժման բնույթը վտանգավոր է, քանի որ հենված լինելով մեկ կետի վրա՝ հնարավոր է դառնում սյան պտտումը նաև հորիզոնական հարթության մեջ, որը կարող է հանգեցնել անկման: Պտտման այս փուլի սահմանային դիրքում կորության կենտրոնը տեղաշարժվում է 243,3 սմ, խաչքարի ծայրը՝ 142,4 սմ, ծանրության կենտրոնը՝ 59,74 սմ, իսկ սյան առանցքի շեղումը՝ $10^\circ 23' 33''$: Գործնականում սյունը երրորդ փուլի տատանում հավանաբար չի կատարել, առավել ևս երբեք չի հասել սահմանային դիրքին:

Ամփոփելով կարելի է փաստել, որոշակի ուժի ազդեցությամբ սյան ճոճքը տեղի է ունենում երկաստիճան խարսխի աստիճանների միացման հանգույցում, որտեղ հենման տիրույթները երկու առանձնացված որոշակի կառուցվածքով հանդիպակաց հատվածներ են: Հետևաբար սյունը տատանվում է մեկ առանցքի ուղղությամբ, որը արևելք-արևմուտք առանցքից շեղված է $22^\circ 30'$ (պայմանական հարավ-արևելք – հյուսիս-արևմուտք ուղղություն): Տատանման ընթացքում մի կողմի թեքվելիս սյունը կատարում է սկզբում պտտական, այնուհետ գլորման, ապա նորից պտտական շարժումներ, որից հետո նույն բնույթի շարժումներով վերադառնում է ուղղահայաց դիրքին ու ինտերցիայի ուժով կատարում նման շարժումներ հակառակ ուղղությամբ, և այսպես շարունակ մինչև շփման ուժերի ազդեցությունից կանգնելը: Տատանման լավագույն՝ օպտիմալ միջակայքում սյան մի կողմի վրա տեղաշարժման հիմնական պարամետրերն են՝ հիմնամասի կորության կենտրոնի տեղաշարժ՝ 59,6 սմ, խաչքարի ծայրի տեղաշարժ՝ 35,04 սմ, ծանրության կենտրոնի տեղաշարժ՝ 15,62 սմ, սյան առանցքի թեքում ուղղաձիգից՝ $2^\circ 31' 28''$:

ԹՐԻՆ ՎԱՆՔԸ

Մամվել Կարապետյան

Մեծ Հայքի Այրարատ նահանգի Արեղյանք գավառում՝ ներկայիս Սարիղամիշ և Քարաքուրտ բնակավայրերի միջակայքում (առաջինից՝ 9,8 կմ հարավ, իսկ երկրորդից 9,4 կմ հյուսիս-արևմուտք)՝ անտառապառ և մեկուսի վայրում՝ ծովի մակերևույթից 2062 մ բարձրությամբ հարավահայաց թեք լեռնալանջին է գտնվում (աշխարհագրական կոորդինատներն են՝ 040°14'48.85"E, 42°34'10.77"N) վանական մի համալիր, որն արդեն ԺԹ դարում մերձակա բնակիչներին հայտնի է եղել Քյուսի քիլիսե անվամբ (թարգմանաբար նշանակում է պուլիկաձև եկեղեցի):

Տեղագիր հեղինակներից առաջինն այս հուշարձանախմբի գոյությունն արձանագրել է Ղ. Ինճիճյանը 1806 թ.՝ նշելով, որ Սբ. Խաչ լեռից «Սակա ինչ հեռի ... է փոքրիկ եկեղեցի կամ մատուռն բոլորակ և գմբեթայարկ, Քիւսի քիլիսե անուանեալ, ողջոյն ի միոջէ վիմէ կոփեալ յարկ նորա և որմունք, և առ նու վա քանի մի սենեակք քարաշէնք ամբողջ, այլ անբնակ ամենևին»¹: Սա կարևոր է ոչ միայն որպես հուշարձանի գոյությունն արձանագրած առաջին վկայություն, այլև, որ վանքն արդեն իսկ միաբանությունից զուրկ և ամայի էր նախքան 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտին ծայր առած մեծ գաղթը:

Քյուսի քիլիսեի հաջորդ այցելում, որը, համառոտ նկարագրելուց զատ, կարողացել էր ճիշտ գուշակել, թե ի դեմս խնդրո առարկա հուշարձանախմբի՝ պատմական ո՞ր վանքի հետ գործ ունենք, Կարսի թեմակալ Կյուրեղ վարդապետ Սրապյանն էր: 1878 թ. այցելելով հնավայր՝ նա նշել է. «Սուրբ Խաչի հիւսիսային արևմտեան² կողմն չորս ժամուշափի հեռաւորութեամբ անտառին մէջ, վիմափոր գոյգ մի եկեղեցիներ են (Գեղարդայ վանուց վիմափորին նման), որոց միոյն գմբեթին մէջ կախուած ջահի շղթայն կախուած կը մնայ տակաւին. եկեղեցոյն արևելեան կողմն կերևի գերեզմանատան ընդարձակութիւնը և խաչքարերն. նոյնպէս և միաբանաց սենեակներու փլատակներն կերևին, որմէ կը հետևի թէ վանք է միաբանական ուխտի: Այս վանքը պիտի լինի անշուշտ Տարօնեցոյն յիշած Թրին վանքը: Ըստ որում նորա ցոյց տուած հան-

գամանքներն ունի. այսինքն քարի մէջ փորուած, և Կարս քաղաքին հարավային կողմն կընկնի. և այս սահմաններում ուրիշ վիմափոր վանք չկայ³, բացի քանի մի այրերէ, որոց համար տեղացիք կաւանդեն, թէ ճգնաւորաց մենարան եղած են ժամանակին»⁴:

Ինչ վերաբերում է Ստեփանոս Տարօնեցոյ (Ասողիկ) «Պատմութիւն տիեզերական» աշխատության մեջ առկա այն հիշատակությանը, որի համաձայն՝ Քյուսի քիլիսե հորջորջված վանքն անվերապահորեն նույնացվում է Թրին վանքի հետ, հետևյալն է. «Իսկ մայր թագաւորին Աբասայ⁵, բարեպաշտուի ի բարեպաշտ ծնողաց, որ էր քոյր թագաւորացն Փառիստոյ Սենեքերիմայ և Գրիգորի՝ ի բաց ընկեցեալ գերկրաւոր պսակն և յոչինչ համարեալ զփառս անցաւորս՝ ընթանայր զհետ երկնաւորին. զվարս կրօնաւորութեան յանձն առեալ՝ երթեալ բնակէ ի տեղին, որ Թրին վանք կոչի (զի են եկեղեցիք փորածոյ ի սպիտակ քարի ընդդէմ հարաւոյ). և աղօթից և գործոց բարեաց պարապեալ և հոգևոր առաքինութեան»⁶:

Այո՛, վանք, որ փորված է հարավադէմ սարալանջին գտնվող սպիտակ քարի մեջ, աներկբայորեն համապատասխանում է Թրին⁷ վանքին, քա-

1 Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, Կ. Ս. Վենետիկ, 1806, էջ 91:

2 Իրականում վանական համալիրը գտնվում է Սբ. Խաչ լեռնագագաթից ուղիղ գծով 6,9 կմ հյուսիս-արևելք:


3 Ամենամտը Ծառաքարի վանքն է, որը սույն վայրից ուղիղ գծով 29,2 կմ հեռու է դեպի արևմուտք:

4 Կ. Վ. Ս., Ճանապարհորդութիւն ի նահանգն Կարուց, «Արարատ», 1879, Թ, էջ 383: Հիմք ընդունելով այս վկայությունը՝ Ղ. Ալիշանը նշել է. «...և է գոյգ եկեղեցեաց փորելոց ի սպիտակ քարաբրի, հանգոյն Այրիվանից եկեղեցեացն, և ի միումն տակաւին կախեալ կայ ասն շղթայ կանթելին: Կան առ երի աւերակք բնակարանաց, ընդարձակ գերեզմանատեղի և խաչարձանք» (Ալիշան Ղ., Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 38): Ի դեպ, 1878 թ. «Ստորագրութիւն Կարսի շրջակայ գիւղօրէից և վանօրէից» վերնագրի ներքո կազմված տեղեկագրում Կյուրեղ վարդապետ Սրապյանը նշել է. «Քյուսի Քիլիսե վանք, Իգնոցի ներքև արևելակողմ, ձորի մեջ, որ քարածայրի մեջ կռածո փորված է, երեք եկեղեցի իրարու մեջ» («ԲՀԱ», 1970, № 2, էջ 92):

5 Խոսքը Կարսի Սմբատ Ա Բագրատունի թագավորի (890-914) որդու՝ Աբաս Ա-ի մասին է (գահակալել է 928-953 թթ.):

6 Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 198:

7 Վաստակաշատ տեղագիր հեղինակներից Գ. Տեր-Հովհաննիսյանը, մեջբերելով վանքի տեղադրությանն անդրադարձած նախորդ հեղինակների կարծիքները, հավելում է, որ Թրին վանքը կարող էր համապատասխանել Չգավ գետակի ափին գտնվող Թունգուլի անվամբ հայտնի գյուղատեղիին (Քաջբերունի, Յիշողութիւններ, «Լումայ», 1904, № 2, էջ 62-63):



Թրին վանքը հարավ-արևելքից (ուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

նի որ նույնիսկ ավելի քան հազար տարի անց մեզ մնում է սոսկ հաստատել պատմիչի նկարագրած վանքի դիրքն ու քարի (ժայռագանգվածի) գույնը:

Հարկ է նշել, սակայն, որ ճշտորեն համընկնող նկարագրական տեղեկություններից զատ՝ խնդրո առարկա վանքը Թրինի հետ նույնացնելու առումով ծանրակշիռ կռվան է նաև համալիրի առնվազն կենտրոնական կառույցը՝ ութխորան եկեղեցին որպես ոչ ուշ, քան մինչև Ժ դարի կեսերի ստեղծագործություն, իսկ այս հարցում սկսած հատակագծային-հորինվածքային առանձնահատկություններից մինչև կերտման դարաշրջանը մատնանշող հարդարանքի տարրերը լիովին համընկնում են գրավոր հիշատակության ժամանակաշրջանի հետ:

Հայտնի է, որ արտաքուստ բոլորաձևին մոտ (իրականում՝ բազմանիստ), իսկ ներքուստ՝ ութ խորան ունեցող մեզ հասած (թերևս՝ առհասարակ նաև կառուցված) սակավաթիվ եկեղեցիների հորինվածքը սկիզբ է առնում Է դարից և վերջին նմուշներով եզրափակվում ԺԱ դարով:

Վաղագույն նմուշներն են Է դարում կառուցված Եղվարդ (Չորավար), Իրինդ, Տայոց քար, Տբեք գյուղերի եկեղեցիները և վերջապես Անիի՝ 1035-1036 թթ. կառուցված Սբ. Փրկիչ եկեղեցին:

Գիտական հանրությանը ցարդ անձանոթ Թրինի եկեղեցին փաստորեն համահորինվածք՝ ութխորան կառույցների շարքում վեցերորդն է, սակայն միակն է, որ վիմափոր է: Ընդ որում, շնորհիվ տար-


բերակիչ որոշ հատկանիշերի՝ վերջինս ավելի շատ աղերսվում է իրենից վաղ կառուցված Իրինդի եկեղեցու հետ (ի մասնավորի՝ ինչպես Իրինդում, այնպես էլ Թրինում կիսաբոլորակ բոլոր ութ խորանները թե՛ միահավասար են և թե՛ միանման)⁸:

Կառույցը չափերով զիջում է համահորինվածք բոլոր մյուս եկեղեցիներին, ընդ որում, եթե Չորավար եկեղեցու ներքին տրամագիծը 12,5 մ է, Իրինդինը՝ 13,6 մ, Տբեքինը՝ 17,7 մ, Տայոց քարինը՝ 14,6 մ, Անիի Սբ. Փրկիչինը՝ 14,1 մ, ապա Թրինի եկեղեցունը ընդամենը 7,4 մ է:

Ունի միայն մեկ մուտք՝ բացված հարավակողմից և դեպի ներս լայնացող մեկ լուսամուտ՝ բացված մյուս խորաններից հատկապես հենց դրա առկայությամբ զատորոշվող ավագ խորանից:

Ինչ վերաբերում է հարդարանքի տարրերին, որպիսիք, ցավոք, ակնհայտորեն մեծ մասամբ միտումնավոր վնասված կամ իսպառ ջարդված-անհետացված են, ապա սոսկ որպես հետքեր ու մնացորդներ պահպանվել են խորանների վիմակերտ որմնախոյակներին: Դրանք շրջանաձև կամ կիսաշրջանաձև զարդանախշերով երիզված պարզ պրոֆիլներ են: Հարդարանքի տարր կարելի է համարել նաև մուտքի ճակատակալ հատվածում կլոր շրջա-

⁸ Իհարկե, Տայոց քար գյուղի եկեղեցուն ևս խորանները միահավասար են, սակայն միանման չեն, քանի որ ի տարբերություն հատակագծում քառանկյուն խորաններից յոթի՝ ավագ խորանը կիսաշրջան է:




Թրին վանքի եկեղեցու և համահորինվածք մյուս հուշարձանների հատակագծերը. ա) Ջորավար եկեղեցի, բ) Իրինո գյուղի եկեղեցի, գ) Տբեթ գյուղի եկեղեցի, դ) Տայոց քար գյուղի (այժմ՝ Թավուսքյար) եկեղեցի, ե) Անիի Սբ. Փրկիչ եկեղեցի, զ) Թրին վանքի վիմափոր եկեղեցի

նակի ներքո առկա հավասարաթև խաչի քանդակը, որը ձախակողմյան ողջ մակերեսի հետ շարական ձեռքով նույնպես միտումնավոր վնասված-քերված է (թերևս այս հատվածում կարող էր նաև արձանագրություն եղած լինել):

Մեկական խորհրդարան առկա է միայն ավագ խորանին հարակցող խորաններում:

Հարդարանքի տարրերի թվում են նաև եկեղեցու գմբեթի (իրականում ավելի նման է կեղծ գմբեթներին, քանի որ կիսաբոլորակ գմբեթարդը նստած է ոչ շատ կարճ թմբուկի վրա) թմբուկի սկիզբն ու ավարտն ընդգծող քիվագոտիները, որոնցից վերջինը, որից սկիզբ է առնում գմբեթարդի կորությունը, ավարտվում է ոլորահյուս (պարանահյուս) գոտիով:

Բացի վիմափոր եկեղեցուց, որը փաստացի պաշտամունքային միակ հուշարձանն է վանական



Թրին վանքի հատակագիծը (չափ.՝ Ա. Հակոբյանի, 2014 թ.)

ամբողջ համալիրի կազմում⁹, հենց նույն ժայռի հարավային կողմի արևմտյան հատվածին կից է համակ սրբատաշ քարով կառուցված ուղղանկյուն հատակագծով թաղակապ մի սրահ, որը, ամենայն հավանականությամբ, ունեցել է սեղանատան գործառույթ: Ճիշտ է, խնդրո առարկա շինությունը չափերով բավականին զիջում է զանազան վանքերում

⁹ Ինչպես կոտեսները ստորև, երկրորդ վիմափոր հուշարձանը ոչ թե եկեղեցի է, ինչպես ենթադրել է Կ. Սրայյանը («...վիմափոր գոյգ մի եկեղեցիներ են»), այլ սոսկ կացարան, ուստի և ութխորան եկեղեցին վանքի միակ պաշտամունքային հուշարձանն է:



Թրին վանքի վիճափոր եկեղեցու տեսքը դեպի հյուսիս-արևելք և գմբեթը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

գոյություն ունեցող սեղանատներին (արտաքին չափերն են՝ 5,75 x 3,75 մ), սակայն հաշվի առնելով Թրին վանքի անապատական բնույթը՝ միանգամայն բավարար կարող է համարվել:


Սեղանատունն ունի երկու գույգ որմնասյուններին հենված և թաղակիր կամարներին խաբսված երկթեք ծածկի տակ առնված կիսաշրջանաձև թաղ: Արևելյան և հարավային ճակատներից համապա-



Թրին վանքի վիճափոր եկեղեցու գմբեթը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.), մուտքը և ավագ խորանի հարավակողմյան որմնասյունը (լուս.՝ Պ. Տոնապետյանի, 2013 թ.)



Թրին վանքի վիճափոր եկեղեցու ավագ խորանին հարող դրվագված որմնախոյակը (լուս.՝ Ժ-Կ. և Շ. Չոբեկիե ամուսինների, 2012 թ.), սեղանատունը հյուսիս-արևմուտքից (լուս.՝ Պ. Տոնապետյանի, 2013 թ.) և ներքին տեսքը դեպի հյուսիս (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)



Թրին վանքի վիճափոր ճգնարանը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)



տասխանաբար բացված են մեկական մուտք և լուսամուտ: Հյուսիսային կողմից սեղանատունն ամբողջ բարձրությամբ հպված է ժայռի լավ հղկված մակերեսին: Արդեն կիսով չափ փլուզված տանիքի պահպանված հատվածներում սալերի մնացորդները վկայում են դրա՝ ծածկասալերով պատված լինելը:

Հարդարանքի պահպանված տարրերից հիշատակելի են Թ-ԺԱ դարերին բնորոշ կտրվածքով որմնախոյակները:

Թրին վանքում պահպանված երրորդ հուշարձանը վերոնշյալ միմյանց կից կառույցներից մոտ 20 մ հարավ-արևմուտք գտնվող և չափերով նա-

խորդին զիջող մեկ այլ ժայռազանգվածի մեջ փորված կացարան-ճգնարանն է: Վերջինս (չափերն են՝ 4,6 x 2,4 մ) հարավարևելահայաց կողմից բացված միակ մուտքով, երկու փոքրիկ որմնախորշերով, առանց լուսամուտի, այլ միայն բուխարու նպատակով բացված դեպի վեր ձգվող խողովակաճանցից թափանցող աղոտ լույսով ողողված սրահ է՝ զուրկ հարդարանքի որևէ տարրից:

Գեռևա 1878 թ. վանքի տարածքում նկատելի էին նաև միաբանական կացարանների փլատակները, իսկ արևելյան կողմում՝ խաչքարերով գերեզմանոցը: Ներկայումս սրանցից հետքն իսկ չի մնացել:

ԱԿՆԻ ՀԱՅ ՀՈՌՈՄՆԵՐԸ

Գևորգ Ղազարյան

Հայ հոռոմները¹ կամ ուղղափառ (օրթոդոքս) հայերը հայ ժողովրդի էթնոդավանական կարևոր մի հատվածն են և իրենց ուրույն տեղն ու նշանակությունն ունեն հոգևոր-մշակութային ժառանգության մեջ:

Մինչև Ի դարի սկիզբն Արևմտյան Հայաստանում հայ հոռոմները հիմնականում բնակվում էին Ակնի շրջանի չորս՝ Վանք, Զորակ, Շրգու և Մուշեղկա գյուղերում:

Ճշգրիտ հայտնի չէ, թե Ակնի տարածաշրջանում երբ և ինչ պայմաններում են նշյալ գյուղերի հայ բնակիչները դարձել Ուղղափառ եկեղեցու անդամ: Կոստանդ Ա տիեզերական պատրիարքի (1830-1834) կարծիքով նրանց գոյությունը սկիզբ է առել Է դարից, երբ Եզր կաթողիկոսի օրոք (630-641) «Բազմահազար հայեր, որոնք բնակվում էին Հռոմեական կայսրության սահմաններում, ընդունեցին Ուղղափառ եկեղեցու ծեսերը, սովորույթները, տոներն ու պահքերը... Իսկ այդ ուղղափառ հայոց մնացորդները մինչև այսօր գոյություն ունեն Արևելքում՝ Սեբաստիո (Միվասի) սատրապության մերձակայքում, որոնք ավելի քան տասներկու գյուղեր են կազմում²: Դրանց գյուղաքաղաքն Էզին (Ակն- Գ. Ղ.) է կոչվում, և դրանք Եփրատից ոչ հեռու՝ դեպի արևմուտք են ընկած: Արդ, այս ուղղափառները հայտնի են հայ հոռոմ անունով³, հոգևոր առումով ղեկավարվում են Թեոդոսուպոլսի մետրոպոլիտի⁴ կողմից, որը ենթակա է Անտիոքի պատրիարքի աթոռին⁵:

Ըստ պրոֆ. Հ. Բարթիկյանի՝ Ակնի հայ հոռոմները սերում են այն հայերից, որոնք ուղղափառ (օրթոդոքս) դավանանք էին ընդունել Թ դարում՝ Կոստանդնուպոլսի Փոտ պատրիարքի օրոք (858-867, 877-886), ապա Ժ դարում⁶:

Մեր կարծիքով Ակնի հայ հոռոմների ծագումը է կամ Թ դարին աղերսելը փաստարկների կարոտ է, թեպետ հստակ է, որ նշյալ ժամանակներում Հայաստանում կար ուղղափառ դավանանքին պատկանող բնակչություն: Ուշ շրջանում ակնահայության ծագումը թերևս թյուրիմացաբար կապվում էր 1021 թ. դեպի Սեբաստիա գաղթած վասպուրականցիների հետ, սակայն պետք է ընդունել, որ տարածաշրջանում հայկական ներկայություն կար նշված տարեթվից առաջ, և Ակն քաղաքը հավանաբար նույնական է բյուզանդա-հայկական «Դիզենիս Ակրիտաս» դյուցազնավեպում հիշատակված Ակինա քաղաքին⁷:

Ժ դարում, երբ բյուզանդական զորքերը Հովհաննես Կուրկուաս (Գուրգեն) զորավարի գլխավորությամբ արաբներից ազատագրում են Արևմտյան Հայաստանի մի շարք տարածքներ, այնտեղի ուղղափառներին հովվելու համար ստեղծվում են նվիրապետական կառույցներ: Նույն դարում Կոստանդնուպոլսի տիեզերական պատրիարքության

1 Նոր ժամանակներում հայ հոռոմներին գիտականորեն առաջին անգամ ներկայացրել է Ղուկաս վրդ. Ինճիճյանը. «Հայ հոռոմք անուանին նոքա՝ որք դաւանութեամբ յունականք են, իսկ լեզուաւ, սովորութեամբ և այլով ամենայնիւ հայկականք...» (Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, Կ. Ա., Վենետիկ, 1806, էջ 303):

2 Պատրիարքի տեղեկությունները հավանաբար քաղված են հին աղբյուրներից, քանի որ ԺԹ դարում Ակնի հայ հոռոմ գյուղերն ընդամենը չորսն էին:

3 Հոռոմ էթնոմիմը, որը սկզբնապես հոռոմացի էր նշանակում, բյուզանդական տիրապետության ժամանակներում ստացավ ուղղափառ (օրթոդոքս) նշանակությունը: Հայ հոռոմներին՝ ուղղափառ հայերին, չպետք է շփոթել «հոռոմադավան», այն է՝ կաթոլիկ հայերի հետ:

4 Թեոդոսուպոլսի (Կարիհի) աթոռը հնուց ի վեր ուղղափառ հայության կարևոր կենտրոնն էր. հայտնի է, որ չորրորդ Տիեզերածողովին (Քաղկեդոն, 451 թ.) հայկական տարածքներից մասնակցած եպիսկոպոսների մեջ էր Թեոդոսուպոլսի եպ. Մանասեն: Կարիհի թեմը, որի առաջնորդները նոր ժամանակներում սովորաբար պոնտացի հույներ էին, ենթարկվում

էր Անտիոքի պատրիարքությանը: Վերջինիս կազմում էր նաև Ամիդի (այժմ՝ Դիարբեքիր) մետրոպոլիտությունը: Ակնի հայ հոռոմները սկզբնապես մտնում էին Կարիհի մետրոպոլիտության կազմում, սակայն ԺԹ դարի վերջում անցնում են Ամիդին: Կարևոր մետրոպոլիտությունը սակավամարդության պատճառով կազմալուծվում է 1900 թ. և անվանապես վերականգնվում 2014 թ., երբ Թեոդոսուպոլսի առաջնորդ է ձեռնադրվում Քայիշ եպ. Սադեկը (Անտիոքի պատրիարքության Դամասկոսի թեմ), մինչդեռ Ամիդի մետրոպոլիտությունը շարունակում է թափուր կարգավիճակը:

5 *Κωνσταντίου Α΄ του απο Συναίου ασπίδμου Πατριάρχου Κωνσταντινουπόλεως του Βυζαντίου, Βιογραφία και συγγραφαί αι ελάσσονες εκκλησιαστικάι και φιλολογικαί και πνευ επιστολαί του αυτου...* Κωνσταντινουπόλις 1866, էջ 87-88: Նույն կարծիքին է նաև Աթենքի համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի պրոֆեսոր Վասիլիաս արքիմանդրիտ Ստեֆանիդիսը (տե՛ս Տեֆանիդու Βασίλειου Κ. (αρχμ.), *Εκκλησιαστική Ιστορία απ' αρχάς μέχρι σήμερον*, εκδ. οίκου «Αστήρ», Αθήνα 1978, էջ 413):

6 Бартикийн Р., О Византийской аристократической семье Гаврас (ΓΑΥΡΑΣ-ΓΑΒΡΑΣ), «ՊԲՀ», 1987, № 4, էջ 192-193:

7 Ակն և ակնցիք (այսուհետև՝ Ակն), նախածեռնեց և հավաքեց Ա. Քէչեան, աշխ. և խմբ. Մ. Պարսամեան, Փարիզ, 1952, էջ 615, 621:



Ալևն քաղաքը, Վանք գյուղը և Կույսի բերդը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2008 թ.)

ամենախոշոր նվիրապետական աթոռներից էր Խորձյանի և Տարոնի մետրոպոլիտոսությունը, որն ուներ շուրջ 20 եպիսկոպոսական թեմ⁸: Վերջիններից էր այսպես կոչված Սբ. Գևորգի (**του Αγίου Γεωργίου**) թեմը: Մեր կարծիքով այս տեղանունը համապատասխանում է Ալևնի Սբ. Գևորգ վանք (կրճատ՝ Վանք) գյուղին: Հետևաբար կարելի է ընդունել, որ Ալևնի հայ հոռոմների գոյության ամենավաղ սահմանը հենց Ժ դարն է:

ԺԸ-ԺԹ դարերի սկզբում, կարելի է ասել, Ալևնի հայ հոռոմ համայնքների ծաղկուն շրջանն էր, երբ

եկեղեցաշինությունից բացի՝ զարկ է տրվում հոգևոր ու մտավոր մակարդակի բարձրացմանը: Այսպես, 1800 թ. Կոստանդնուպոլսում լույս է տեսնում Ուղղափառ եկեղեցու Ժամագրքի (հուն.՝ Օրոլոգիոն) հայերեն թարգմանությունը, որը 1749-1757 թթ. իրականացրել էր պոլսահայ (հայ հոռոմ) անվանի թարգմանիչ Հակոբ դպիր Ճամճիողլին վանքի Հաջի Մուրադ Լագարիսի պատվերով: Այս թարգմանությունը 1762-1767 թթ. ընդօրինակում է Աթոս լեռան (Հունաստան) Սբ. Դիոնիսիոսի վանքի հայ հոռոմ վանական Արսենը՝ Վանք գյուղի քահանա Մարկոսի որդին: Նրան նյութական ու բարոյական օժանդակություն է ցույց տալիս մեկ այլ վանական՝ ոմն Ասլանի որդի Մարգարը, հավանաբար նույն գյուղից: Ահա նրանց ձեռագիրն է, որ հիմք է

8 Hieroclis Synecdemus et Notitiae Graecae episcopatum. Accedunt Nili Doxapatrui Notitia Patriarchatum et Locorum nomina immutata. Ex recognitione Gustavi Parthey. Verlag Adolf M. Hakkert-Amsterdam, 1967, էջ 127:



Վանք գյուղի ջրասույզ եղած Սբ. Գևորգ վանքի շրջապարսպի տեսանելի հատվածը և աղբյուրի շինարարական արձանագրությունը, 1810-ական թթ. (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2008 թ.)

ծառայել 1800 թ. պոլսյան հրատարակության համար⁹:

1831 թ. Կոստանդնուպոլսի տիեզերական պատրիարք Ագաթանգեղոսի (1826-1830) վավերացմամբ ու օրհնությամբ և Անաստաս աղայի¹⁰ հովանավորությամբ Պոլսում լույս է տեսնում Ուղղափառ եկեղեցու «Էվխոլոգիոն» (Մաշտոց) ծիսանատյանի հայերեն թարգմանությունը, որը կատարվել էր Անաստաս հույն վարժապետի և Գրիգոր դայիր Փեշտիմալճյանի կողմից¹¹:

1878 թ. Արևմտյան Հայաստանով ճամփորդած Գարեգին եպս. Մրվանձտյանցը (1840-1892) Ակնի ուղղափառ հայերի մասին գրել է հետևյալը. «Զանի մը գեղեր կան հայ-հոռոմոց, որք են Չորակ, Մուշեղկա, Վանք, Շրգու, որոց բնակիչք գրեթե երբեք տարբերութիւն չունին հայոցմէն, իրենց ընտանեկան լեզուն հայերէն է, նամակներ և տումարներ հայերէն, վարժապետ հայ, քահանայք անգամ յունարէն չգիտեն խօսիլ, և շարունակ յարաբերութեանց մէջ են

հայոց ժողովքներու և առաջնորդարանին հետ, միայն քահանայից գլխարկը, եկեղեցեաց զգեստները և ձեսերը յունական են. եկեղեցական ընթերցուածքները մաս մը հայերէն են, գորօրինակ, Անտարան, Ճաշու գիրք, Ժամագիրք, բայց պատարագն յունարենէն հայերէնի թարգմանելով կընեն: Հաւատամքն և Սուրբ Աստուածն յունարէն: Իրենց անունները արդարև հայ ու հոռոմէն խառն: Յունարէն լեզու կամ գիր գիտցող խիստ հազուագիտ է»¹²:

Վանք. անկասկած, տարածաշրջանի հնագույն բնակավայրն է և հայ հոռոմ գյուղերից նշանավորը¹³: Սկզբնապես գտնվել է հսկա քարաժայռի վրա, որտեղ առ այսօր կանգուն են հնադարյան Կույսի բերդի ավերակները¹⁴:

Ըստ ավանդագրույցների՝ ԺԳ դարում թուրքերը վանքցիներին ստիպել են ժայռից իջնել և դրա ներքևում՝ Եփրատի ձախ ափին, նոր գյուղ հիմնել¹⁵: Վերջինիս Սբ. Գևորգ եկեղեցին կառուցվել է անտառամիջում: Հետագայում՝ 1722 թ., նոր եկեղեցի է կառուցվել գյուղից դուրս՝ Եփրատի ափամերձ ժայռերի վրա: Ըստ նույն ավանդագրույցի՝ գետի ուժգին վարարման ժամանակ հեղեղը ժայռերի մոտ է բերել երկաթե մի դուռ՝ խաչը վրան: Գյուղացիները կարծել են, որ դա սբ. Գևորգի նշանն է, և որոշել են այնտեղ եկեղեցի կառուցել: Ուշագրավ է, որ պահպանված տեղեկությունների համաձայն՝ երբ ուղղափառ

9 Ալիհեան Ն., Միսեոն Պոնտահանցի եւ իր թարգմանութիւնները վրացերէնէ, Վիեննա, 1951, էջ 249-251:

10 Անաստաս աղան ԺԸ-ԺԹ դդ. պոլսահայ երեկիներէից էր՝ ծնունդով Վանքի հայ հոռոմներից: Զբաղեցրել է Պոլսի գյուղական դրամատան (թուրք.՝ «Ջիրասաթ բանքասը») վերատեսչի պաշտոնը: Հայտնի էր որպէս ազգային բարերար: 1830-ական թթ. այլ մեծահարուստների հետ նա հովանավորել է Կ.Պոլսի Սբ. Փրկիչ ազգային հիվանդանոցի շինարարությունը, ինչպէս նաև նվիրատվություններ արել տեղի հայ առաքելական Մայր եկեղեցուն (տե՛ս Ագատեան Թ., Ակն և ակնցիք. Ազգագրական ու կենսագրական յիշատակարան, Իսթանպուլ, 1943, էջ 50): 1779 թ. Անաստասի հովանավորությամբ անվանի թարգմանիչ Գևորգ Պալատեցին (1737-1812 թթ.) հունարենից հայերեն է թարգմանել Էտոլիայի մետրոպոլիտ Նեոֆիտոսի «Ճաղկաքաղ քրիստոնէական հաւատոյ» երկը (Վիեննայի Միսիսթարյան միաբանության մատենադարան, թիվ 731):

11 Գրիգոր դայիր Փեշտիմալճյան (1774-1837). մանկավարժ, բանարանագիր, քերական, փիլիսոփա, թարգմանիչ: Մանկավարժական և մշակութային ակնառու գործունեություն է ծավալել Պոլսում ԺԹ դարի սկզբում: Նրա սաներից էր Գևորգ Դ Անենայն հայոց կաթողիկոսը (1866-1882):

12 Մրուանձտեանց Գ., Թորոս աղբար. Հայաստանի ճամբորդ, մասն առաջին, Կ.Պոլիս, 1879, էջ 252-253:

13 Ակն, էջ 609: Տե՛ս նաև Գանիկեան Յ., Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895, էջ 58:

14 Բերդամիջի մատուռներից մեկում կա մի տապանաքար, որի հունարեն արձանագրությունից պարզվում է, որ այն ոմն քագուի կամ իշխանուի Աթենայիսի շիրմն է: Ենթադրելի է, որ նա ապրել է մոտավորապես Բ դարում և սերել պոնտավորքիայքյան իշխանական մի տնից (տե՛ս Ակն, էջ 603-608): Կույսի բերդի հնագիտական ուսումնասիրությունը վստահաբար արժեքավոր տեղեկություններ կարող է հաղորդել Ակնի պատմության հնագույն շերտերի մասին:

15 Բարքիլյան Հ., Հայ-հոռոմները (քաղկեդոնիկ հայերը) հունական պարբերականներում, «ՊԲՀ», 2008, № 3, էջ 256-257:



Վանք գյուղի եկեղեցու Սբ. Գևորգի սրբապատկերը (հատված), Կ.Պոլիս, 1735 թ. և «Տիրոջ պայծառակերպությունը» սրբապատկերն Ակնի հայ հռոմեներից, 1895 թ. (նվիրատու՝ Իսահակ Չ. Այդինյան)

Զորակ գյուղի Սբ. Նիկողայոս եկեղեցին (լուս.՝ Ս. Սիրմի, 1999 թ.), նրա՝ 1794 թ. նորոգության արձանագրությունը և նույն եկեղեցու Սբ. Նիկողայոս Սքանջելագործի սրբապատկերը (հատված), Կ.Պոլիս, ԺԸ դար: Սրբապատկերների լուսանկարները՝ Մ. Զիլինգարյանի, 2014 թ.

հայերը դիմել են իշխանություններին՝ եկեղեցի կառուցելու արտոնություն ստանալու հայցով, թուրքերը մերժել են նրանց խնդրանքը՝ պատճառաբանելով, որ Օսմանյան տերությունը հայ հռոմե էթնո-կրոնական համայնք («միլլետ») չի ճանաչում: Երբ բոլոր ջանքերը, այդ թվում նաև տիեզերական պատրիարքի միջամտությունը, ապարդյուն են անցել, հայ հռոմեները դիմել են Կոստանդնուպոլսի հայ ամիրաներին: Մինաս վրդ. Ակնեցու (Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1751-1753 թթ.) հնարամիտ խորհրդով Սեղբոս Երևանյան և Միսաք Միսաքյան ամիրաների օգնությամբ հաջողվել է ստանալ հայ առաքելական եկեղեցի կառուցելու արտոնություն, սակայն իրականում կառուցվել է ուղղափառ եկեղեցի՝ կից առաքելական փոքր մատուռով, տարին մեկ անգամ պատարագելու և ազատ ուխտագնացության պայմա-

նով¹⁶: Ահա այսպես է Վանքի եկեղեցու բակում կառուցվել հայ առաքելական Սբ. Սարգիս մատուռը:

16 Ակն, էջ 128:



Շրգու գյուղը, Սբ. Զովհան Ոսկեբերան եկեղեցին և շինարարական հողմահար արձանագրությունը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2008 թ.)

Վանքի Սբ. Գևորգ նորակառույց եկեղեցին օծվել է 1723 թ. մայիսի 27-ին Խաղիայի (Խաղտիք) և Խերյանի արքեպիսկոպոս Իգնատիոսի (1717-1734) ձեռամբ: Պոնտացի հույն մետաղագործների գաղութները հովվող այս արքեպիսկոպոսության առաջնորդը եկեղեցուն է նվիրել արծաթակազմ հունարեն մի Ավետարան (տպագիր)՝ հիշատակարանում դրա մասին թողնելով գրավոր արձանագրություն¹⁷:

Եկեղեցին նորոգվել է 1823 թ. Անաստաս աղայի հովանավորությամբ:


Գյուղի հայ հոռոմներից էր մեծահարուստ ու բարերար մահտեսի Նիկոլ Պալյանը (Բալյան): 1787 թ.

Վանքի եկեղեցու համար Ակնա Կամարակապ գյուղի հայ առաքելական քահանա տեր Հարությունն ուղղափառ հայ հոգևորականության օգնությամբ ստեղծում է հիասքանչ ձեռագիր Ավետարան Նիկոլի և կնոջ՝ մահտեսի Բալասանի հովանավորությամբ: Ավետարանը զարդարվել է ոսկեգօծ շքեղ կազմով՝ պատրաստված Արգիրուպոլսի (Գյումուշխանա) հույն վարպետների կողմից¹⁸: Նիկոլ Պալյանի անունը պահպանվել է Վանքի աղբյուրի երկու արձանագրություններից մեկում.


Շնորհիւն Տ(եառ)ն եւ բարեխօսութ(իւն) ս(ուր)ք վկայի՝ Կեօրկիոսի, յայսմ գիւղի եղբարքս բազում աշխատու(թեամ)ք հնարեցաք զաղբիւրս զայս եւ ըստ կարողու(թ)ե(ան) մերոյ տուաք զկէս խարճն,

17 **Ballian A.**, Argana on the Tigris and Vank on the Euphrates: Pontic Mining Expansion and Church Silver from Argyroupolis-Gumushane, “*Μουσείο Μπενάκη. Θυμιάμα στη μνήμη της Λασκαρίνας Μπούρα*”, τ. 1. Κείμενα, Αθήνα, 1994, էջ 20:

18 **Մանիկեան Յ.**, նշվ. աշխ., էջ 101: Տե՛ս նաև **Ballian A.**, նշվ. աշխ., էջ 21:



Շրգուի Ավետարանի հիշատակարանը (Գունաստան, Դեսպիհն Պապանդրեոսի մասնավոր հավաքածու)



1800 թ. Օրոլոզիոնի տիտղոսաթերթը (Վիեննայի Սիսիբարյան միաբանության մատենադարան, հմր. 70)

խակ զմնացեալ կէս խարճն հանդերձ կամարովն մահտեսի Պալիենց լուսահոգի մ(ա)հ(տես)ի Նիգոլայէն առեալ լրացուցաք, արդ խնդրի հանդիպողացդ եւ ըմպողացդ ջրոյս յիշել զհոգիս նորա եւ զծնօղս նորին՝ զՄովսէսն եւ զմահտեսի Սօֆիայն, եւ զկողակիցն, եւ մահտեսի Պալասանն հանդերձ զհիղացի եղբարքս կենդանեօք եւ ննջեցելովք միով Հայր մեղայի եւ ...քը...¹⁹:

Վանքի բնակիչներն աչքի էին ընկնում ազնվաբարոյությամբ ու հյուրասիրությամբ: Ուշագրավ է, որ հենց այս և Ձորակ գյուղերում են հարազատորեն պահպանվել Ակնի օրորներն ու անտունիները՝ գրառված Կոմիտասի կողմից²⁰:

Ձորակ. գյուղը գտնվում է Ակնից հյուսիս-արևելք: Հայտնի է, որ Սբ. Նիկողայոս եկեղեցին ունեցել է զմբեթ, որը ներսից տեսանելի էր, սակայն արտաքուստ թաքնված էր տանիքի ծածկի մեջ: Վերանորոգվել է 1794 թ., ունի հետևյալ արձանագրությունը.

Ս(որ)ք եկեղեցիս սր(բո)յն Նիգոլային ... թվի(ն) 1794:

19 Աղբյուրի երկրորդ արձանագրությունը տեղեկացնում է. «Վերստին նորոգեցաւ կալմարս եւ ի մեջուն սմա / նօրաշէն գանձարան / ջրոյս յայսիկ մշտաբողոյս աղբիւրի եւ ջանիւք եւ աշխատութեամբ ի գի/ղս գտնրվօղ քահանայից եւ եղբարց զարդիւք եւ / ծախիւք մեծ հասարակիաց զանձնս Ա(ստուած) բարի / վայելում տացե... / թվ... 1817, օգոստոսի (°) մին (°)» (վերձանությունները՝ Մամվել Կարապետյանի):

20 Ակն, էջ 122-123:

Եկեղեցու բակում եղել է Սբ. Գևորգ հայ առաքելական մատուռը²¹:

Շրգու. գյուղը գտնվում է Ակնից հարավ: Սբ. Հովհաննես Ոսկեբերան եկեղեցին Անաստաս ադալի հովանավորությամբ վերակառուցվել է 1831 թ.: Այդ մասին տեղեկացնում է վիմագիր արձանագրությունը, որն այժմ, դժբախտաբար, հողմակոծ վիճակում է.

Տնօրէնութեամբն Աստուծոյ վերստին նորոգեցաւ Ս. Յովհաննոս Ոսկեբերանի եկեղեցիս, քաջ ջանասիրութեամբ Ակնայ Վանք գիւղին հանգուցեալ միտ. Ստեֆան ամիրայի որդի Անաստաս ադալին յիշատակ ծնողացն իւրոց միտ. ամիրային եւ տիկնոջ իր եւ Մելիհին եւ գործ նոցին մշտահաստատ եղիցի. ամէն. 1171 (1246), յամին Զս. ի 1831 կատար ունի ի մարտ անսոյն²²:

Սբ. Ոսկեբերան եկեղեցին հատակագծով բարդ խաչածն, քառասյուն կառույց է: Ինչպես բնորոշ է օրթոդոքս տաճարաշինությանը, խորանն ավանդատների հետ հաղորդակցվում է մուտքերով, որը պայմանավորված է ուղղափառ ծեսի առանձնահատկություններով: Ունի բավական մեծ գավիթ:

Այս եկեղեցուց մեզ է հասել 1785 թ. Վենետիկում տպագրված հունարեն մի Ավետարան: Այն արժաթե կազմով զարդարվել է 1787 թ. ուն Պողոս Փա-

21 Նշվ. աշխ., էջ 125:
22 Նույն տեղում:



1831 թ. հայ ուղղափառ Մաշտոցից մեկ էջ (Չայաստանի ազգային գրադարան)



Մուշեղկա գյուղի՝ մզկիթի վերածված Սբ. Գևորգ եկեղեցին (ուս.՝ Ս. Կարապետյանի, 2008 թ.)

փազօղլու (Փափազյանի) կողմից, որի մասին վկայում է հիշատակարանը. «Յիշատակ է այս Մ[ուր]ք Աւետարանս Ակնայ քաղաքի գիւղոյն Շոգոյի եկեղեցոյն ս[ր]բ[ո]յն Յօհաննու Ոսկերերանին՝ երջանիկ հայր[ա]յ[ե]տին: Անդ եղեալ քրիստոնէից՝ եղբարց և կանանց, մեծաց և փոքունց հաւասարին յօժարութեամբք] եւ արդեամբքն արծաթապատ կազմեցաւ: Ա[ստուա]ծ իւրեանց գյանցանսն չի յիշէ. ամէն: Խոհեմազարդ քահանայք և կամ բարիոք եղբարք՝ ով ոք որ հանդիպիք նայելով և տեսանելով, կարդալով և լսելով, ասացէք. Գ. Տէ՛ր ողորմեա՛: Եւ բանիս սէպէպ և միտք ամօղ և հետևօղ և աշխատանք քաշօղ՝ սուտ անուն Փափազ օղլի Պօղոսն, Էվելով ճահտ արաւ և բանըս վօճուտ բերաւ: Ասացէք Ա[ստուա]ծ ողորմի և Հայր մեր: Ի թուին Փրկչին 1787 և մարտի մէկին, օրն .Բ.շ[ա]բթի: Եւ ի տաճկաց սէնէ 17-ի և ճեմգիլ էվելի 17 ին կազմեցաւ»²³:

Մուշեղկա (Մուշեղկան կամ Մուշաղկա). գյուղը գտնվում է Ակնից հյուսիս-արևելք: Սբ. Գևորգ ուղղափառ եկեղեցին՝ բավականին պարզ մի շինություն, հիմնովին վերակառուցվել է 1892-93 թթ., ընդ որում, դրան կից կառուցվել է նաև մի փոքրիկ խորան՝ գյուղում բնակվող առաքելական սակավաթիվ հայերի համար²⁴:

ԺԹ դարի վերջին Ակնի հայ հոռոմները կազմում էին մոտավորապես 90 ընտանիք²⁵: Այդ սակավամարդության պատճառը մեծ չափերի հասած արտագաղթն էր՝ «պանդխտությունը», որն արևմտահայության ամենամեծ խնդիրներից մեկն էր: Դրան զուգահեռ՝ Ակն են եկել պանդուխտ հույն տղամարդիկ, որոնք ամուսնացել են հայ հոռոմների հետ և մնացել նրանց գյուղերում²⁶: Հայ-հունական խառն ամուսնություններն այլ հանգամանքների հետ մեկտեղ նպաստել են, որ նշված ժամանակաշրջանում հայ հոռոմների ազգային ինքնության մասին շփոթ ստեղծվի, և նրանք համարվեն ոչ թե ուղղափառ հայեր, այլ հայախոս հույներ: Որպես այդպիսիք՝ հայ հոռոմները գերծ են մնացել 1915 թ. ջարդերից, բայց Եղեռնից հետո նրանց դպրոցներում մեկընդմիջտ արգելվել է հայերենի ուսուցումը²⁷:

23 Դեսպինա Պապանդրեուի մասնավոր հավաքածու:

24 **Ճանիկեան Յ.**, նշվ. աշխ., էջ 60:

25 **Ճանիկեան Յ.**, նշվ. աշխ., էջ 57-60: Դժվար է ճշգրիտ ասել, թե քանի շունչ են կազմել հայ հոռոմները, որովհետև նրանց ընտանիքները, որպես կանոն, բաղկացած էին 10-12 հոգուց: Ուրեմն 90 ընտանիքի դիմաց մոտավորապես կունենանք 800-900 հոգի:

26 Նշվ. աշխ., էջ 56:

27 Ակնը և նրա հայկական գյուղերը հիմնականում կործանվել էին 1896 թ.: Համիդյան ջարդերի ժամանակ: Նույն թվականի սեպտեմբերին հունական «Էստիա» թերթը տեղեկացնում էր հետևյալը. «Փոքր Ասիայի վերջին անհանգստության վերաբերյալ Կոստանդնուպոլսից ստացած մեր նոր տեղեկատվու-

1923 թ. հուլիսի 24-ին կնքվում է Լոզանի պայմանագիրը, որի կետերից մեկը Հունաստանի ու Թուրքիայի միջև համապատասխանաբար մուսուլման և ուղղափառ ազգաբնակչության փոխանակումն էր: Ահա այսպես Ալեքի հայ հոռոմները Չորակ գյուղի վերջին քահանա Գրիգոր Փափագյանի (Փափագոլի, 1866-1951 թթ.) գլխավորությամբ բռնում են պարտադրված գաղթի ճանապարհը:

1924 թ. Հունաստան են ժամանում Վանք գյուղից 25, Մուշեղկայից՝ 35, Շրգուից ու Չորակից՝ 10-ական հայ հոռոմ ընտանիքներ: Որպես բնակության վայր՝ ընտրում են Էվիա կղզու Կաստանիտիսա գյուղի հարևան տարածքը՝ իրենց հայրենիքի հետ նմանության պատճառով և այնտեղ հիմնում Նեա Էգին (Նոր Ալև) գյուղը: Հետագայում այն միաձուլվել է Կաստանիտիսայի հետ:

Իսկ Թուրքիայում քրիստոնյաների արմատախիլ լինելուց հետո հետևել է տեղամուսնների անվանափոխությունը. Ալևը դարձել է Քեմալիե, Վանքը՝ Յաքաքոյ, Շրգուն՝ Էսերթեփե, Մուշեղկան՝ Քոջաչիմեն:

Ի դարի կեսերին Վանքի Սբ. Գևորգը Եփրատի ջրերի տակն է անցել:

Մուշեղկայի Սբ. Գևորգ եկեղեցին վերածվել է մզկիթի, դրա կողքին էլ մինարեթ է կառուցվել:

Բավականին լավ է պահպանվել Շրգուի եկեղեցին:

Չորակ գյուղն անմարդաբնակ է, իսկ Սբ. Նիկողայոս եկեղեցուց միայն չորս պատերն են կանգուն:

քյան համաձայն՝ կոտորվածների մեջ են 800 հայ հոռոմներ, այսինքն՝ ուղղափառ հայեր, որ Էգինի մոտակայքում են բնակվում, և 1500 մաքուր հայեր» («Εστία», 1896, Σειτ, 3, էջ 3): Ըստ երևույթին, զոհված հայ հոռոմների թիվն այստեղ շփոթել են նրանց ընդհանուր թվի հետ:

ՄԻ ՀԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Աշոտ Օհանյան

Նյութն ամբողջությամբ առաջին անգամ լույս է տեսել «Իրատես» պարբերականում (2015, № 27), իսկ համառոտ տարբերակով՝ Վ. Սվազյանի «Հայոց ցեղասպանություն» գրքում (Երևան, 2011, էջ 410-411):

Չարաբաստիկ 1915 թվականից որքա՛ն ժամանակ է անցել. մի ամբողջ դար...: Ասում են՝ ժամանակը բուժում է բոլոր վերքերը, բայց արի ու տես, որ ժամանակն անգոր է բուժելու անբուժելին: Մա մի վերք է, որ հավիտյան դաջվել է հայի հոգում, ողբերգություն, որ մարդկային արյամբ է գրվել պատմության էջերում, գայրույթ, որ...

Վերջերս ձեռքս ընկավ Հայոց ցեղասպանությունը վերապրած մի հայորդու պատմություն, որի յուրաքանչյուր տողն ընթերցելիս հոգիս լցվում էր աննկարագրելի ցավով, բայց միևնույն ժամանակ հիացմունքն էր խեղդում կոկորդա. ինչպե՞ս կարելի է ապրել հայ ժողովրդի 20-րդ դարի ամբողջ պատմությունը՝ տեսնել եղեռն, որբություն, գաղթ, հայրենադարձություն, աքսոր, երկրաշարժ, երիտասարդ գավակի կորուստ, և մնալ մարդ. այնքա՛ն բարություն, հայրենասիրություն, նվիրվածություն, հոգու տոկունություն, լավատեսություն և սեր կար այս մարդու՝ Աշոտ Հովհաննեսի Օհանյանի հոգում:

«Ծնվել եմ 1905 թ. Թուրքիայի Բուրսա նահանգի Մեծ Նորգյուղում¹: Մեր ընտանիքը բաղկացած էր յոթ հոգուց՝ հայրս, մայրս, երեք քույրերս, եղբայրս և ես: Շատ լուսավոր եմ հիշում մեր գյուղը՝ այն շրջապատող թթնու և ձիթապտղի հսկայական այգիները, նրա անցուդարձը, եկեղեցին, որտեղ ամեն կիրակի սուրբ պատարագ էր մատուցվում, դպրոցը, մեր տունը, որը գտնվում էր Անհամ կոչվող աղբյուրի մոտ: Այդ աղբյուրի մոտով մի ճանապարհ էր անցնում, որը տանում էր Օրթագյուղ, իսկ հետո շարունակվելով՝ հասնում մինչև Չենգիլեր: Բոլորը հայկական գյուղեր էին, որոնց բնակչությունը շատ կապված էր միմյանց հետ: Հայրս, որը զբաղվում էր շերամապահությանը և ձիթեմու մշակմամբ (մեր այգուն կից ձիթեմու կայան ունեինք), շատ մեծահոգի և առատաձեռն մարդ էր: Լավ եմ հիշում՝ երբ գյուղից որևէ մեկը գավաթը ձեռքին գալիս էր ձեռ

խնդրելու, նա մորս ասում էր. «Կարիքավոր եմ, շիշով լեցու՛ր, տու՛ր»: Փոքրիկի իմ աչքերով մեր գյուղում կյանքն այնքա՛ն անհոգ էր թվում, երջանիկ..., կարծես ոչինչ էլ չէր կարող խաթարել այն, բայց...

Չարագուշակ 1914 թ. գլխավար փոխեց հազարավոր հայ ընտանիքների կյանքի ընթացքը: Այն օրը, երբ թուրքական կառավարության հրամանով «բանակ գորակոչվեցին» հայ տղամարդիկ, անգամ մեզ՝ մանչուկներինս համար անհոգ թվացող կյանքը մոճավանջ դարձավ: Այդ դաժան հրամանին հաջորդեց մյուսը՝ տեղահանություն...

Տղամարդկանց հավաքագրելուց որոշ ժամանակ անց, որոնց թվում էր նաև հայրս, ընտանիքներին հրամայվեց կառքեր վարձել, իբրև թե մոտիկ տեղ ենք գնալու: Ով դրամ ուներ, վարձեց, ով չուներ, ոտքով ճանապարհ ընկավ: Հիշում եմ՝ երեխաներս, մեր մայրերի փեշը բռնած, քայլում էինք: Երկար ժամանակ գիշեր ու ցերեկ մեզ քշում էին քաղաքից քաղաք, գյուղից գյուղ: Առաջին կանգառը Կոնիան էր: Մակայն քաղաք չմտանք, այլ սարերում՝ ոստիկանների հսկողության ներքո, սոված ու ծարավ գիշերն անցկացրինք. քաղաքներում միսիոներական խմբեր կային, և թուրքերը ջանում էին Դեր Չոր քվոյ մահվան քարավանները հեռու պահել նրանց աչքից: Հաջորդ առավոտ շարժվեցինք դեպի Բոզգուրտ²: Շաբաթներով քայլում էինք. ոտքերս ամբողջովին արյան մեջ էին թաթախված: Ոստիկանները մտրակներով անդադար հարվածում էին և բղավում, որ արագ քայլենք: Շատերը չդիմացան, մահացան ճանապարհին, իսկ նրանց անշնչացած մարմինները կեր դարձան գայլերին (երբեմն այդ մարդիկ իրենց վերջին շունչը դեռ չփչած էին կեր դառնում գազաններին): Նրանց թվում էին նաև մայրս ու կրտսեր քույրս: Ավագ քրոջս, որը շատ զեղեցիկ էր, ամերիկացի մի զինվոր իր հետ տարավ Ամերիկա: Հետագայում, երբ նա ինձ գտավ, իմացանք, որ ամուսնացել է այդ տղայի հետ, սակայն



Աշոտ Հովհաննեսի Օհանյան (1905-2000)

¹ Մեծ Նորգյուղը (ներկայումս՝ Ենիքոյ) գտնվում է պատմական Նիկոմեդիա նահանգի համանուն վարչամիստ և գլխավոր քաղաքից (ներկայումս՝ Բուրսա) ուղիղ գծով 45 կմ հյուսիսարևելք, իսկ Կ.Պոլսից՝ 62 կմ հարավ-արևելք:

² Բոզգուրտ գյուղը գտնվում է Սեբաստիայից 61 կմ հարավ-արևմուտք:

գաղթի սուկայի ճանապարհին իր անջնջելի հետքը թողել էր քրոջս ճակատագրի վրա՝ հավերժ գրկելով նրան զավակ ունենալու բերկրանքից: Միջնեկ քրոջս ճակատագիրն ինձ անհայտ էր: Միայն տարիներ անց իմացա, որ ինչ-ինչ ճանապարհով հայտնվել է Բեյրութում: Եղբայրս, գորահավաքի լուրը լսելով, գյուղի մի քանի տղաների հետ նախօրոք էր փախել: Միայն ասածուն է հայտնի, թե ինչպես էր մագապուրծ եղել թուրքական յաթաղանից և ինչ ճանապարհով էր հասել Հունաստան:

Երկար քայլերուց հետո հասանք Իդե³ անունով մի գյուղ, և այստեղ սկսվեցին բացահայտ թալանն ու ջարդը: Թվով շատ քիչ էինք մնացել, իսկ ճանապարհին անվերջանալի էր թվում: Երբ Շիրքում մեր բզկտված քարավանը կանգ առավ՝ գիշերը մի փոքր հանգստանալու, այստեղ առավոտյան իմացանք, որ պատերազմն ավարտվել է: Այդպես էլ Դեր Չոր չհասանք:

Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեն հավաքեց ճանապարհին թափված որբերին և կանանց ու տարավ Պոլիս: Որք և անտեր մնացած երեխաներիս բաժանեցին պոլսահայ ընտանիքների մեջ: Հասակակից հինգ տղաներով մի քանի շաբաթ ապրեցինք Բոյաջյանների տանը: Երբեք չեմ մոռանա տիկին Բոյաջյանի հոգատար վերաբերմունքը մեր հանդեպ: Չնայած առաջինների առկայությանը՝ նա անձամբ էր մեզ լողացնում, հագցնում, կերակրում և սովորեցնում հայերեն գրել ու կարդալ: 1918 թվականին, երբ ստեղծվեց Հայաստանի առաջին հանրապետությունը, դաշնակցությունը գնեց Պոլսում՝ Բոսֆորի ասիական մասում՝ Չենգելթոյ Բուլեղիում գտնվող Քենալ փաշայի գորանոցը, և հայ որբերին հավաքեցին այնտեղ: Հայաստանի առաջին հանրապետության տարիներին մենք ազատ շրջում էինք Պոլսի փողոցներով: Անգամ հայկական եռագույնն էր ծածանվում մեր որբանոցի շենքի տանիքին: Չորսմետրանոց այդ հսկայական դրոշը ես տեսել եմ. ամեն անգամ դասասենյակ մտնելիս մենք այն համբուրում, նոր էինք ներս մտնում: Որբանոցում հավաքված երեխաների մեծ մասը չգիտեր իր ազգանունը, ուստի տեսուչը, հարցնելով հոր անունը, երեխային ցուցակում գրանցում էր հայրական անունով: Այդպես էլ ինձ հետ եղավ. Օհանի տղան էի, դարձա Օհանյան: Հետագայում, երբ Հայաստանում գտա իմ ազգականներին, պարզվեց, որ մեր իսկական ազգանունը Ռուբինյան է:

Որբանոցում մեզ օրինավոր կրթություն էին տալիս: Անգամ հայ մտավորականներն էին այցելում մեր որբանոց՝ Հովհաննես Թումանյան, Ավետիս Ահարոնյան, Լևոն Շանթ և ուրիշներ: Նրանք բոլորն էլ մեզ հորդորում էին՝ ասելով. «Դուք եք Հայաստանի ապագան»: Անկախության կորստից

հետո իրավիճակը կտրուկ փոխվեց: Թուրքերը սկսեցին մեզ հանգիստ չտալ: Այդ ժամանակ Թուրքիայում տասը-տասնհինգ հայկական որբանոց կար: Թուրք դահիճները պարբերաբար մտնում էին որբանոցները, ընտրում գեղեցիկ երեխաներին և տանում իրենց հետ՝ պատճառաբանելով, որ թուրք են: Երեխաները լաց էին լինում, բղավում, որ իրենց ծնողները հայ են եղել, անունն ու ազգանունը հայի են, բայց իզո՛ւր...: Անգամ որբանոցի տարածքից էինք վախենում դուրս գալ: Թուրքերն անվերջ հարձակվում էին որբանոցի վրա: Դաշնակցականները մեզ պաշտպանելու համար Անդրանիկի զորքից մարդիկ բերեցին: Մակայն դա էլ չօգնեց: Այս անգամ էլ թուրք հրոսակները գիշերները նավթի մեջ թաթախված խոտի տուկերն էին շարտում պարսպից ներս՝ փորձելով վառել մեր որբանոցը, իսկ մենք քարերով խփում էինք նրանց: Ամերիկացիները, տեսնելով, որ ստեղծված իրավիճակից գլուխ չեն հանում, գիշերով մեզ բաժանեցին հայկական եկեղեցիների մեջ, որտեղ մեզ պահում էին նկուղներում: Մի գիշեր էլ մեզ, հատիկ-հատիկ հաշվելով, նստեցրին ածուխ տեղափոխող ռումինական «Բացիա» շոգենավը և փախցրին Պոլսից, տարան Հունաստան: Մինչև Բոսֆորի նեղուցն անցնելը ածուխների վրա կույն եկած խեղճ ու կրակ որբերս չէինք էլ պատկերացնում, թե ինչ վտանգ էր մեզ սպառնում. թուրքերը նավերով հետապնդում էին մեզ: Շատ տարիներ հետո միայն հասկացա նավապետի ու ամերիկացի մեր տեսչի ջերմ գրկախառնության և ուրախ բացականչությունների բուն իմաստը՝ փրկվել էինք: Բաց ծովում հանդիպեցինք ծանրությունից հազիվ սողացող մի նավի, որը հայ գաղթականներ էր տեղափոխում Եգիպտոս: Հունաստանի Սերա կղզում մի մեծ որբանոց կառուցեցին, և այստեղ ապրեցինք մի քանի տարի:

Մի օր էլ որբանոցում մեզ ասացին, որ Եգիպտոս պետք է գնանք, և որոշ որբերի տեղափոխեցին Ալեքսանդրիա: Այստեղ, ըստ նախասիրության, մեզ տեղավորեցին հայ արհեստավորների մոտ, որ հացի տեր դառնանք: Գիշեր ու գոր նվիրված աշխատելով՝ ես սովորեցի ավտոմեխանիկի գործը, տուն ունեցա, ստեղծեցի սեփական գործս՝ բեռնատար և մարդատար տաքսիների պարկ, և ապահովեցի բարեկեցիկ կյանք: Ալեքսանդրիայում հաճախ էինք Մոսե մայրիկին տեսնում. հիշում եմ, թե ինչպես էին անցնող-դարձողները սևազգեստ, բարձրահասակ այդ գեղեցիկ կնոջը հանդիպելիս ձեռքը համբուրում:

Եգիպտոսում պարտադրաբար ծառայեցի անգլիական բանակում և որպես հակատանկային շարասյան մեխանիկ մասնակցեցի Երկրորդ աշխարհամարտին:

1940 թ. ամուսնացա, 18 օր անց եգիպտական բնակավայրերից մեկի՝ Մերսա Մատրուխի պաշտպանության ժամանակ ծանր վիրավորվեցի և միայն հրաշքով ողջ մնացի: Գիտակցելով, որ աղի

³ Իդե գյուղը գտնվում է Սեբաստիայի նահանգի Թորաք քաղաքից 48,5 կմ արևմուտք, իսկ Զիլեից՝ 9 կմ հյուսիս-արևելք:

ջուրը կկանգնեցնի արյունահոսությունն՝ ծակ-ծկված մարմնով մի կերպ ավազների վրայով սողացի դեպի ծով և...: Լուսադեմին օգնության եկածներն ինձ գտան անգիտակից վիճակում ծովափին ընկած: Ի դեպ, զորամասի ռմբակոծությունից կենդանի մնացած միակ զինծառայողն էի⁴: Հիվանդանոցի անձնակազմը համոզված էր, որ մեկ շաբաթ էլ չեմ ապրի, այդ պատճառով էլ կնոջս բացառության կարգով անցաթուղթ տվեցին, որ ազատ մուտք ունենա հիվանդանոց: Ապրելու համար երկար պայքարեցի. տարա մի քանի ծանր վիրահատություն, և միայն 16-ամյա կնոջս համբերության, հոգատար խնամքի շնորհիվ ոտքի կանգնեցի, սակայն ողջ կյանքում զրկվեցի ձախ աչքիցս և աջ ձեռքիցս ու դարձա II կարգի հաշմանդամ: Հիշում եմ՝ ինչպես Ֆարուկ թագավորը եկավ հիվանդանոց վիրավորներին տեսության:

Ծառայությունն շարունակեցի Սուեզի ջրանցքի մոտ, ապա ընտանիքիս հետ տեղափոխվեցի Կահիրե:

Երկու ուշագրավ դեպք եմ հիշում Կահիրեյից: Խորհրդային Հայաստանն առանց նախնական պայմանավորվածության երեք մեծ նավ ցորեն էր բերել Եգիպտոս՝ որպես նվեր: Եգիպտական կառավարությունը, սակայն, չընդունեց այդ նվերը՝ ասելով, որ կարիքը չունի: Եվ իսկապես, Եգիպտոսը, անգլիական գաղութ լինելով հանդերձ, հարուստ երկիր էր, և ժողովուրդը լավ էր ապրում: Մեկ շաբաթ նավերը ծովափին կանգնելուց հետո ամբողջ ցորենը լցրին ծովը և հեռացան՝ պատճառաբանելով, որ հետ տանելը ձեռնառու չէ: Օրերով ծովի ալիքների վրա ցորենի հատիկները տարուբերվում էին, իսկ մենք՝ հայերս, նայում ու իրար ասում էինք՝ ուրեմն ինչքա՞ն հարուստ է մեր հայրենիքը...

Երկրորդ դեպքը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ հայկական եկեղեցու հոգևոր առաջնորդ Մամբրե սրբազանը⁵, իմանալով, որ մտադիր եմ հայրենիք գնալ, նավ բարձրանալու նախորդ գիշերն ինձ կանչեց իր մոտ և, քանի որ մտերիմ էինք, անգամ ծունկի եկավ և սկսեց համոզել, որ չգնամ Հայաստան, պատմեց դեպքեր Հայաստան կատարած իր այցից. «Աշոտ, մի՛ գնա, դու հաշմանդամ ես, երկու անչափահաս երեխա ունես, կինդ էլ հղի է: Դա քո տեղը չէ...»: Ես հրեցի նրան՝ անվանելով հայրենիքի դավաճան, դաշնակցական...: Կյանքիս հետագա տարիներին հաճախ եմ հիշել այս միջադեպը և մտովի ներողություն հայցել սրբազանից:

1947 թ. հայրենիքի սիրո և կարոտի ծարավով հայրենադարձվեցինք: Մեզ հայրենիք բերող «Պո-

բեդա» նավը հավաքեց նաև Սիրիայի, Լիբանանի, Բուլղարիայի հայրենադարձվողներին: Ինչպիսի՞ ուրախություն էր տիրում նավի վրա. բոլորս ցնծում էինք այն մտքից, որ շուտով մայր հողի վրա ենք լինելու, բիբլիական Արարատն ենք տեսնելու: Բաթումի նավահանգիստ մտնելուց առաջ մեզ պարտադրեցին ծովը թափել մեր ունեցած ողջ սնունդը. ի՞նչ ասես չէր լողում ծովի ալիքների վրա՝ խնձոր, նարինջ, բանան և այլն: Իսկ երբ Բաթումի նավահանգիստ հասանք, և մեզ ցեխի պես թաց սև հացի փոքր կտորներ բաժանեցին, նոր հասկացանք, որ մեր բարեկեցիկ կյանքն ավարտվեց: Մեզ միայն մի միտք էր սփոփում՝ սա դեռ Հայաստանը չէ: Գնացքով Երևանին մոտենալիս հանկարծ ճերմակ ամպերի միջից երևաց Արարատը: Իսկական խենթություն էր տիրում. մի պահ քար լռություն, ապա հիացմունքի ճիչեր, արտասուք և խիճդ:

Բոլորս վստահ էինք, որ հայրենիքում մեզ Արարատի ճերմակ գազաթի նման լուսավոր ապագա է սպասում, բայց... հիասթափությունը մեծ էր, շա՛տ մեծ: Ի գարմանս մեզ՝ հայրենիքում հայրենադարձներիս ոչ թե գրկաբաց, այլ թշնամաբար ընդունեցին՝ հաճախ արհամարհանքով նշելով. «Կարմիր խնձոր չուղարկեցինք, որ եկաք»: Հայրենիք գալուն պես մեզ ուղարկեցին Արթիկի կողմը, որի գյուղերից մեկում՝ Վարդաքարում, անցկացրինք ձմեռը: Հողից շինված տներով այդ գյուղում միայն ցորեն էր աճում: Միակ շքեղությունն Արագած լեռան պատկերն էր և մի փոքրիկ քաղաքն, որը հոսում էր գյուղի կողքով: Երբ գալիս էր առաջին ձյունը, ճանապարհները փակվում էին, և գյուղը, թաղվելով ձյան մեջ, կտրվում էր աշխարհից: Այստեղ ապրում էինք գոմում՝ անասունների հետ: Գուստրս այդ տան թոնրի մոխիրների վրա ծնվեց:

Գարնանը մեծ դժվարությամբ վերադարձանք Երևան: Այստեղ հայրենադարձության կոմիտեն որոշեց մեզ ուղարկել Ղափան՝ համոզելով, որ արդյունաբերական մեծ քաղաք է: Սակայն տեղ հասնելուն պես պարզվեց, որ մեր ընտանիքի անունը ցուցակում չկա, և մեզ սխալմամբ են ուղարկել: Երեք օր ու գիշեր ընտանիքիս՝ կնոջս, երկու անչափահաս տղաներիս և նորածին դստրիկիս հետ անցկացրի երկաթուղու կայարանի երկաթգծերի վրա՝ բաց երկնքի և անդադար տեղացող անձրևի տակ, մինչև հասկացանք՝ այս մարդկանց պետք է ոսկի տալ, որ մեզ մեր օրինավոր տեղն ուղարկեն: Վերջապես Երևանի Վարդաշեն թաղամասում մեզ հողամաս տրամադրեցին, որտեղ սկսեցինք մեր տունը կառուցել: Այս ամայի տարածությունում ո՛չ խմելու ջուր կար, ո՛չ ուտելու որևէ բան, և այստեղ եկած հայրենադարձներն իսկական անտուն ու անտեր գաղթականներ էին իրենց մայր հողում: Թեև ամբողջ օրը սոված ու ծարավ շինարարության վրա էինք աշխատում, այնուամենայնիվ, գոհ էինք: Սակայն երջանկությունը կարճ տևեց... 1949 թ. հու-

4 Ըստ ամենայնի՝ հուշագիրը ծանր վիրավորվել է 1940 թ. սեպտեմբերի լույս 13-ի գիշերը Սիդի-Բարրանի-Մերսա Մատրուխի ճանապարհի միջակայքում հուսարական 11-րդ գնդի վրա Իտալիայի օդուժի իրականացրած ռմբակոծության ժամանակ:

5 Խոսքը Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանի մասին է (1889, Կարին-1966, Կահիրե):

նիսի 16-ին մեր հողամասում շինարարությանը էի զբաղված, երբ հեռվում երևաց Ներքին գործերի անվտանգության սև մեքենան, որը ժողովուրդը «ЧЕРНЫЙ ВОЗ» էր անվանում: Ինձ ձերբակալեցին և մեղադրելով դավաճանության մեջ՝ դատապարտեցին 10 տարվա ազատազրկման: Գատավարության ողջ ընթացքը երեք րոպե տևեց: Բազում տարիներ են անցել, սակայն մինչ օրս ոտքերիս վրա զգում եմ քննիչի կոշիկների հարվածների տեղը: Սարսափելի օրեր էին... Երիտասարդ կինս երեք անչափահաս երեխաների հետ մնաց անտեր: Նա քաղբանտարկյալի կին էր, և ոչ ոք չէր ցանկանում նրան աշխատանքի ընդունել, անգամ տեսնել կամ բարև տալ: Երեխաներին կերակրելու համար նա ստիպված եղավ շինարարության վրա աշխատել որպես բանվոր:

Ցավալիկ այն էր, որ մեղադրանքներն անհիմն էին, անգամ ծիծաղելի: Քանի որ Եզիպտոսն անգլիական գաղութ էր, անգլերեն գիտեինք (անձամբ ես տիրապետում էի մի քանի լեզուների՝ հայերեն, հունարեն, թուրքերեն, արաբերեն, ֆրանսերեն), Կահիրեում հայկական ակումբ էինք հաճախել, գրուցել, ֆուտբոլ խաղացել. այդ ամենը, պարզվում է, հանցանք է եղել, իսկ մենք չգիտեինք...

Գաղութներում սարսափելի տեսարանների են ականատես եղել: Այստեղ ես սոսկումով հիշեցի, թե ինչպես են Աթաբեկյան, Նուրիջանյան և Խասաբ Հասան անուններով դահիճներն այս բանտում կացնահարել 73 հայրենասեր մտավորականների, որոնցից երեքը կին էին, իսկ մեծ մասը՝ Սարդարապատի հերոսամարտի մասնակիցներ (նրանցից մեկն էլ Երրորդ կամավորական գնդի հրամանատար Համազասպ Սրվանձտյանն էր): Այստեղ՝ այս չարաբաստիկ բանտում, հանդիպեցի Արամ Չավուշին: Այդ հսկա մարդը փոքրացել, կծկվել էր: Մեքենայի մեջ անօգնական ընկած էր: Գրկեցի, հանեցի՝ վրդովված բղավելով. «Անխիղճներ, այս մարդը հերոս է»: «Ի՞նչ հերոս, դաշնակ է, գո՛ղ, ավագակ», – լսվեց պատասխանը: Նրան տարան Դիլիջանի գաղութ: Որոշ ժամանակ անց մեզ էլ տարան այնտեղ: Նա հիվանդացավ, և չնայած ամեն անգամ կրկնում էր, թե իրեն մեռնել չկա, մի առավոտ արթնացանք և տեսանք, որ մահացել է՝ ծածկոցի տակ խեղճ ու կրակ կծկված: Տարանք, խնձորի ծառի տակ թաղեցինք:

Շուկներ կային, որ իբր մեզ ազատելու են: Այնինչ 1950 թ. մեզ Հայաստանից աքսորեցին: Նախ տարան Բաքու: Այստեղ թուրք բանտապետը, մեզ տեսնելով, պարզապես ապշեց. հայր հայ բանտարկյալին այս ոնց է նայել, սրանք պարզապես մեռած են, և խոհարարին պատվիրեց 20-25 օրում մեզ ոտքի կանգնեցնել: Ապա մեզ տարան Ռոստով: Հետո... հետո սկսվեց իմ ողիսականը՝ գաղութից գաղութ: Նախ ինձ տարան Նիժնի Տագիլ, ապա

մեկ ուրիշ տեղ, հետո մեկ ուրիշ. հինգ-վեց ամիսը մեկ տեղափոխում էին: Այս դաժան տարիների ընթացքում միայն Աստծու նախախնամությանը չդարձա անտառներում վայրի գազանների կեր և բանտերում տիրող սովի ու համաճարակների գոհ: Բանտերում քրեականների հետ ավելի լավ էին վարվում, քան քաղբանտարկյալների: Միբիդյան բանտերում հայ և տարբեր ազգերի բազում մտավորականների, գիտնականների և բարձրաստիճան գինվորականների հանդիպեցի, ովքեր նվիրված ծառայել էին իրենց հայրենիքին, և հայրենիքն այդ կերպ էր վարձահատույց լինում:

Վլադիմիրյան բանտում երեք օր Գարեգին Նժդեհի հետ մի գարշելի խցում եմ մնացել: Նույն խցում մեզ հետ Երևանից 3 քրեական հանցագործներ էին մնում, ովքեր դրամով անվերջ թղթախաղ էին խաղում: Նժդեհն արդեն վատառողջ էր, ոտքերն ուռած էին, պառկած էր երկրորդ հարկի փայտե անկողնու վրա և պետքերը հոգալու համար իր բաժին սև հացի կտորը տալիս էր մի կալանավորի, որ օգնի իրեն: Մի անգամ այլևս չդիմանալով թղթախաղով տարված քրեականների վեճերին՝ բղավեց. «Մրկաներ, ես իմ ժողովրդին այսպե՞ս պետք է տեսնեի»:

1955 թ. հանցակազմի բացակայության պատճառով գործը կարճվեց, և ինձ ազատ արձակեցին՝ լիովին արդարացնելով: Ես վերադարձա հայրենիք:

Կինս և երեխաներս գրկաբաց ընդունեցին ինձ, սակայն երկար ժամանակ պետք եղավ՝ աքսորում և բանտերում տեսած մղձավանջներս մոռանալու և հոգեկան վիճակս կարգավորելու համար: Իմ և ընտանիքիս բոլոր փաստաթղթերն Անվտանգության կոմիտեի քննիչն այրել էր՝ վստահ լինելով, որ իրենց բանտերում մարդիկ երկար չեն դիմանում:

Անցան տարիներ: Չավակներս մեծացան: Ավագ տղաս՝ Արամը, դարձավ Հայաստանի լավագույն լեռնագնացը: 1983 թվականին Պամիրում հայտնաբերեց լեռնանցք և միայն երկարատև պայքարից հետո Մոսկվան համաձայնեց լեռնանցքն անվանել հայտնաբերողի ուզած անունով՝ Մասուն: Ցավո՛ք, ինքն էլ դարձավ Պամիրի գոհերից մեկը:

1988 թ. դեկտեմբերին մեկնեցի Կիրովական (այժմ՝ Վանաձոր)՝ եզիպտահայ ընկերոջս այցելության, և ականատես եղա իմ ազգի 20-րդ դարի մեկ այլ ողբերգության՝ անհեղ երկրաշարժին:

1996 թվականին կորցրի կնոջս՝ կյանքիս բոլոր ուրախ և ծանր օրերի անդավաճան հենարանին:

Հիմա... ապրում եմ: Հայաստանից գնալու միտք չունեմ: Այսքան բանտ ու աքսոր եմ տարել, որ այսօր գնա՞մ, ո՛չ...»:

Կարծում եմ՝ իննսունհինգ տարի բազում փորձությունների միջով անցած այս հայրենասեր մարդուց շատ բան ունենք սովորելու:

Նյուրթը պատրաստեց Լյուսյա Առաքելյանը

ՆՈՐԱՀԱՅՏ ԷՋ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՍԲ. ԱՍԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՄԲԵԹԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀԱՐԴԱՐԱՆՔԻՑ

Անի Բարայան

1604 թ. հայերի՝ Շահ Աբասի իրականացրած բռնագաղթի հետևանքով Բաֆահանի (Սպահան) արվարձանային հատվածում Նոր Ջուղան հիմնած հայերը, ի հիշատակ Հին Ջուղայի Սբ. Ամենափրկիչ վանքի, կառուցում են վանական համաձայն պարզ մի շինություն¹:

Գրեթե կես դար անց՝ 1650-ական թթ., Նոր Ջուղայի առաջնորդ Դավիթ Ա-ն² ժամանակի պահանջների համեմատ նախաձեռնում է Ամենափրկիչ վանքի և առաջնորդարանի հիմնովին վերակառուցումը: Այդ նպատակով քանդել է տալիս հին եկեղեցու «անյարմար և անզարդ կառուցածքը» և փոխարենը հիմնում նորը³: Վերակառուցումները սկսվում են 1655 թ. և ավարտվում 1664 թ. ժամանակի գեղագիտական ճաշակին համահունչ:

Նշյալ ժամանակաշրջանը համընկնում է Իրանի Սեֆևյան հարստության ներկայացուցիչ Շահ Աբաս Բ-ի գահակալության տարիներին: Սպահանի մշակութային կյանքը շարունակում է վերելք ապրել: Ժամանակաշրջանի տնտեսական և արտաքին հարաբերությունների զարգացման գործում կարևոր դեր ունեին հայ վաճառականները, որոնց հնարավորություն էր տրված իրենց նյութական կարողությունը և գեղարվեստական ճաշակը դրսևորելու Նոր Ջուղայում: Ի դեպ, նրանցից մեկը՝ վաճառական Խօջա Ավետիքը, իր և հարազատների հիշատակին հովանավորում է Սբ. Ամենափրկիչ վանքի եկեղեցու նկարագրողումը⁴:

Սբ. Ամենափրկիչ վանքի եկեղեցին, որը Հովսեփ Արեմաթացու աջի հանգրվանումից հետո անվանվում է նաև Սբ. Արեմաթացու եկեղեցի, ներսից ամբողջապես հարդարված է որմնանկարներով, զարդանախշերով և հախճաասալիկներով⁵: Որմնանկարները պատկերում են աստվածաշնչյան

դրվագներ, Հայոց եկեղեցու խորհուրդները, արքայությունը, Գրիգոր Լուսավորչի չարչարանքները:

Գեղարվեստական հարդարանքն ամբողջ եկեղեցուն կատարվել է տարբեր ոճերով և տեխնիկայով, որոնք, սակայն, առաջին հայացքից միաձույլ են և ներդաշնակ:

Որմնանկարները կատարվել են սվաղի ֆոնի վրա թե՛ յուղային և թե՛ ջրային լուծորով ներկանյութերով: Կան նաև կտավի վրա արված յուղանկարներ, որոնց միացրել են պատին՝ համապատասխանեցնելով ընդհանուր ֆոնին:

2008 թ. Սպահանի մշակութային ժառանգության պահպանության հաստատության միջոցով առաջին անգամ վերանորոգվում է գլխավոր գմբեթի ներքին հարդարանքը, որի հետևանքով բացահայտվում են նկարիչների անունները և գմբեթի նկարագրողման թվականը⁶:

Գլխավոր գմբեթը երկշերտ է և ունի 19 մ բարձրություն: Ներքուստ ամբողջապես հարդարված է ոսկեգույն զարդանկարներով, որոնց արանքում սպիտակ աղավնիներ են պատկերված լաջվարդ⁷ ֆոնի վրա: Գմբեթի թմբուկում ութ լուսամուտ կա, որոնց բաժանող ութ պատերը պատկերված են Աստվածաշնչի արարման գլխի նկարներով: Լուսամուտների ներքևում՝ ութ շրջանաձև շրջանակներում, առկա են կերպարներ, որոնցից մեկը, համաձայն ավանդության, Դավիթ առաջնորդն է:

6 Դեռևս 1970-ական թթ. Իտալիայի «Իզմեո» ընկերության միջոցով Նոր Ջուղայի հայոց եկեղեցիներում սկսվել էին մասնագիտական առաջին վերանորոգությունները, որոնք, սակայն, ընդհատվել էին Իրանի հեղափոխության պատճառով: 2001 թ.-ից Սպահանի մշակութային ժառանգության պահպանության հաստատության և Սպահանի Հայոց թեմական խորհրդի միջև նոր փուլ է սկսվում. կազմվում է վերանորոգության աշխատանքների ծրագիր՝ սկսելով Սբ. Ամենափրկիչ վանքի գավթի վնասված որմնանկարներից: Դրան զուգընթաց Թեմական խորհուրդը հանձն է առնում եկեղեցու որմնանկարների մաքրման աշխատանքը: Իրանում հայոց եկեղեցիները, արժևորվելով որպես երկրի մշակութային ժառանգության հարստության մի մասնիկ, ներգրավվում են Սպահանի նահանգի պատմական հուշարձանների վերանորոգության ցանկում: Այդ աշխատանքներն իրագործելու նպատակով հատկացվում են նյութական միջոցներ, որի շնորհիվ էլ իրականացվում են մասնագիտական վերականգման աշխատանքներ Սբ. Ամենափրկիչ վանքի կենտրոնական գմբեթում, Սբ. Բեդեթեմ և Սբ. Ստեփանոս եկեղեցիներում:

7 Լազուր:

1 Տե՛ր Յովհաննես Զ., Պատմություն Նոր Ջուղայի, հ. Բ, Նոր Ջուղա, 2008, էջ 408:

2 Դավիթ Ա-ն իր ուսուցչի՝ Խաչատուր Կեսարացու (1620-1646 թթ.) մահվանից հետո նախ ստանձնում է վանքի կառավարման հոգաբարձությունը, իսկ ավելի ուշ՝ նշանակվում առաջնորդ (1652-1683 թթ.):

3 Տե՛ր Յովհաննես Զ., նշվ. աշխ., էջ 408-409:

4 «Ի թվին Ռ-ճԺԸ փետրվարի Ե փոխեցաւ Խօջայ Աւետիքն ի Քրիստոս եւ ետ ծաղկել գտուրբ եկեղեցիս յիշատակ իւրն եւ իւր ննջեցելոցն» (Տե՛ր Յովհաննես Զ., նշվ. աշխ., էջ 411):

5 Եկեղեցին հախճաասալիկներով է պատվել ավելի ուշ՝ 1716 թ., իսկ 1857 թ.՝ Թաղեսու եպիսկոպոսի առաջնորդության ժամանակ, առաջին անգամ նորոգվել է գավիթը, և մաքրվել են եկեղեցու նկարները. «սրբեցան պատկերք եկեղեցոյ»:



Նոր Ջուղայի Սբ. Ամենափրկիչ վանքի եկեղեցու գմբեթարդի որմնանկարները (լուս.՝ Յասեր Համզավի, 2008 թ.)



Վանքի առաջնորդ Դավիթ Ա-ին ըստ ավանդության վերագրվող պատկերը (լուս.՝ Յասեր Համզավի, 2008 թ.)

Գմբեթի ամբողջ զարդանոտիվներն արվել են լայնչինի⁸ տեխնիկայով, որն ընդունված էր Սեֆեյան ժամանակաշրջանում: Ցանկացած զարդանոտիվ պատկերում են կարմիր կավով, որը հայտնի է նաև գել արմանի կամ հայկական կավ անվամբ, ապա շերտ առ շերտ կրկնում են, որպեսզի զարդանոտիվը ֆոնից բարձրանա: Սպասված բարձրությունը ստանալուց հետո ծածկում են ոսկեթղթով: Աշխատանքը



Հատված գմբեթարդի որմնանկարներից (լուս.՝ Յասեր Համզավի, 2008 թ.)

⁸ Pastiglia.



Հատվածներ գմբեթարդի հիշատակագրություններից (լուս.՝ Յասեր Համգավի, 2008 թ.)


երկարատև է և մեծ համբերություն է պահանջում: Ջարդամոտիվներն ընդգծում են վրձնով ընդհանրապես սև, վերջում ֆոնը ներկում են հաճախ լաջվարդ գույնով:

Գմբեթի վերանորոգության ընթացքում հայտնություն էր հետևյալ հիշատակագրությունը.

S(t)ր Յովանէսն՝ ծառայ Յ(իսու)ս Լ(րիստո)ս(ի):

Մարքիսն՝ ծառայ Յ(իսու)ս Լ(րիստո)ս(ի), թվին ՌՃԺԶ (1667):

S(t)ր Կիրակոս՝ ծառայ Յ(իսու)ս Լ(րիստո)ս(ի):



Գմբեթարդի հիշատակագրությունների գրչանկարը (հեղ.՝ Անի Բաբայան)

Հիշատակագրությունների հիմնական մասը բոլորաձև երկզում է գմբեթի բևեռը ներկայացնող այն կետը, որտեղից կախված է ջահը պահող մետաղական շղթան: Կիրառված տեխնիկան նույն՝ լայնչիհն է:

Հիմնական գրությունից փոքր-ինչ հեռավորությամբ ոսկեգույն ֆոնի վրա առկա է ևս մեկ տող գիր, որի տառերը վրձնով ընդգծված չեն:

Վերոհիշյալ գրությունները նախ բացահայտում են երեք ծաղկողների անունները (ընդ որում, նրանցից երկուսը՝ Հովհաննեսն ու Կիրակոսը, հոգևորականներ էին, իսկ մեկը՝ Մարգիսը, աշխարհիկ անձնավորություն էր) և գմբեթի նկարագործման ավարտման թվականը՝ 1667 թ.:

Քանի որ օգտագործված տեխնիկան իրագործվում է մի քանի փուլերով, հավանական է թվում, որ նախնական փուլն ավարտված է եղել նախքան եկեղեցու օծումը (1664 թ.):

Համաձայն այլ հիշատակագրությունների՝ Սբ. Ամենափրկիչ վանքի եկեղեցուն աշխատել են հե-

տևյալ նկարիչ-ծաղկողները՝ տեր Ստեփանոս և Սիմոն պատկերահանները, Կիրակոսը (անթվական) և Թաթոսը (1784 թ.):

Խաչատուր Ջուղայեցին⁹ և Մադրասում տպագրվող «Ազգասէր» պարբերականը հիշում են տիեզերալույս Հովհաննես Ջուղայեցի վարդապետին, որը «...գարդարեաց զեկեղեցին վանացն Ամենափրկչի հրաշագան պատկերօք»¹⁰:

Առաքել Դավրիժեցին¹¹ էլ հիշատակում է Սիմաս ծաղկողին և Հակոբջանին որպես այդ շրջանի լավագույն նկարիչների, բայց ոչ մի հիշատակություն չկա, որով հստակ եզրակացնենք, որ վերջիններս եղել են նաև Սբ. Ամենափրկիչ վանքի նկարագործումների հեղինակները:

Վարպետ-նկարիչները քաջածանոթ են եղել հայկական ավանդական նկարչությանը, առնչվել են նաև տեղական՝ իրանական արվեստին և ստեղծել ինքնուրույն ոճ որմնանկարագործման արվեստում, որն արտացոլում է ժամանակի ազգային շունչը:

Ամփոփելով նշենք, որ նպաստավոր պայմանների շնորհիվ ԺԷ դարի կեսերին Նոր Ջուղան դառնում է հին ավանդույթների շարունակության և ծաղկման կենտրոն, իսկ Սբ. Ամենափրկիչ վանքի եկեղեցու գեղարվեստական հարդարանքը ժամանակի արվեստի տեսակների միախառնումն է, որը բովանդակում և արտացոլում է պատվիրատու-հոգևորականության, վաճառականների, ժողովրդի և արվեստագետի իմացական մակարդակն ու գեղարվեստական ընկալումները:

Սա մի արվեստ է, որը հնարավոր չէ անվանել ո՛չ եվրոպական, ո՛չ իրանական և ո՛չ էլ հայկական, այլ կարելի է կոչել Նոր Ջուղայի դպրոց: Այն հայկական արվեստում միջնադարյանից նոր շրջան անցնելու առաջին քայլն է և արժանի է լուրջ վերաբերմունքի՝ արժևորել, պահպանել, վերականգնել և ուսումնասիրություններով ներկայացնել որպես եզակի երևույթ հայկական, իրանական, ինչու չէ, նաև ԺԷ դարի համաշխարհային կերպարվեստի պատմության մեջ¹²:

9 Խաչատուր արեղայի Ջուղայեցույ Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 156:

10 «Ազգասէր», 1845, № 12, էջ 96:

11 Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Երևան, 1988, էջ 321:

12 Հողվածում օգտագործված լուսանկարների հեղինակը՝ հուշարձանների վերականգնող մասնագետ Յասեր Համզավին, Սպահանի մշակութային ժառանգության պահպանության հաստատության կապալառուն (contractor) էր Սբ. Ամենափրկիչ վանքի եկեղեցու գմբեթի հարդարանքի վերականգնողական աշխատանքների ժամանակ, իսկ գլխավոր պատասխանատուն էր մասնագետ դոկտ. Հեսամ Ասլանին:

ՉԱՄՈՇՉԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ

Սահակ Վարդանյան

Տեղադրություն. Չամոշչ (Չամոսցա) քաղաքը գտնվում է Լեհաստանի հարավ-արևելքում՝ Լյուբլինի մարզում (աշխարհագրական կոորդինատներն են՝ 50°43'14 E, 23°15'31 N): Հեռավորությունը մայրաքաղաք Վարշավայից կազմում է 247 կմ, իսկ մարզկենտրոն Լյուբլինից՝ մոտ 90 կմ: Բարձրությունը ծովի մակերևույթից 212 մ է, զբաղեցնում է շուրջ 30,34 քկմ տարածք¹:

Պատմություն. հիմնադրվել է 1580 թ. թագավորական մեծ կանցլեր և հետման Յան Չամոյսկու (1542-1605) կողմից: Մինչև 1820 թ. պատկանում էր Չամոյսկիների ազնվական տոհմին և Չամոշչի օրդինացիայի կենտրոնն էր: 1772 թ. Ռեչ Պոսպոլիտայի (Լեհ-լիտվական միացյալ թագավորություն) առաջին բաժանման հետևանքով ընդգրկվել է Ավստրիական կայսրության կազմում, ապա 1809 թ. Նապոլեոն Բոնապարտի կողմից միացվել Վարշավայի դքսությանը: 1815 թ.-ից ավելի քան մեկ դար ներառվել է Ռուսական կայսրության, իսկ 1918 թ.-ից՝ Լեհաստանի Հանրապետության կազմում²:

Կառուցապատում. «Քաղաք և բերդ ամուր շինեալ ի Յովհաննու Չամոսչեայ մեծ ատենադարձ Լեհաց. եպիսկոպոսանիստ՝ որոյ աթոռանիստ եկեղեցի գեղեցիկ է և մեծաշէն: Ունի և համալսարան...»³: Քաղաքը կառուցվել է իտալացի ճարտարապետ Բեռնարդո Մորանդոյի (1540-1600) նախագծով և Վերածննդի դարաշրջանի քաղաքի եզակի օրինակ է Արևելյան Եվրոպայում: Իդեալական հատակագծի և հին շինությունների պահպանման շնորհիվ 1992 թ.-ից Չամոշչի հին կենտրոնն ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության հուշարձանների ցանկում (№ 564): Ճարտարապետական առանձնահատկություններից ելնելով՝ ստացել է Հյուսիսային Պադովա, Վերածննդի մարգարիտ և Կամարների քաղաք անվանումները⁴:

Պաշտպանական շինություններ. քաղաքի աղյուսաշեն պարիսպները կառուցվել են 1579-1618 թթ., ունեցել մոտ 12 մ բարձրություն, մոտ 2,4 կմ երկարություն և 2,5 մ հաստություն: Արտաքուստ շրջապատված էին մոտ 7 մ խորությամբ ջրային

խրամով: Սկզբնական երեք՝ Լյուբլինյան (հյուսիսային), Լվովյան (հարավարևելյան) և Շեբժեչինյան (հարավարևմտյան) դարպասներին ԺԹ դարում ավելացվել են երկուսը՝ Նոր Լվովյան և Նոր Լյուբլինյան: Բերդաքաղաքն աչքի է ընկել անառիկությամբ, մասնավորապես 1648 թ. հաջողությամբ դիմակայել է Բոգդան Խմելնիցկու գլխավորած կոզակա-թաթարական միացյալ, իսկ 1656 թ.՝ Շվեդիայի Կառլ Ժ Գուստավ թագավորի զորքերի պաշարմանը: Չնայած ԺԹ դարի 20-ական թվականներին ռուսական իշխանությունների իրականացրած լայնամասշտաբ արդիականացմանը՝ նույն դարի երկրորդ կեսին այն արդեն կորցրել էր իր պաշտպանական նշանակությունը: 1866 թ. ռուսաց Ալեքսանդր Բ կայսեր հրամանով բերդապարիսպները պայթեցվել են: Ներկայումս լավ պահպանված են միայն վեցերորդ և յոթերորդ աշտարակները, դրանք միացնող պարիսպը և քաղաքային հինգ դարպասները⁵:

Հրապարակներ. հին քաղաքի կենտրոնում է գտնվում Ռինեկ Վիելկի (թարգ.՝ մեծ շուկա) հրապարակը: Այն քառակուսի հատակագծի (չափերն են՝ 100 x 100 մ) և շուրջբոլորը կառուցված համաչափ, կամարաշար բաց սյունասարահներով տների շնորհիվ համարվում է գեղեցկագույններից մեկն Արևելյան Եվրոպայում: Հյուսիսային և հարավային կողմերում են գտնվում Ռինեկ Սոլնի (թարգ.՝ աղի շուկա) և Ռինեկ Վոդնի (թարգ.՝ ջրի շուկա) հրապարակները:

Աշխարհիկ կառույցներ. քաղաքում առանձնապես են հատկապես Չամոյսկիների ապարանքը, Ռատուշը (քաղաքապետարան) և Ակադեմիայի շենքը:

Չամոյսկիների ապարանքը գտնվում է հին քաղաքի արևմտյան մասում: Կառուցվել է Յան Չամոյսկու կողմից 1579-1586 թթ. ճարտարապետ Բ. Մորանդոյի նախագծով: Սկզբնապես եղել է երկհարկանի ուղղանկյուն շինություն՝ կենտրոնում քառակուսի աշտարակով և երկրորդ հարկ տանող երկկողմանի աստիճաններով: Շրջապատված էր ներքին պարիսպներով: Դարերի ընթացքում ապարանքը վերափոխվել է. ավելացվել է երրորդ հարկը, հյուսիսից և հարավից՝ մեկից երկհարկ կցակառույցներ, որոնց շնորհիվ ստացել է Ու-ձև հատակագիծ:

1 <https://en.wikipedia.org/wiki/Zamość>

2 https://pl.wikipedia.org/wiki/Historia_Zamościa

3 **Ազոնց Ս.**, Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի, մասն երկրորդ. Երուսաղիմ, հ. Բ, Վենետիկ, 1802, էջ 138:

4 <https://en.wikipedia.org/wiki/Zamość>

5 https://pl.wikipedia.org/wiki/Twierdza_Zamość



Զամոնջ քաղաքի հատակագիծն ըստ Յան Բրաունի նկարագրող քարտեզի (1617 թ.) և քաղաքի ընդհանուր տեսքն ըստ Յ. Ֆ. Բրուդերի կտավի (1820 թ.)



Հատվածներ քաղաքի շրջապարսպից, 3ին Լյուբլինյան և 3ին Լվովյան դարպասները, Ռինեկ Վիելկի հրապարակը, որի ծախս կողմում Ռատուշն է (լուս.՝ Ս. Վարդանյանի, 2014 թ.)

1821 թ. ապարանքը վաճառվել է պետությանը և 1831 թ. վերածվելով ռազմական հիվանդանոցի՝ կորցրել երբեմնի շքեղությունը: 1918 թվականից ծառայում է որպես մարզային և քաղաքային դատարանների շենք⁶:

⁶ https://pl.wikipedia.org/wiki/Pałac_Zamoyskich_w_Zamościu

Չամոյսկիների ապարանքի դիմաց վեր է խոյանում հիմնադիր Յան Չամոյսկու արձանը (2005 թ., քանդակագործ՝ Մարիան Կոնեչնի):

Ռատուշը գտնվում է Ռինեկ Վիելկի հրապարակի հյուսիսային մասում: 1591 թ. կառուցված հին շենքը ԺԷ դարի կեսերին լիովին վերակառուցել են ճարտարապետներ Յան Յարոշկիչը և Յան Վոլֆը:

ԺԸ դարի երկրորդ կեսին հարավից ավելացվել են լայն երկթև աստիճանները, իսկ հյուսիսային կողմից՝ երկհարկանի Ու-ձև կցակառույցը՝ ստեղծելով ներքին բակ:

ԺԹ դարի երկրորդ կեսին Ռատուշը վերափոխվել է քաղաքային բանտի: Ի դարում պարբերաբար վերանորոգվելով՝ այժմ վերագտել է ԺԷ դարին բնորոշ իր՝ բարակ կոճը: Ներկայումս այս շենքում են գործում Քաղաքապետարանը, Քաղաքային ոստիկանությունը և Զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնը⁷:

Հիմնական շինությունը եռահարկ է՝ բարակ կոճին հատուկ գեղեցիկ աստիկով և կամարներով: Շքանուրթը երկրորդ հարկում է, որտեղից վեր է խոյանում ժամացույցով և ռոտոնդայով, 52 մ բարձրությամբ վեցհարկանի աշտարակը: Փոքր ռոտոնդաներ առկա են նաև շինության չորս անկյուններում:

Ակադեմիայի շենքը գտնվում է հին քաղաքի հյուսիսարևմտյան մասում և արևելքից հարում Ռինեկ Սոլնի հրապարակին: Հիմնադրվել է 1594 թ. Յան Չամոյսկու և հայազգի գիտնական, բանաստեղծ Շիմոն Շիմոնովիչի (1558-1629) ջանքերով: Այն Լեհաստանում երրորդն էր Կրակովի (1364 թ.) և Վիլնյուսի (1578 թ.) համալսարաններից հետո և մեծ հռչակ է բերել քաղաքին⁸:

1784 թ. ավստրիական իշխանությունները փակել են ակադեմիան՝ վերածելով կայսերական լիցեյի, իսկ ռուսական իշխանությունները՝ գորանոցի (1813-66 թթ.): Ներկայումս այստեղ գործում են Յան Չամոյսկու անվան լիցեյը և Շ. Շիմոնովիչի անվան ուսումնարանը⁹:

Ի սկզբանե շինությունն ունեցել է L-ձև հատակագիծ: 1627 թ. մեծապես տուժել է հրդեհից: 1639-48 թթ. վերակառուցվելով բարակ կոճով՝ ստացել է ներկայիս ուղղանկյուն հատակագիծը: Երկհարկանի է, ունեցել է ներքին բակ նայող բաց կամարաշար սյունասարահներ:

ԺԸ և ԺԹ դարերի վերափոխությունների հետևանքով ներկայումս անշուք տեսք ունի. հեռացվել են ճարտարապետական հարդարանքի բազմաթիվ տարրեր, մասնավորապես աստիկը, զարդաքիվերը, պատուհանների և դռների դեկորատիվ շրջանակները:

Պաշտամունքային շինություններ. պատմա-ճարտարապետական արժեքներով առանձնանում են Սբ. Հարության և Սբ. Թովմաս առաքյալի կաթոլիկ մայր տաճարը, Սբ. Աստվածածնի ավետման ֆրանցիսկյան եկեղեցին, Հունական եկեղեցին և սինագոգը:

Սբ. Հարության և Սբ. Թովմաս առաքյալի կաթոլիկ մայր տաճարը գտնվում է քաղաքի հարավ-

արևմտյան մասում՝ Չամոյսկիների ապարանքից դեպի հարավ-արևելք: 1992 թ.-ից Չամոյսկու-Լուբաչովյան թեմի առաջնորդանիստ եկեղեցին է:

Շինարարությունը սկսվել է ԺԶ դարի վերջին Յան Չամոյսկու կողմից (Բ. Մորանդոյի նախագծով), սակայն վերջնական տեսքը ստացել և օծվել է 1637 թ. նրա որդու՝ Թոմաշ Չամոյսկու որդի¹⁰: Հիմնովին վերափոխվել է 1820-ական թթ.՝ գրկվելով ներքին և արտաքին հարդարման սկզբնական տարրերից, որոնք մասամբ վերականգնվել են 2010 թ.:

Չորս զույգ մույթերով եռանավ բազիլիկ է՝ արևելքից արտաքուստ շեշտված խորանով: Ունի 30 մ լայնություն, 45 մ երկարություն և 20 մ բարձրություն: Կենտրոնական նավը զգալիորեն բարձր է կողայիններից և տանիքին ունի ոչ մեծ ռոտոնդա: Պայտածև ավագ խորանի երկու կողմերում գտնվում են զույգ ավանդատները, որոնցից հարավայինը Չամոյսկիների տոհմական դամբարանն է: Ներսում առկա են ինը խորան և բազմաթիվ տապանագրեր, այդ թվում՝ հայազգի Շիմոն Շիմոնովիչին: Ունի երեք մուտք՝ բացված հյուսիսից, հարավից և արևմուտքից: Հյուսիսային կողմում գտնվում է քառանկյուն հատակագծով քառահարկ զանգակատուն-աշտարակը՝ կառուցված 1760-75 թթ., իսկ հարավային կողմում՝ հոգևոր առաջնորդների՝ ինֆուլատների երկհարկանի տունը, որն աչքի է ընկնում մուտքի դռան՝ բարակ կոճի շրջանակով:

Սբ. Աստվածածնի ավետման ֆրանցիսկյան եկեղեցին գտնվում է հին քաղաքի հարավարևելյան մասում: Կառուցվել է 1637-1662 թթ. (ճարտարապետ՝ Յան Յարոշևիչ): ԺԹ դարում ռուսական իշխանությունները եկեղեցին վերածել են զինապահեստի, քանդել բարակ կոճի ճակտոնները, կենտրոնական նավը էապես ցածրացրել, իսկ հյուսիսարևելյան կողմի զանգակատուն-աշտարակը և վանական շինությունը՝ հիմնահատակ ավերել¹¹:

Ի դարում շենքում գործել են կինոթատրոն, թատրոն, թանգարան, արվեստի դպրոց: Միայն 1994 թ. է այն վերադարձվել կաթոլիկ ֆրանցիսկյան միաբանությանը¹²:

Չամոյսկի խոշորագույն եկեղեցին է (լայնությունը՝ 29 մ, երկարությունը՝ 56 մ): Եռանավ բազիլիկ է, կենտրոնական նավը և տրանսեպտը զգալիորեն բարձր են կողային նավերից, լայնական նավն ավարտվում է հիմնական շինությունից արտաքուստ առանձնացող ելուստներով: Երբեմնի շքեղ արտաքին զարդարանքներից պահպանվել են միայն որմնասյուները և որմնախոյակները:

Հունական Սբ. Նիկողայոս եկեղեցին գտնվում է հին քաղաքի հարավարևելյան մասում: Կառուցվել է

7 https://pl.wikipedia.org/wiki/Ratusz_w_Zamościu

8 **Kędziora A.**, Encyklopedia Miasta Zamościa, <http://zamosciope-dia.pl/>

9 https://pl.wikipedia.org/wiki/Akademia_Zamojska

10 https://pl.wikipedia.org/wiki/Katedra_Zmartwychwstania_Pańskiego_i_św._Tomasza_Apostoła_w_Zamościu

11 <http://www.zamosc.franciszkanie.pl>

12 https://pl.wikipedia.org/wiki/Kościół_Zwiastowania_Najświętszej_Maryi_Panny_w_Zamościu



Սբ. Գարուբյան և Սբ. Թովմաս առաքյալի կաթոլիկ ճայր տաճարն արտաքուստ և ներքուստ, Սբ. Աստվածածնի ավետման ֆրանցիսկյան եկեղեցին, սինագոգը և Գունական Սբ. Նիկողայոս եկեղեցին (լուս.՝ Ս. Վարդանյանի, 2014 թ.)

1618-31 թթ. նախկինում գործող փայտաշեն եկեղեցու տեղում: Հունական համայնքի վերացումից հետո անցել է ուղղափառ ռուսիններին, Բազիլյանների ուխտին և հունակաթուղիկներին: 1720 թ. տեղի է ունեցել Չամոշչի հունակաթուղիկ եկեղեցական ժողովը: 1809-1918 թթ.՝ ռուսական տիրապետության շրջանում, պատկանում էր ռուս ուղղափառ եկեղեցուն, իսկ Լեհաստանի անկախացումից հետո մինչ այժմ գործում է որպես կաթուղիկ եկեղեցի¹³:

Կառույցը միանավ բազիլիկ է՝ արևելքից արտաքուստ շեշտված հնգանիստ խորանով, որի երկու կողմերում առկա են հիմնական շինությունից բավական ցածր զույգ ավանդատներ: Արևմուտքից կից են եռահարկ զանգակատուն-աշտարակը և ուղղանկյուն հատակագծով գավիթը: Եկեղեցին և զանգակատուն-աշտարակը պսակված են բարոկկո ոճին հատուկ վեղար ունեցող գեղեցիկ ռոտոնդաներով:

Սինագոգը գտնվում է հին քաղաքի հյուսիսային մասում՝ Ռինեկ Սոլնի հրապարակից արևելք:

Կառուցվել է 1610-1618 թթ.՝ սեֆարդ հրեաների կողմից, որոնք նույն դարի երկրորդ կեսին ձուլվել են աշկենազի հրեաներին: Հետաքրքրական է, որ նրանք Ի դարի սկզբին արդեն կազմում էին քաղաքի բնակչության մոտ 43%-ը (մոտ 12.500 մարդ)¹⁴:

Սինգլ գերմանական բռնագավթունը հրեական համայնքի գլխավոր հոգևոր կենտրոնն էր: 1958-2005 թթ. վերածվել է քաղաքային գրադարանի¹⁵: Այժմ վերադարձվել է հրեաներին, ամբողջությամբ վերանորոգվել, ստացել նախկին տեսքը և գործում է որպես հրեական մշակութային կենտրոն և թանգարան:

Քառակուսի հատակագծով հիմնական շինությունն արտաքուստ զարդարված է բարոկկո ոճի ատտիկով, որմնասյուներով և զարդաքիվերով, իսկ ներքուստ՝ բուսանախշերով և վարդյակներով: ԺԷ դարի երկրորդ կեսին հյուսիսից և հարավից կցակառուցվել են հիմնական շինությունից զգալիորեն ցածր նախասրահներ:

Հայերը Չամոշչում. հայերին քաղաք է հրավիրել Յան Չամոշչիկին: 1585 թ. ապրիլի 4-ին Բելգի քաղաքում նրա կողմից ստորագրված հրովարտական մասնավորապես նշվել է. «Թող հայտնի լինի ներկաներին, ինչպես բոլորին միասին, այնպես էլ յուրաքանչյուրին առանձին, որ ոմանք Հայոց ազգից և կոնկրետ պատվելի Քշիշտոֆ Կալուստը՝ այդ ծեսի հոգևորականը, և պատվավոր Մուրադ Յակուբովիչը եկան իմ քաղաք թուրքական հողերից և պատրաստակամություն հայտնեցին այստեղ իրենց առևտուրը և արհեստը բերելու: Որպեսզի իմ

կողմից հիմնադրված քաղաքը սկսի արագորեն ծաղկել, վաճառականությամբ և առևտրով հարստանալ, ես հաճույքով որոշեցի, որ նրանք անձամբ և նրանց ժառանգներն արժանանան այն բոլոր իրավունքներին և ազատություններին, որոնք թագավորական մեծության և իմ համաձայնությամբ տրվել են այս քաղաքին»¹⁶:

Նույն հրովարտակով Յան Չամոշչիկին խոստանում էր հայերին պաշտպանել բոլոր տեսակի անարդարություններից և անօրինականություններից ինչպես իրենց տներում, այնպես էլ ցանկացած այլ վայրում:

Հայերը Չամոշչ են տեղափոխվել Օսմանյան կայսրությունից, Պարսկաստանից և Դրիմից, ինչպես նաև Ռեչ Պոսպոլիտայի այլ քաղաքներից՝ Լվովից, Յազլովեցից, Կամենեց-Պոդոլսկուց և այլն:

Ղ. Ալիշանի «Կամենից» աշխատության մեջ հայերի մուտքը Չամոշչ թվագրվում է 1586 թ.-ով. «ՌԼԵ. Ոմն մեծ իշխան որ էր թագաւորին քանձլեր, այսինքն մոհրտար (կնքապահ), և շինեաց իւր անուան վերայ քաղաք մի, և եղ զանուն քաղաքին Չամոշյուց. քանզի և ինքն այս իշխան Չամոշյուի կոչեր. և անդ կոչեաց զՀայ ազգն, ով որ կամիցի երթալ և բնակել ի անդ. և էր հեռագոյն ի Լովին իբրև 15 մղոնաւ. գոր և գնացին փոքր ի շատէ, նոքա որ էին եկք և օտարք Հայոց տանէն. և մեծ երախտիք արար նոցա, շնորհելով ամենեցուն ազատութիւն և բնակութիւն. այսինքն տունս և տեղս: Այս և եկեղեցի ետ շինել գեղեցիկ և վայելուչ Հայ ազգին անուան վրայ, զի հաստատեցին անդ յազգաց յազգս և որդեց որդիս: Այսքան առ այս և Աստուծոյ մարդասիրին փառք յախտեան. ամէն»¹⁷:

Ավելի ուշ Յան Չամոշչիկին հատուկ հրովարտակներով հրավիրել է նաև սեֆարդ հրեաներին (1588 թ.) և հույներին (1589 թ.): Այսպիսով՝ քաղաքը վերածվել է խոշոր առևտրային կենտրոնի, որտեղ վերոնշյալ ազգերից բացի՝ ապրում էին գերմանացիներ, ռուսիններ, շոտլանդացիներ, իտալացիներ, իսպանացիներ և այլք:

Հայտնի է, որ 1591 թ. Չամոշչում այլազգիներին պատկանող 44 տներից 19-ը հայերինն էին¹⁸, իսկ 1669 թ. նրանք արդեն ունեին 29 տուն¹⁹:

ԺԷ դարի առաջին կեսին՝ համայնքի ծաղկում շրջանում, հայերի թիվը հասնում էր մոտ 300-ի²⁰: Սակայն նույն դարի երկրորդ կեսից սկսած՝ աստի-

13 https://pl.wikipedia.org/wiki/Kościół_św._Mikołaja_w_Zamościu

14 <https://en.wikipedia.org/wiki/Zamość>

15 https://pl.wikipedia.org/wiki/Synagoga_w_Zamościu

16 **Kondraciuk P.**, Sztuka ormiańska w Zamościu, “Ars Armeniaca: Sztuka ormiańska ze zbiorów polskich i ukraińskich, Zamość”, 2010, էջ 11:

17 **Ալիշան Ղ.**, Կամենից. տարեգիրք հայոց Լեհաստանի եւ Ռուսիայի, Վենետիկ-Մուրք Գազար, 1896, էջ 54-55:

18 **Szyszka B.**, Zamojscy Ormianie, “Zamojski Kwartalnik Kultu-ralny”, nr 1, 1998, էջ 60:

19 **Zakrzewska-Dubasowa M.**, Organizacja gminy ormiańskiej w Zamościu w XVI-XVII wieku, “Rocznik Lubelski”, t. 3, 1960, էջ 67:

20 **Szyszka B.**, նշվ. հոդվ., էջ 60:

ճանաբար նվազում է: 1678 թ. ապրում էր ընդամենը 90 հայ (քաղաքի ընդհանուր՝ 1257 բնակչից)²¹, իսկ 1738 թ.՝ հազիվ 10 շունչ:

Չամոռչահայերը հիմնականում զբաղվում էին առևտրով և արհեստներով:

Հայտնի է, որ քաղաքի հիմնադիրը հայերին տվել է մի շարք արտոնություններ և 20 տարի ժամկետով ազատել հարկերից²²: Մուրադ Յակոբովիչը ստացել է արևելյան գորգերի և սելի առևտրի մենաշնորհը: Հայ վաճառականների ձեռքում էր կենտրոնացել Մոլդովայի, Օսմանյան կայսրության և Պարսկաստանի հետ առևտուրը: Սակայն նրանց առևտրային գործունեությունը չի սահմանափակվել վերոնշյալ երկրներով և ծավալվել է դեպի արևմուտք՝ մինչև Պորտուգալիա, իսկ արևելքում՝ մինչև Չինաստան: Նրանք արևելքից ներկրել են գորգեր, ոսկերչական և կաշվե իրեր, բարձրարժեք կտորեղեն ու գործվածքներ, գոտիներ, մետաղյա զենքեր, թանկարժեք քարեր, արևելյան համեմունքներ և այլն:

1651 թ. դրությամբ հայ վաճառականները քաղաքին վճարում էին 1700 լեհական ոսկի հարկ, այնքան, որքան գերմանացիները և շոտլանդացիները միասին վերցրած, իսկ լեհերը և հույները միասին՝ ընդամենը 1000 ոսկի²³:

1669 թ. 29 տուն հայերը վճարում էին քաղաքային հարկերի մոտ 20%-ը²⁴: Ամենահարուստ հայ վաճառական Աբրահամ Կիրկորովիչը ժառանգություն էր թողել 900.000 լեհական ոսկի արժողության ունեցվածք²⁵:

Հայերը մեծ դեր ունեին Չամոռչում արհեստների զարգացման գործում: 1589 թ. հրովարտակով Յան Չամոռչսկին արտոնել է հայերին զբաղվել գինու, մեղրի, օդու և գարեջրի արտադրությամբ և վաճառքով²⁶: ԺԷ դարի վերջին Մուրադ Յակոբովիչը քաղաքում հիմնել է արևելյան գորգերի, իսկ Էլիաշ Քիստեստերովիչը՝ կազմակերպել գարեջրի արտադրություն: Վերջինիս ինքնակենսագրականից տեղեկանում ենք, որ Չամոռչում նա ամուսնացել է հայ համայնքի ավագանու անդամ Չախարիաշ Բրովարի դստեր՝ Եվայի հետ²⁷: Բրովար (browar) լեհերեն նշանակում է գարեջրի գործարան, ինչից կարելի է եզրակացնել, որ Չախարիաշը Չամոռչում հեղինակավոր գարեջրագործ էր: Հետաքրքրական փաստ է, որ 1766 թ. Չամոռչի քահանա Կայետան Կոսսան 720 լեհական ոսկով վաճառել է

հայոց եկեղեցուն պատկանող գարեջրի գործարանը²⁸:

Մեծ հռչակ էին վայելում նաև հայ ոսկերիչները: ԺԷ դարի սկզբում Չամոռչում հիշատակվում են երեքը՝ Յակոբ, Ստանիսլավ և Քշիշտոֆ, որոնց ձեռքում էր կենտրոնացած ոսկերչությունը²⁹: Նույն դարի վերջին հիշվում է հայազգի ոսկերիչ Յատուլովիչը³⁰:

Շնորհիվ արևելյան լեզուների իմացության՝ հայերը նաև հմուտ թարգմանիչներ և դիվանագետներ էին: Հայտնի է, որ Չամոռչի ակադեմիայի պրոֆեսոր Յան Իվաչկևիչը եղել է քաղաքի տիրակալ իշխան Թոմաշ Չամոռչսկու թուրքերենի ուսուցիչը³¹:

Լեհական իշխանություններին դիվանագիտական ծառայություններ են մատուցել զամոռչաբնակ Միկոլայ Հաջիևովիչը, Բոգդան Վարթերեստովիչը և Կասպեր Սինանովիչ-Շիմանսկին, ովքեր բանակցություններ են վարել Ղրիմի թաթարների և կալմիկների հետ³²: Հայազգի վոյթ (համայնքապետ) Միկոլայ Հաջիևովիչը պետությանը մատուցած ծառայությունների համար 1654 թ. Սեյմի կողմից ստացել է ազնվականի տիտղոս³³, իսկ Կասպեր Սինանովիչ-Շիմանսկուն այն շնորհելու համար լեհաց թագավորին միջնորդագիր է հղել Ղրիմի մեծ վեզիր Սեֆեր Ղազի ադան³⁴:

Քաղաքի հայ բնակչության ազդեցիկ ազգատոհմերից էին Կիրկորովիչները, Քշիշտոֆովիչները, Արևովիչները, Բալեյովիչները, Առաքելովիչները, Թաթուլովիչները, Բարտոշիչները, Ալթունովիչները, Օվանիշովիչները, Թորիաշովիչները, Սալավելովիչները, Յակոբովիչները, Դերբերոստովիչները, Իվաչկևիչները, Քիստեստերովիչները, Թումանովիչները, Ֆարուխովիչները, Թորոսիչները, Յատուլովիչները, Գրեհորովիչները, Բունիաթովիչները, Սեֆերովիչները, Սինանովիչները, Սկինդերովիչները, Ասվադուրովիչները, Սերիկովիչները, Մեգերոյիչովիչները, Դովլատովիչները, Հեթումովիչները, Պազիումովիչները և այլք:

Հայ համայնքի աստիճանական անկումն առաջին հերթին պայմանավորված էր ուժացմամբ, որը խորացել է ԺԷ դարի երկրորդ կեսին հայ կաթողիկե հավատքի ընդունմամբ, իսկ ահա ԺԸ դարում Չամոռչի հայոց վերնախավն աստիճանական անցում է կատարել լատին կաթոլիկ դավանանքի՝ համալրելով անգամ կաթոլիկ բարձրաստիճան հոգևորականության շարքերը: Վերջիններից կարելի է հիշա-

21 **Zakrzewska-Dubasowa M.**, նշվ. հոդվ., էջ 80:

22 **Barącz S.**, Rys dziejów ormiańskich, Tarnopol, 1869, էջ 177:

23 **Zakrzewska-Dubasowa M.**, նշվ. հոդվ., էջ 67:

24 Նույն տեղում:

25 **Закревска-Дубасова М.**, Из истории армянской общины в Замостье (Ormianie w dawnej Polsce), "Анив", 2010, № 6 (33), էջ 63:

26 **Sochaniewicz K.**, Trybunał Zamojski, Zamość, 1929, էջ 24:

27 **Закревска-Дубасова М.**, նշվ. հոդվ., "Анив", № 34, էջ 13-14:

28 **Janusz B.**, "Mons Pius" Ormian lwowskich, Lwów, 1928, էջ 36:

29 **Kondraciuk P.**, նշվ. հոդվ., էջ 13-14:

30 **Закревска-Дубасова М.**, նշվ. հոդվ., "Анив", № 34, էջ 8:

31 **Szyszka B.**, նշվ. հոդվ., էջ 62:

32 **Wróbel-Lipowa K.**, Działalność dyplomatyczna Ormian polskich w XVI-XVII w., Studia z dziejów kontaktów polsko-ormiańskich, Lublin, 1983, էջ 112:

33 **Korwin L.**, Ormiańskie rody szlacheckie, Kraków, 1934, էջ 85:

34 **Дашкевич Я.**, Вірмени в Україні: дорогами тисячоліття., Львів, 2012, էջ 247:

տակել Յակոբ Առաքելովիչին և Կայետան Դերբեդրոսովիչին, որոնց նախնիները եղել են հայ համայնքի ղեկավարներ և ավագանիներ: Որոշ ազդեցիկ ընտանիքներ՝ Հաջիևովիչներ, Առաքելովիչներ, Օվանիշովիչներ, համարել են լեհական ազնվականության շարքերը³⁵ աստճանաբար հեռանալով հայկական արմատներից:

Տնտեսական առումով համայնքի համար կործանարար էին ԺԸ դարում հրեական համայնքի հզորացումը և առևտրի ոլորտից հայ վաճառականների դուրս մղումը:

1760 թ. Չամոշչի ութերորդ օրդինատ Կլիմենս Չամոյսկին փորձում է վերականգնել հայկական համայնքը և հրովարտակ տարածում՝ նշելով, որ այստեղ հայերն ունեն եկեղեցի, հոգևորական և քաղաքի հիմնադրի կողմից տրված իրավունքներ և արտոնություններ, որոնք կմնան անփոփոխ քաղաքում հաստատվել ցանկացողների համար: Բացի այդ՝ նա խոստանում է 2 տարով հայերին ազատել բոլոր տեսակի հարկերից, նրանց ընձեռել առաջնայնության իրավունք՝ հրապարակներում տարածքներ, հրեաներից տներ ձեռք բերելու համար, ինչպես նաև հաշվի առնելով հրեա վաճառականների գերիշխող դերը Չամոշչում՝ վերջիններիս արգելել զբաղվել այն ապրանքների վաճառքով, որոնցով կզբաղվեն հայերը³⁶:

Կլիմենս Չամոյսկու ջանքերը, սակայն, շոշափելի արդյունքի չեն հասնում, և ԺԸ դարի վերջին հայերը գրեթե ամբողջությամբ ուժացման են ենթարկվում:

Լեհահայ համայնքի նշանավոր հետազոտող Մադոկ Բարոնչը նշում է, որ 1784 թ. Չամոշչում հայեր գրեթե չկային³⁷:

Հայր Սինաս Բժշկյանցն իր «Ճանապարհորդություն ի Լեհաստան...» գրքում գրում է. «Յառաջագոյն բազում էին աստ Հայք երևելի վաճառականք, որք ունէին պարզևագիրս յարքայէն Լեհաց և զազատութիւնս սակս վաճառաց. որպէս բերէ ԺԴ երորդ գլոխն պարզևագիրն Ռաշքովայ զայս օրինակ. Ինչպէս Չամոսցեայ քաղաքին հայերն ունին բրավան, որ բովանդակ Լեհաց հողին վրա գնալով ապրանքով գփրայական և գրժէբութիւնային միթան հիչ չիտան...: Մակայն այժմ չիք անդ Հայ...»³⁸:

Ավելի ուշ Արշակ Ալթունյանն արձանագրում է հետևյալը. «Հնո եթե ազգաբանական հետազոտութիւն մ'ըլլայ, թերևս 100 ընտանիքի չափ Հայ կելնէ, բայց օտարաց հետ խնամութեամբ խառնուած և հետևարար կորսուածի պէս են: Ճամբորդ մը եթէ

անգամ մը ասոնց դէմքի գծագրութիւնը տեսնէ, իսկոյն կիմանայ թէ Հայու դէմք է»³⁹:

Չամոշչի համայնքի ամենաձաղկուն շրջանում գրված Սիմեոն դպիր Չամոստացու ողբը Լեհաստանի զաղթօջախների կործանման մասին մեկ դար անց արդեն լիովին վերաբերում էր հենց իր հայրենի քաղաքին. «Են եւ այլ հին քաղաքնի հին, յորս կային Հայք, որպէս Պելգայ, Վիլնայ, Վոլոսիմիր եւ այլ գեղօրայքն որ բնաջինջ են եղեն. միայն նշմարանքն կերևին. եւ թէ վասն էր, ոչ գիտեմ. կարծեմ թէ վասն մեղաց կամ նգովից սուրբ հարց. զի ամէն ազգ աճեն եւ բազմանան. իսկ մեք ջնջիմք եւ նուազիմք. վայ ինձ»⁴⁰:

Ինքնավարություն. լեհական հայաշատ այլ քաղաքների մնամությանը Չամոշչի հայերը նույնպես ունեին լայն ինքնավարություն՝ հիմնված Մագդեբուրգյան իրավունքի վրա: Համապատասխան հրովարտակը Յան Չամոյսկին ստորագրել է 1589 թ. հունվարի 9-ին, ընդ որում, հիմք է ընդունվել Կամենեց-Պոդոլսկու հայ համայնքի ինքնավարության մոդելը⁴¹, որն ավելի ընդարձակ իրավունքներ էր ընձեռում, քան Լվովյանը:

Համայնքը ղեկավարվում էր հայազգի վոյթի և լավնիկների (ավագանու) կողմից, որոնց թիվը կազմում էր 3-10 հոգի: Ի տարբերություն Կամենեցի և Լվովի, այստեղ բացակայում էր քառասուն կտրիճաց միությունների ինստիտուտը, և քաղաքի իշխանի պատվիրակների ներկայությամբ վոյթն ընտրվում էր ժողովրդի կողմից: Այն տեղի էր ունենում յուրաքանչյուր տարի՝ մեծ պահքի առաջին ուրբաթ օրը, գործող վոյթի տանը⁴²: Ըստ Հայկական ստատուտի՝ նա հանդիսավոր երդվում էր համուն ամենակարող հայր Աստծո, որդի Աստծո, Սուրբ Հոգու, սուրբ կույս Աստվածածնի, հոգևոր հայր սուրբ Գրիգոր Լուսավորչի և մյուս սրբերի հնազանդ լինել քաղաքի իշխանին, նրա ժառանգներին և եպիսկոպոսին կամ հոգևոր հովիվին, խոստանում հավատարիմ լինել համայնքին, պահպանել և զարգացնել այն, հրամաններ արձակել՝ համաձայն խղճի, առանց կաշառքի և մարդկանց արժևորելով, իսկ եթե դրժեր երդումը, թող պատժվեր Քրիստոսի չարչարանքներով այս և գալիք կյանքում⁴³:

Շնորհիվ Երուսաղեմի Սբ. Հակոբյանց վանքի մատենադարանում պահվող մի ձեռագրում Չամոշչի հայ քահանա տեր Հակոբի կողմից 1600 թ.

35 Korwin L., նշվ. աշխ., էջ 85, 61, 139:

36 Закревска-Дубасова М., նշվ. աշխ., "Анив", № 32, էջ 15:

37 Barącz S., Rys dziejów..., էջ 178:

38 Բժշկյանց Ս., Ճանապարհորդություն ի Լեհաստան և յայլ կողմանս բնակեալս ի Հայկազանց սերելոց ի նախնեաց Անի քաղաքին, Վենետիկ-Սուրբ Ղազար, 1830, էջ 126-127:

39 Ալթունյան Ա., Տեղեկագրութիւն հայոց զաղթականութեան, որք ի Սոլոնո-Վալաքիա, Հունգարիա եւ ի Լեհաստան, Ֆօքշան, 1877, էջ 135:

40 Սիմեոն Լեհացի, Ուղեգրություն, ձեռագիր, Վարշավայի ազգային գրադարան, <https://polona.pl/item/13306353/0/>: Տես նաև Սիմեոն դպիր Լեհացույ Ուղեգրութիւն, Վիեննա, 1936, էջ 348:

41 Zakrzewska-Dubasowa M., նշվ. հոդվ., էջ 67:

42 Նշվ. հոդվ., էջ 70:

43 Barącz S., Rys dziejów..., էջ 261:

գրված հիշատակարանի՝ հայտնի է քաղաքի առաջին հայ վոյքի անունը. «Ձոր եւ հայցենք արտատառքոր մադթանօք յամենից արարչէն, զի յամենայն ժամ զօրացուցէ զսա (Յան Չամոյսկու-Ս.Վ.) ընդդէմ թշնամեացն, եւ զժամանակս կենացն յերկարեսցէ, զի սէր ոչ սակաւ ունի ընդ ազգիս Հայոց, որ եւ դատաւորս կարգեաց ի յազգէս Հայոց, եւ եղև առաջին դատաւոր ի վերայ Հայոց Պր. Աղէկսանդրոս, Պր. Խաչերեսի որդի, այր իմաստուն և հանճարեղ, իրաւադատ եւ երկայնամիտ առ դատապարտեալս, որ եւ զսա ընդ երկայն ատուրս արասցէ Ած. ամէն»⁴⁴:

1602 թ. Չախնո սարկավագի ընդօրինակած Կանոնագրքում նույն Հակոբ երեցի թողած հիշատակարանում հանդիպում է Չամոչչի Էսան պեյ դատավորի անունը. «...ի թուականիս հայկազանունի ՌՃԱ (1602) ամի, ի ժամանակս հայրապետութեանն Հայոց երից երանեալ և առաքելաշնորհ տեառն տէր Գալիթ կաթողիկոսին, և թագաւորութեանն Իլախաց Չիկմունդի Երրորդի, և զօրագլուխ թագաւորութեանն Իլախաց քաջ սպարապետին և աստուածասէր զարավարին պարոն Յովհաննէսին, որ ըստ իւրեանց լեզուի կոչի բան Եան, և դատաւորութեանն պարոն Էսան պեյին, սորին իսկ ստացողի...»⁴⁵:

Կարծում ենք, որ Էսանը պարզապես Աղէկսանդրոսի կրճատ անվանաձևն է, ուստի վերոնշյալ հիշատակարաններում խոսքը նույն մարդու մասին է, որն ինքնավարության կազմավորման առաջին տարիներին ղեկավարում էր համայնքը: Կանոնագրքի հիշատակարանում թվարկվում են նաև պարոն Էսան պեյի ընտանիքի անդամները՝ հայրը՝ պարոն Խաչերեսը, մայրը՝ Մելիքխաթունը, եղբայրը՝ պարոն Ստեփանոսը, քույրերը՝ Կուլաֆ և Յաղուդ խաթունները, կինը՝ պանի Օլովսան (որ է Հեղինե), և դուստրը՝ միամոր նորահաս օրիորդ պաննա Միլուշան: Ալեքսանդր Քշիշտոֆովիչ անուն-ազգանունով նա 1626-29 թթ. հիշատակվում է հայկական դատարանի մատյանում որպես Չամոչչի տրիբունալի ղեկուսատա և ավագանու անդամ⁴⁶:

Հաջորդ հիշատակումը Չամոչչի հայազգի վոյքի մասին վերաբերում է Թորքիաշ Բոզդանովիչին, որը ղեկավարել է համայնքը 1608 թ.⁴⁷: Առավել հայտնի հայ վոյքերից են եղել բազմիցս ընտրված Գաբրիել Արևովիչը, Վարթերես Կիրկորովիչը, Քշիշտոֆ և Վարթերես Բալեյովիչները, Միկոլայ

Հաջիևովիչը, Օբսենտի Օվանիշևիչը, Ստեֆան Ալթունովիչը և Չախարիաշ Առաքելովիչը⁴⁸:

Համայնքն ուներ սեփական զինանշանը և կնիքը, որի վրա պատկերված էր Հովհաննես Մկրտիչը, նրանից աջ՝ վահան, ձախից՝ գառնուկ՝ գլուխը դեպի աջ դարձրած: Այն շրջանաձև երիզված է եղել հայերեն գրությամբ. «Այս է մ[ո]խը Չամոսցա[յ]ին հայոց դատաստանի»⁴⁹:

Վոյքը և ավագանին առաջին հերթին իրականացնում էին դատարանի գործառույթը, որը գործում էր 1519 թ. Ջիզմունդ Ա թագավորի կողմից



Չամոչչի հայկական դատարանի կնիքը

հաստատված Հայկական ստատուտի⁵⁰ համաձայն՝ կազմված Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» հիման վրա: Հետաքրքրական է, որ իշխանական Չամոչչում հայոց դատարանի իրավասություններն ավելի լայն էին, քան թագավորական Լվովում: Մասնավորապես այն իրավունք ուներ վճիռներ ընդունել ոչ միայն քաղաքացիական, այլև քրեական գործերով: Բացի այդ՝ իրավասու էր դատել նաև հայերի հետ դատական վեճ ունեցող այլազգիներին (լեհեր, ռուսիներ, հրեաներ և այլն) և ոչ լեհահպատակ հայերին, մինչդեռ լեհական դատարանը իրավասու չէր դատել հայերին⁵¹:

Այն փաստորեն առաջին ատյանի դատարան էր, որի որոշումները կարող էին բողոքարկել քաղաքի իշխանի մոտ, իսկ 1604 թ.-ից՝ Չամոչչի տրիբունալում⁵² (բարձրագույն վերաքննիչ դատարան), որտեղ հայ համայնքն ուներ իր ներկայացուցիչը՝ լեհազգի դատավորների հետ հավասար իրավասություններ ունեցող ղեկուսատա: Այս պաշտոնը նույնպես ընտրովի էր: Ընտրությունը տեղի էր ունե-

44 Պողոթան Ն., Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 3, Յերուսաղէմ, 1968, էջ 343:

45 Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Ա, Երևան, 1974, էջ 76-77 (այսուհետ՝ ԺԷԱ, համապատասխան էջերով):

46 Księga wójtowski-jawnicza prawa uprzywilejowanego ormiańskiego (1626-1649) 35/61/0/2/64, Archiwum Państwowe w Lublinie, էջ 7:

47 Zakrzewska-Dubasowa M., նշվ. հոդվ., էջ 73:

48 Նշվ. հոդվ., էջ 80-82:

49 Дашкевич Я., նշվ. աշխ., էջ 945:

50 Barącz S., Rys dziejów..., էջ 205-264:

51 Закревска-Дубасова М., նշվ. հոդվ., "Анив", № 33, էջ 69-71:

52 Sochaniewicz K., նշվ. աշխ., էջ 13, 24:

նում ավագանու հետ միասին, իսկ շատ դեպքերում համատեղվում էր վոյթի կողմից⁵³:

Համայնքում կարևոր դերակատարում ունեին նաև տնտեսավարները, որոնք ընտրվում էին ավագանու կողմից ժողովրդի ներկայությամբ: Ընդ որում, նրանցից մեկն ընտրվում էր ավագանու անդամներից, իսկ մյուսը՝ ժողովրդի միջից: Պատասխանատվություն էին կրում համայնքի գույքի, ֆինանսական միջոցների ու հարկերի հավաքագրման և պահպանման համար⁵⁴:

Հաջորդ կարևոր պաշտոնյան գրագիրն էր⁵⁵, որն իրականացնում էր համայնքի և դատարանի ներքին ու արտաքին գրագրությունը լեհերենով:

Եկեղեցու ունեցվածքի և եկամուտների համար պատասխանատու էին երկու երեսփոխանները: Այդ պաշտոնը հիմնականում զբաղեցնում էին վոյթը և ավագանիներից մեկը, սակայն որոշ դեպքերում նշանակվում էին հոգևոր իշխանության Լվովի հայոց արքեպիսկոպոսի կողմից⁵⁶:

Աշխարհիկ դատարանից բացի՝ գործում էր նաև հոգևոր դատարանը, որը կոչվում էր Խուց⁵⁷: Այստեղ հիմնականում քննվում էին ամուսնական, ծիսական և եկեղեցական ոլորտի գործեր: Երեսփոխան և Խուց եզրույթների կիրառումը փաստում է այդ ինստիտուտների հայկական ծագման մասին:

Դատարանում քննվող գործերի ուսումնասիրությունը վկայում է հայերի իրավագիտության բարձր մակարդակի մասին: Դրանք վերաբերում էին ոչ միայն առևտրային գործարքներին, այլև ամուսնական պայմանագրերին, ժառանգության բաշխմանը, քրեական հանցագործություններին և այլն:

Հայկական ինքնավար մարմինները և դատարանը դադարում են գործել 1738 թ.՝ համաձայն Չամոշի յոթերորդ օրդինատ Թոմաշ Անթոնի Չամոյսկու հրամանագրի⁵⁸, որի համար հիմք է ծառայել քաղաքում հայ բնակիչների չնչին քանակը՝ 10 հոգուց պակաս:

Կրթություն, գիտություն և գրականություն. Ինչպես արդեն նշել ենք, քաղաքին մեծ հռչակ է բերել ակադեմիան, որը հիմնադրվել է 1594 թ. և գործել մինչև 1784 թ.⁵⁹: Համահիմնադիրն էր բանասեր, բժիշկ և պոետ Շիմոն Շիմոնովիչը (1558-1629), որն ուներ հայկական արմատներ⁶⁰: Ստեղծագործել է լեհերեն և լատիներեն, բազում պոեմների, դրամաների, պիեսների և բանաստեղծությունների հեղի-



Շիմոն Շիմոնովիչը և Ակադեմիայի շենքը Չամոնչում

նակ է: «Հովվերգություններ» (Sielanki) շարքի շնորհիվ համարվում է լեհական Պիմոնարուր: 1590 թ. լեհաց Զիգմունդ III թագավորից ստացել է արքայական պոետ տիտղոսը և Բենդոնսկի ազնվական ազգանունը: Շիմոնովիչը Յան Չամոյսկու անձնական քարտուղարն էր և ժառանգի՝ Թոմաշի դաստիարակն ու ուսուցիչը⁶¹: Ողջ ունեցվածքը՝ շուրջ 12.000 լեհական ոսկի, կտակել է ակադեմիային⁶²:

Հենց Շիմոնովիչին է վստահվել ակադեմիայի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընտրությունը, որոնք նրա մերձավոր ազգակիցները, գաղափարակիցները և աշակերտներն էին: Այսպես, առաջին ռեկտորը՝ 1595-97 թթ., փիլիսոփա և աստվածաբան Մելխիոր Ստեֆանիոյիս-Ստեֆանովիչն⁶³ (1563-1638) էր, որը նույնպես ուներ հայկական ծագում⁶⁴: Ուսանել է Կրակովի համալսարա-

53 Księga wójtowski-ławnicza prawa uprzywilejowanego ormińskiego (1626-1649) 35/61/0/2/64, Archiwum Państwowe w Lublinie:

54 Zakrzewska-Dubasowa M., նշվ. հոդվ., էջ 76:

55 Barącz S., Rys dziejów..., էջ 261:

56 Zakrzewska-Dubasowa M., նշվ. հոդվ., էջ 77:

57 Barącz S., Rys dziejów..., էջ 261:

58 Szyszka B., նշվ. հոդվ., էջ 62:

59 Kochanowski J., Dzieje Akademii Zamojskiej (1594-1784), Kraków, 1899-1900.

60 Barącz S., Żywoty sławnych Ormian w Polsce, Lwów, 1856, էջ 310:

61 Kochanowski J., նշվ. աշխ., էջ 50:

62 Barącz S., Żywoty sławnych..., էջ 313:

63 Kochanowski J., նշվ. աշխ., էջ 29:

64 Barącz S., Żywoty sławnych..., էջ 289:

նում՝ 1593 թ. ստանալով փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան: Որպես կաթողիկ հոգևորական՝ 1621 թ. ստանձնել է Ջամոշի կապիտուլիայի սխոլաստիկի պաշտոնը և համակարգել ակադեմիայի աշխատանքները: 1632 թ. ռեկտոր Կասպեր Շուլցի հետ իրականացրել է ուսումնական գործընթացի արմատական բարեփոխումներ՝ խրախուսելով դասախոսների և ուսանողների միջև բանավեճերը⁶⁵: Ներկայումս նրա անունն է կրում Ջամոշի հին քաղաքի հյուսիսային մասում գտնվող հրապարակը:

Երկրորդ ռեկտորն ականավոր փիլիսոփա Ադամ Բուրսկին⁶⁶ (1560-1611) էր՝ Շիմոն Շիմոնովիչի հորաքրոջ՝ Բարբարա Շիմոնովիչի որդին⁶⁷: Ծնվել է Բերեժանիում, ուսում ստացել Լվովի հոգևոր դպրոցում և Կրակովի համալսարանում: 1597 թ.-ից Ջամոշի ակադեմիայում դասավանդել է տրամաբանություն, մեկ տարի անց ընտրվել ռեկտոր, իսկ հետո՝ բազմիցս վերընտրվել⁶⁸:

Ակադեմիայի հետագա զարգացման գործում որոշիչ դեր է ունեցել երկարամյա (1616-32 թթ. ընտրվել է ութ անգամ) ռեկտոր բժիշկ Կասպեր Շուլց-Մուլսկին⁶⁹ (1580-1653)՝ Շիմոնովիչի քրոջ՝ Քրիստինա Շիմոնովիչի որդին⁷⁰: Ծնողների վաղաժամ մահից հետո Կասպեր Շուլցի խնամատարությունն իր վրա է վերցրել մորեղբայրը՝ հետևելով, որ նա ստանա փայլուն կրթություն: Նախապես սովորելով Լվովում՝ ուսումը շարունակել է Կրակովի համալսարանում: 1612-16 թթ. ուսանել է Պարոլայի համալսարանում և ստացել բժշկության և փիլիսոփայության դոկտորի աստիճաններ⁷¹: Վերադառնալով Լեհաստան՝ 1616 թ. ստանձնել է ակադեմիայի պրոֆեսորի պաշտոնը և ընտրվել ռեկտոր: Ջամոշյակների ընտանեկան բժիշկն էր: 1639 թ. ձեռնամուխ է եղել ակադեմիայի նոր շենքի կառուցմանը, որը կանգուն է մինչ այժմ⁷²: Մորեղբոր նման գրեթե ողջ ունեցվածքը՝ 30.000 լեհական ոսկի, կտակել է ակադեմիային⁷³: Թաղվել է Ջամոշի մայր տաճարում՝ մորեղբոր կողքին⁷⁴: Յավոք, նրա տապանագիրը չի պահպանվել:

ԺԸ դարի սկզբին ակադեմիայի երկարամյա ռեկտորն էր հայազգի Յակոբ Պասխալիս Առաքելովիչը⁷⁵, հայազգի վոյթ և քաղաքի տարեգիր Ջա-

լարիաշ Առաքելովիչի որդին: Ուսանել է Կրակովի ակադեմիայում՝ ստանալով փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան: 1710 թ.-ից դասավանդել է Ջամոշի ակադեմիայում, 1715 թ.-ից փիլիսոփայության ֆակուլտետի ղեկավարն էր: 1716-24 թթ. 5 անգամ ընտրվել է ռեկտոր⁷⁶, իսկ 1735 թ.-ից Ջամոշի տասնմեկերորդ ինֆուլատն էր⁷⁷ (առաքելական պրոտոնոտարիուս)՝ պաշտոնավարելով մինչև մահը՝ 1739 թ.:

Ակադեմիայում ուսումնական գործընթացը կազմակերպվել է հետևյալ մասնագիտություններով՝ փիլիսոփայություն, իրավունք, բժշկություն և աստվածաբանություն⁷⁸:

Բազում էին հայազգի ուսանողները և դասախոսները: Առաջին շրջանավարտներից էր հայազգի Ստանիսլավ Աբրահամովիչը⁷⁹: Ակադեմիայի հայազգի պրոֆեսորներից կարելի է հիշատակել Յան Իվաշկևիչին⁸⁰, Քշիշտոֆ Օվանիշովիչին⁸¹, Յան Բարտոշևիչին⁸², Յան և Կայետան Ավեդիկներին⁸³ և Միկոլայ Յան Մանուգևիչին⁸⁴: Յան Բարտոշևիչի պարագայում դոկտորի աստիճանի ստացումը եղել է նրա և Մարիանա Օվանիշովիչի ամուսնական պայմանագրի բաղկացուցիչ մասը, որի կատարման համար որպես երաշխիք աներոջն է հանձնել 200 լեհական ոսկի գրավ⁸⁵:

Շիմոնովիչի մյուս կարևոր գործն ակադեմիայի տպարանի հիմնումն է, որի ղեկավարման աշխատանքները ստանձնել է Ադամ Բուրսկին: Այն խոշորագույններից էր Ռեչ Պոսպոլիտայում, և ԺԸ դարում այստեղ է տպագրվել երկրի ամբողջ տպագրական նյութերի շուրջ 70%-ը: Յավոք, տպարանը նույնպես փակվել է ավստրիական իշխանությունների կողմից 1784 թ.:

Հիմնականում Շիմոնովիչի խոշոր նվիրատվության (1428 կտոր գիրք⁸⁶) շնորհիվ է ստեղծվել նաև ակադեմիայի գրադարանը: Ավելի ուշ նրա օրինակին են հետևել Մելիխոր Ստեֆանիդեալը, Ադամ Բուրսկին, Կասպեր Շուլցը և մյուսները: Գրադարանի հարստացմանը մեծապես նպաստել է ակադեմիական տպարանի գործունեությունը: ԺԺ դարի սկզբին գրադարանի ֆոնդը կազմում էր մոտ 9.000 կտոր գիրք, սակայն ակադեմիայի փակման պատճառով դրանց հիմնական մասը 1811 թ. տեղափոխվել է Վարշավայի Ջամոշյակների օրդինա-

65 Kochanowski J., նշվ. աշխ., էջ 88:

66 Նշվ. աշխ., էջ 29:

67 Minakowski M., Genealogia Potomków Sejmu Wielkiego, <http://www.sejm-wielki.pl/>

68 Kędziora A., նշվ. աշխ., <http://zamosciopedia.pl/>

69 Kochanowski J., նշվ. աշխ., էջ 63:

70 Minakowski M., Genealogia Potomków Sejmu Wielkiego, <http://www.sejm-wielki.pl/>

71 Kasper Scholz, Internetowy Polski Słownik Biograficzny, <http://ipsb.nina.gov.pl/>

72 Kasper Scholz. <http://ipsb.nina.gov.pl/>

73 Kochanowski J., նշվ. աշխ., էջ 111, 122:

74 Kasper Scholz. <http://ipsb.nina.gov.pl/>

75 Kochanowski J., նշվ. աշխ., էջ 226:

76 Kędziora A., նշվ. աշխ., <http://zamosciopedia.pl/>

77 Barącz S., Żywoty sławnych..., էջ 29:

78 Kochanowski J., նշվ. աշխ., էջ 107:

79 Նշվ. աշխ., էջ 28, 32:

80 Szyszka B., նշվ. հոդվ., էջ 62:

81 Kochanowski J., նշվ. աշխ., էջ 208:

82 Նշվ. աշխ., էջ XXV:

83 Նշվ. աշխ., էջ 275:

84 Նշվ. աշխ., էջ 326:

85 Закревска-Дубасова М., նշվ. հոդվ., "Анив", № 34, էջ 12:

86 Kochanowski J., նշվ. աշխ., էջ 86:

ցիայի գրադարան⁸⁷: Վերջինս գործում էր մինչև Երկրորդ աշխարհամարտը: 1939 և 1944 թթ. խոշոր հրդեհների պատճառով 120.000 կտոր գրքից պահպանվել են միայն 1800-ը, որոնց թվում՝ Շ. Շիմոնովիչի ֆունդի մեծ մասը, որոնք ներկայումս պահվում են Վարշավայի ազգային գրադարանում⁸⁸:

ԺԷ դարում Չամոնչի հայ համայնքի գիտակրթական և մշակութային կարևորագույն կենտրոն էին եկեղեցին և նրան կից գրչատունը, որտեղ ընդօրինակվել են եկեղեցական գրքեր, կատարվել թարգմանություններ, ստեղծվել գրական երկեր:

Առաջինը պետք է հիշատակել ականավոր ողբասաց, թարգմանիչ և գրիչ Հակոբ երեց Թոխաթեցուն: Ն. Ալիմյանը «Հինգ պանդուխտ տաղասացներ» աշխատության մեջ նրան տալիս է հետևյալ գնահատականը. «...անհիկա մեր գրականության նոր շրջանի ամենն արդիւնատր դեմքերէն մին եղած է, թէ իբրեւ երգիչ եւ թէ իբրեւ թարգմանիչ»⁸⁹:

Իր իսկ թողած հիշատակարանից տեղեկանում ենք, որ ծնվել է Թոխաթում, որդին է Ալթունի և Աննայի, ամուսնացել է Յաղուդի հետ և ունեցել չորս որդի՝ Գրիգոր, Ստեփանոս, Հովհաննես, Աստվածատուր, և երեք դուստր՝ Աննա, Մարիամ, Շուշան⁹⁰: Ուսումը ստացել է հայրենի քաղաքում՝ տեր Հակոբ Այվաթեցի քահանայի մոտ: «Եօթն իմաստասիրաց պատմութիւն» գրքում առկա է հետևյալ հիշատակությունը. «Ես՝ Յակոբ երեցս Թոխաթցի, որ եմ բռնանց Բաբուլէնց, թարգմանեցի զգեղեցիկ պատմութիւնս ի լաթինական գրոց ի հայ գիր, ի խնդրոյ վարժալսէտին իմոյ Թոխաթցի տէր Յակոբին, որ ասեն Այվաթեց, թվին ՌԿԳ (1614) փետրվարի ամսոյ ԺԳ (13), ի յերկիրն Լեհայ, ի քաղաքն Չամոսցայ»⁹¹:

Հակոբ Թոխաթեցու՝ Չամոնչում ծավալած գրչագրական գործունեության մասին առաջին պահպանված հիշատակարանը թվագրվում է 1595 թ., երբ նա դեռևս դպիր էր, իսկ վերջինը՝ 1638 թ.: Մեզ են հասել չափածո շուրջ 12 ստեղծագործություններ և եկեղեցական բազմաթիվ ձեռագիր գրքեր՝ «Ժողովածու. Մեկնութիւն Հնգամատենին և Ողբ ի վերայ Օլախաց երկրին» (1595 թ.)⁹², «Մատենագրութիւնք (Ս. Պատարագի խորհուրդ և մեկնությունը ըստ Ն. Լամբրոնացու)»⁹³ (1600 թ.), «Մեկնութիւն Հնգամատենին» (1603 թ.), Տաղարան (1605 թ.), Ճաշոց (1613 թ.), Ավետարան (1615 թ.), Հայսմավորք (1617 թ.), Մաշտոց (1638 թ.), որոնք

պահվում են Երևանի, Երուսաղեմի, Չամոնչի վանքի մատենադարաններում և Վիեննայի կայսերական գրադարանում:

Ստեփանոս Ռոշքան իր ժամանակագրության մեջ Հակոբ Թոխաթեցու «Մաղմուսարան տաղաչափեալ» (1627 թ.) երկի մասին գրել է. «Ռ-ՀՁ. Յակոբ քահանայ Եղովկիացի (Թոխաթեցի) եկեալ ի Լեհաստան պանդխտական՝ ի քաղաքն Չամոսցայ գալով, զբովանդակ 150 Մաղմուսն Դաւթի՝ գեղեցիկ և քաղցր ոճով մեկնօրէն ոտանաւորս արար. նա և զբազում խօսս Ս. Գրիգորի Նարեկացոյն՝ տաղաչափականս շարագրեաց, այլ և զգանազան տաղս վասն կենաց մարդկան և զղջման, և այլն, յայսմ ամի աւարտեաց. զայստսիկ զորս առ ձեռս ունին»⁹⁴:

Պատմագիտական առումով հատկապես արժեքավոր են նրա երկու ողբերը: Առաջինը՝ «Ողբ ի վերայ Օլախաց երկրին»⁹⁵, պատմում է 1595 թ. Մոլդովա երկրամասի հայերի կրած տառապանքների և ունեզրկման մասին, իսկ մյուս՝ «Տաղ և ողբանք ի վերայ Եղովկիա քաղաքին»⁹⁶ երկում նախ գովերգում է հայրենի քաղաքի փառքը, այնուհետև ողբում 1602 թ. գրավումը և ավերումը ջալալիների կողմից:

Չամոնչի գրչագրական դպրոցի ամենից ականավոր սանը, անկասկած, Սիմեոն Չամոստացին է (1584-1639 թթ.), որն առավել հայտնի է որպես Սիմեոն դպիր Լեհացի: «Ուղեգրությունում» իր մասին գրում է. «Սիմեոն անուն որդի Մարտիրոսի, ծնօղբն իմ բնական յերկրէն Հոնաց, ի տիրախմամ և աստուածապահ ծովահայեաց քաղաքէն Քաֆայու. պանտուխտ գալով եկեալ բնակեցան քրիստոնէից երկիրն ի գաւառն ըռզաց, որ տիրեն լեհք. ի նորաշէն գիղաքաղաքն Չամոսցայ»⁹⁷:

Ուսումը ստացել է հայրենի քաղաքում. «...զիս տվեալ յուսումն գրոց որում հասու եղեալ ի մանկութենէ մինչ ի չափ հասակի հասեալ դեգերեալ և մարգեալ ի վարժարանս ջահասղանի առ յոտս վարդապետաց և բանասիրաց»⁹⁸: Առաջին հիշատակարանը գրել է 1600 թ.՝ 16 տարեկանում. «Ոհ զմեղուցեալ եւ զեղկելի զծողս, զսակաւ աշխատողս, Չամոսչացի Սիմոնս աղաչեմ յիշել, եւ առանց պարսաւանաց թողուլ»⁹⁹:

1608 թ. սկսել է ճանապարհորդությունը Լվով քաղաքից և այցելել Հարավային, Արևելյան Եվրոպայի և Մերձավոր Արևելքի խոշորագույն կենտրոններ, այդ թվում՝ Հռոմ, Վենետիկ, Սուչավա, Ստամբուլ, Հալեպ, Երուսաղեմ, Կեսարիա, Մարաշ,

87 Kędziora A., նշվ. աշխ., <http://zamosciopedia.pl/>:

88 https://pl.wikipedia.org/wiki/Biblioteka_Ordynacji_Zamojskiej_w_Warszawi:

89 Ալիմյան Ն., Հինգ պանդուխտ տաղասացներ, Կենսագրական տեղեկություններ եւ բնագիրներ, Վիեննա, 1961, էջ 141:

90 ԺԷԱ, էջ 638:

91 Նշվ. աշխ., էջ 524:

92 Յուդակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի, Կ. Ստամբուլ, 1965, էջ 889:

93 Պողարեան Ն., նշվ. աշխ., էջ 341-343:

94 Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 137:


95 Յակոբ Թոխաթեցույ Ողբ ի վերայ երկրին Օլախաց, ԴԽԵ, Կ. Վիեննա, 1938:

96 Ալիմյան Ն., նշվ. աշխ., էջ 173:

97 Սիմեոն Լեհացի, ձեռագիր: Տե՛ս նաև Սիմեոն դպիր Լեհացույ Ուղեգրութիւն, էջ 1:

98 Սիմեոն Լեհացի, ձեռագիր: Տե՛ս նաև Սիմեոն դպիր Լեհացույ Ուղեգրութիւն, էջ 1-2:

99 Պողարեան Ն., նշվ. աշխ., էջ 343:



Մի մտնչ Սիմեոն դպիր Լեհացու (Սիմեոն Չամոստացի) ձեռագրից

Մուշ, Կահիրե և այլն: Շուրջ 11 տարի տևած շրջագայության ընթացքում նրա ապրուստի հիմնական միջոցներն են եղել եկեղեցական գրքերի ընդօրինակումը և գրչությունը: Սիմեոն Չամոստացու «Ուղեգրության» մեջ արժեքավոր տվյալներ են պարունակում ժԷ դարի հայկական բազմաթիվ գաղթավայրերի մասին, սակայն ցավով պետք է նշել, որ այնտեղ տվյալներ գրեթե չկան հայրենի Չամոնչի մասին՝ բացառությամբ դառը հուշերի: «Ի թվ ՌԿԹ (1620) օգոստոս ժԷ (17), յետ ննջման ամենաւրինեալ Աստուածածին պսակեցայ և հարսանիք արի, և առեալ զկենակիցս Լովայ տարայ գնա ի տուն հօրս ինոյ, և ի սենեակ մօրս, ի Չամոյսոյ սիլասիմ և կացի անդ Ե (5) ամ. և յետ ամաց ինչ բազում յանցք անցին ի գլուխս, այլև յողով չարի և փորձանաց դիպա. վիշտք և նեղութիւն գտի, ես եղկելի ի գավառս իմ. ի տուն և ազգատոհմիս ի չար և ի յայիրատ մարդկաց. գոր յառաջն սիրով ընկալան և պատվով մեծարեցին, և յետոյ վնասք մահու և դժխտոց ի վերա իմ եղին, և ոչ թե միաք, կամ Բ (2) այլ ի բազմաց և յողովից, մանաւանդ ի կարգաւորաց. զի ոչ որ մնաց, որ զիս որ ոչ եխած»¹⁰⁰:

1624 թ. հայ համայնքի հրավերով տեղափոխվել է Լվով՝ զբաղվելով ուսուցչությամբ և գրչությամբ: Մեզ են հասել 1600-1636 թթ. գրված շուրջ տասը հիշատակարաններ: Մեծարժեք է նրա չափածո աշ-

խատությունը՝ նվիրված Մելքիսեդեկ կաթողիկոսի ժամանանը Լվով, Նիկոլայ արեղա Թորոսիչի եպիսկոպոսական ձեռնադրությանը և դրան հաջորդած հայերի բռնի կաթողիկացմանը: Այն հրատարակել է Ղևոնդ Ալիշանն իր «Կամենից» աշխատության մեջ և պայմանականորեն անվանել «Վիպասանութիւն Նիկոլական»՝ նշելով. «Այսպես անուանեցինք զգրուածս, որոյ սկիզբն և վերջն այլ պակաս ըլլալով՝ մեր միակ ծանօթ օրինակին մեջ, անծանօթ մնայ բուն վերնագիրն...»¹⁰¹: Այս ստեղծագործության գրական բարձր արժեքը թույլ է տալիս Սիմեոն Չամոստացուն դասել ժԷ դարի հայ մեծ ողբասացների շարքին, իսկ երկը՝ պայմանականորեն անվանել «Ողբ ի հայք Լով քաղաքէ»: Ակնհայտ է, որ Լեհացին չի հաշտվել հայերի բռնի կաթողիկացման հետ, ինչը նրան նոր գրկանքներ է բերել, հալածանքներ և անգամ բանտարկություն:

Չամոնչ քաղաքի տարեգիրներից է Չախարիաշ Առաքելովիչը, որը ծագումով Յազովեց քաղաքից էր: Որոշ ժամանակ բնակվել է Ստանիսլավովում, 1685 թ. տեղափոխվել Չամոնչ և ամուսնացել Աննա Յատովովիչի հետ¹⁰²: Բազմիցս ընտրվել է հայ համայնքի վոյթ: 1694 թ. երկու ավագանիների հետ մեկնել է Լվով, որպեսզի Չամոնչի հայ համայնքի կանոնադրությունը համեմատի Լվովի համայնքում կիրառվող Հայկական ստատուտի հետ: Նրա տարեգրությունը կոչվում է «Չախարիաշ Առաքելովիչի կոննոտացիա այն մասին, թե ինչ է տեղի ունեցել Չամոնչում և ողջ Ռեչ Պոսպոլիտայում» սկսած 1689 թ.-ից, կազմված ներքոստորագրյալիս կողմից»¹⁰³: Այն սկսում է օրդինատ Թոմաշ Չամոնյակու հուղարկավորման նկարագրությունից և շարունակվում մինչև 1725 թ.:

1695 թ. փետրվարին Առաքելովիչը Լվովի ճակատամարտի ակնատեսն էր, երբ Ղրիմի թաթարներն անակնկալ գրոհել են հյուսիսից, որտեղ և գտնվում էր հայկական թաղամասը: Նա մասնավորապես նշում է, որ հայոց Սբ. Խաչ վանքը վերածվել էր ռազմական հենակետի, որտեղից քաղաքի պաշտպանները կրակ էին տեղում թշնամու ուղղությամբ¹⁰⁴:

ԺԷ դարից մեզ հասած հիշատակարանները թույլ են տալիս վեր հանել Չամոնչում տարբեր տարիներին ստեղծագործած նաև այլ գրիչների անուններ:

1603 թ. Ավետարանի հիշատակարանում Ղազար եպիսկոպոս Եվրոկացին նշում է. «...գանձլերին իրոյ Յովիաննէս իշխանին, ի քաղաքիս յայս գանձլերին որ է Չամօսքի, ընդ հովանեալ Տիրամայր ամենաւրինեալ Սրբոյ յոյ Աստուածածնին, և այլ բազում վկայիցս, սրբոց որ մատուռաւ և խո-

100 Սիմեոն Լեհացի, ձեռագիր: Տե՛ս նաև Սիմեոն դպիր Լեհացույ Ուղեգրութիւն, էջ 349-350:

101 Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 202:
 102 Закревска-Дубасова М., նշվ. հոդվ., "АНИВ", № 34, էջ 8:
 103 Նշվ. հոդվ., "АНИВ", № 34, էջ 9:
 104 Նույն տեղում:

րանաւ է զարդարեալ. և սրբասէր քահանային սոցա, որոյ է սպասատր սբ. ուխտիցս տէր Յակոբ սրբասէր քահանային, և իւր կենակցին՝ Եսդուքքային, որ բազում աշխատութեամբ և երախտիւք աշխատեցան ընդ անարժանութիւնս իմ, եթէ կերակրով և եթէ ընպէլեօք, Աստուած փոխարէնն յիւր արքայութիւնն տա...»¹⁰⁵: Նաև հիշատակում է Ավետարանի ստացողներին. «...և զստացողսն զբան Պունիաթն, և զպաճանախ սորա զսցըսցի ըՍքանտէրն յիշեցիք ի Քրիստոս...»¹⁰⁶:

Նույն թվականին արդեն Հակոբ Թոխաթեցիին «Մեկնութիւն Հնգամատենին» աշխատության մեջ բերում է հետաքրքիր մի հիշատակում. «Պարոնտերն, սարկաւագն և ժամկոչն չեն թողուլ որ խաղաղ գրեն, թէ «Արի խմենք»: Աստված փրկէ ի փորձանաց՝ փախայ յեկեղեցին մտայ, արվայ չեն ազատիլ իւրանցմէ»¹⁰⁷: Նշված պարոնտերը, ամենայն հավանականությամբ, հենց Ղազար եպիսկոպոս Թոխաթեցիին էր, որը շուտով լքել է Չամոռը և 1605-10 թթ. արդեն գրչագրական գործունեություն ծավալել Յազովեց և Կամենից քաղաքներում¹⁰⁸:

Աստուածատուր դպիրը 1640 թ. Չամոռը ընդօրինակել է Հակոբ Թոխաթեցու «Մաղմոսարան տաղաչափեալը», ինչպես ինքն է նշում, «...ի խնդրոյ բարեպաշտ և աստուածասէր, երկիրաձ յԱստուծոյ և յամօթխած ի մարդկանէ պարոն Սըսցի Խտրին...»¹⁰⁹:

1642 թ. գրված Պարզատումարում առկա է Վարթերեսի գրած երկու հիշատակարան, որից առաջինը հայերենով է. «Այս է Լուսացուցս Հայոց, որ թվին // Ռ-ՂԱ (1642)-ին գրեցաւ. Կաւացի ես՝ Վարդերես, Ասվատուրի որդին, օր գրլեցի այս Լուսնացուցս»¹¹⁰, իսկ մյուսը՝ հայատառ ուղիղեբեն. «Եսզըլտի պու գալանտար թվին Ռ-ՂԱ (1642)-ին, յունվարին ԻԹ (29)-մէն Վարդերես, Ասվադուր օղլու. օգնանըմ իջուն եագտմ պու Լուսնացուցմի. Չամօձայ շահհարընտա, պէկլիսընտա բան Եան Չամօցկիլըն թանկլի ուզախ. Չամանկա սաղալկեայ. ամէն»¹¹¹: Վարթերես Ասվադուրովիչի մասին հայտնի է, որ ԺԷ դարի առաջին կեսին բազմիցս ընտրվել է ավագանու անդամ:

Մարութա Ամասիացին «...ի քաղաքն Չամոսցա...» ընդօրինակել է Մաշտոց՝ հիշատակարանում նշելով. «Բայց գրեցաւ սա թվին Ռ-ՂԴ (1645), ձեռամբ անարժան և անարհեստ գրչիս, Ամասիացի

105 ԺԷԱ, էջ 124:

106 Նույն տեղում:

107 Նշվ. աշխ., էջ 119:

108 Ալիմեան Ն., նշվ. աշխ., էջ 203-216:

109 Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Բ, Երևան, 1978, էջ 797 (այսուհետ՝ ԺԷԲ, համապատասխան էջերով):

110 Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Գ, Երևան, 1984, էջ 49 (այսուհետ՝ ԺԷԳ, համապատասխան էջերով):

111 Նույն տեղում:

մեղմասած Մարութա դարի, որ ետու յիշատակ բարի ինձ և ծնողացս, հոր իմոյ մահտեսի Ալիքսանուսին և մօրս Մարիամին...»¹¹²:

Ռ-ՉՉ (1657) թվականին Նիկոլ երեցը Չամոռը ընդօրինակել է Շարակնոց¹¹³, որտեղ մասնավորապես հիշատակում է տեր Հակոբ և տեր Հովհաննես քահանաներին:

Հայտնի է, որ 1749 թ. Հայկական եկեղեցում պահվում էին եկեղեցական շուրջ 14 ձեռագիր և մոտ 100 հատոր այլ գրքեր (8-ը՝ հայերեն, 35-ը՝ լատիներեն, 34-ը՝ իտալերեն և 22-ը՝ լեհերեն)¹¹⁴: Հայր Ստեփանոս Ազոնցը Չամոռչի ձեռագրերի մասին գրում է. «...ձեռագիր գրեանք ինչ գտեալք ի նմին եկեղեցուջ՝ տարան յարքունի գրատունն ի Վիեննա»¹¹⁵: Իտալացի Վաննոցին վկայում է, որ հայերեն արժեքավոր ձեռագրեր են պահվել նաև քաղաքի հիմնադիր Յան Չամոռյսկու գրադարանում¹¹⁶:

Ձեռագրերի հիշատակարանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք հաճախ գրվել են աշխարհիկ անձանց պատվերով՝ պարոն Էսան պեյ, պան Պունիաթ, պան Սքանտար, պարոն Խտրը, պարոն Պեռնադ, պարոն Գրիգոր, պան Սիսքո և այլն, ինչը վկայում է գրքերի նկատմամբ քաղաքի բնակիչների հատուկ վերաբերմունքի մասին:

Չամոռչաբնակ հայ վաճառական Մուրադ Քերիմովիչի ընտանիքում է ծնվել Լվովի հայկական տպարանի հիմնադիր Հովհաննես Քարմատանենց-Քերիմովիչը: Հայտնի է, որ Մատուշ Կիրկորովիչի անձնական գրադարանը 1652 թ. ներառում էր 16 գիրք, այդ թվում՝ Ավետարան¹¹⁷:

Ամփոփելով կարելի է փաստել, որ Չամոռչի հայերն ունեցել են գրագիտության բարձր մակարդակ, լեզուների (հայերեն, լեհերեն, թուրքերեն, լատիներեն և այլն) իմացությունը եղել է բանավոր և գրավոր: Կարծում ենք, որ դա էլ նրանց հաջողությունների հիմնական գրավականն էր ինչպես առևտրի, այնպես էլ գիտության և գրականության ոլորտներում:

Հայկական պատմական հուշարձանները. Լվովի, Կամենեց-Պոդոլսկու և Յազովեցի մասնությամբ Չամոռչի հայերը նույնպես ունեին իրենց թաղամասը: Այն նախագծել է մեզ արդեն հայտնի իտալացի ճարտարապետ Բեռնարդո Մորանդոն, որին էլ պարտական են քաղաքի կանոնավոր հատակագծի և համաչափ ճարտարապետության համար: Թաղամասը գտնվում է քաղաքի հյուսիսարևելյան մասում՝ Օրմյանսկա (Հայկական) փողոցի երկայնքով, որը սկիզբ է առնում Ռինեկ Վիելկի հրապարակի

112 Նշվ. աշխ., էջ 196:

113 Նշվ. աշխ., էջ 751:

114 **Kędziora A.**, նշվ. աշխ., <http://zamosciopedia.pl/>:

115 **Ազոնց Ս.**, նշվ. աշխ., էջ 138:

116 **Дашкевич Я.**, նշվ. աշխ., էջ 1086:

117 **Kędziora A.**, նշվ. աշխ., <http://zamosciopedia.pl/>:



Ռինեկ Վիելկի հրապարակի հայկական տները

հյուսիսարևելյան հատվածից, ձգվում դեպի արևելք և ավարտվում հին քաղաքի պարիսպների մոտ, որտեղ ԺԸ դարի սկզբին դեռ կանգուն էր հայոց եկեղեցին: Հին քաղաքի պարիսպներից դուրս՝ Լվովյան արվարձանում (ներկայումս չի պահպանվել), հայերին էին պատկանում բազմաթիվ տներ, այգիներ և անգամ «լիճ գեղեցիկ հուպ ի պարիսպսըն»¹¹⁸:


Հայկական թաղամասը քաղաքի հասակակիցն է: 1591 թ. բաղկացած էր 19 տնից, որոնց թիվը, տարեցտարի ավելանալով, 1669 թ. հասել է 29-ի: Ուշագրավ է, որ 1603 թ. քաղաքի կենտրոնական՝ Ռինեկ Վիելկի հրապարակի 28 տներից 11-ը պատկանում էին հայերին, 6-ը՝ լեհերին, 5-ը՝ հույներին, 4-ը՝ իտալացիներին, մեկական՝ ռուսիներին և գերմանացիներին¹¹⁹:

Հրապարակին հարող քարե եռահարկ տները հիմնականում կառուցված են տիպային ուղղանկյուն հատակագծով. ճակատային մասում լայնու-

թյունը 10-12 մ է, իսկ երկարությունը՝ հիմնականում 25 մ: Շքամուտքից սկիզբ առնող նեղ միջանցքի երկու կողմերում առկա են ոչ մեծ չափերի և հրապարակահայաց պատուհաններով սենյակներ, որոնք գործածվել են որպես խանութներ: Միջանցքի վերջին հատվածից սկսում են դեպի ներքին բակ բացվող պատուհաններով մեծ հյուրասենյակը և դեպի վեր տանող աստիճանները: Երկրորդ հարկի կենտրոնում միջանցքը և փոքր օժանդակ տարածքներն են, իսկ կողային հատվածներում՝ երկու զույգ իրար կից մեծ և փոքր սենյակներ, որոնցից մեկի պատուհանները նայում են դեպի հրապարակ, իսկ մյուսինը՝ հետմաքակ: Երրորդ հարկի հատակագիծը գրեթե կրկնում է երկրորդին այն տարբերությամբ, որ աստիճաններին կից գտնվում է խոհանոցը՝ աղյուսաշեն վառարանով: Այստեղ էին ննջասենյակները, որոնց առաստաղի բարձրությունը զգալիորեն ցածր է մյուս հարկերից: Տների ընդարձակ նկողները տարածվում են ողջ հատակագծով՝ ծառայելով որպես ապրանքների պահեստներ: Նկուղի, բաց սյունասարահի և առաջին հարկի (բացառությամբ ներքին բակի կողմի մեծ սենյակի) առաս-

118 Պիոու Ա. Մ., Հիշատակարան, Բոնի միութիւն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռովմայ, Ժամանակակից հիշատակարանք, Ս. Պետերբուրգ, 1884, էջ 16:

119 Kędziora A., նշվ. աշխ., <http://zamosciopedia.pl/>:



Օրմյանսկա փողոցի № 14-30 տների հատակագծերը (արտատպված՝ Fidecka U., Kamienice ormiańskie w Zamościu, Zamość, 1989 գրքից)

տաղները թաղածածկ են, իսկ մյուս սենյակներինը՝ փայտաշեն:

Տներն արտաքուստ նույնպես ունեն ընդհանրություններ. առաջին հարկում հիմնականում եռակամար բաց սյունասրահներն են, շքամուտքը և երկու պատուհանները: Բոլոր հարկերը վերին հատվածում երիզված են դեկորատիվ քիվերով: Վերին հարկերն ունեն զարդաքիվերով հարուստ 3-4-ական ուղղանկյուն պատուհաններ: Շքամուտքը, պատուհանները և առաջին հարկի դռները եզերված են շրջանակներով, վերին մասում հաճախ ունեն վահանազարդեր և դիմակազարդեր:

Օրմյանսկա փողոցի հյուսիսային կողմի տները հրապարակահայացների ավելի փոքր (ճակատը՝ 8-10 մ, խորությունը՝ հիմնականում 16 մ) և համեստ տարբերակն են՝ երկհարկանի, սյունասրահը՝ երկու կամարներով, ճակատը՝ առանց զարդանախշերի և ատտիկների: Հարավային կողմի տները չափերով ավելի փոքր են (մոտ 8 մ x 12 մ) և առանց սյունա-

սրահների: Մի մասը բակի կողմից ունի բաց պատշգամբներ: Հայկական տները կատարելապես համադրված են միմյանց, գրեթե նույն բարձրության են, իսկ ճակատները գտնվում են միևնույն հարթության մեջ: Օրմյանսկա փողոցի տները զուգահեռ (Պերեցի և Գրոդցկա) և հատող (Բազիլսկա և Գրեցկա) փողոցների շենքերի հետ միասին կազմում են ներքին բակեր:

Տները տարբերվում են միմյանցից իրենց յուրահատուկ գույներով, արտաքին ու ներքին հարդարանքով և ճարտարապետական դետալներով: Դարերի ընթացքում դրանք բազմիցս փոփոխվել են. անհետացել և վերակառուցվել են ատտիկները, ավելացվել և հեռացվել՝ որմնահեծեր, լրացուցիչ մուտքեր, պատշգամբներ, վերնահարկեր և այլն: Ներքին հարդարումը և կառուցվածքը նույնպես ձևափոխվել են՝ հարմարեցվելով շենքի գործառական նշանակությանը:


Ի դարի սկզբին տները հիմնականում պատկանում էին իրեաներին, որոնք կազմում էին քաղաքի բնակչության գրեթե կեսը, իսկ Երկրորդ աշխարհամարտից հետո մեծ մասամբ դարձել են համայնքային սեփականություն: Ի դարի երկրորդ կեսին դրանք մի քանի փուլով հիմնովին վերանորոգվել են՝ հնարավորինս վերագտնելով իրենց սկզբնական տեսքը:

Հրապարակահայաց հայկական տները տեղաբաշխված են երկու խմբով. հյուսիսային մասում՝ Օրմյանսկա փողոցի 22-30, արևելյանում՝ Ռինեկ Վիելկի հրապարակի 8-16 հասցեները: Հյուսիսային խմբի տներն առանձնանում են արտաքին ճոխ հարդարանքով, վառ գույներով և բարոկկո ոճի ատտիկներով, որոնք իրավամբ համարվում են Չամոշի զարդն ու խորհրդանիշը: Հայտնի են «Kamienice ormiańskie»¹²⁰ (Հայկական տներ) ընդհանուր անվամբ, թեև յուրաքանչյուրն ունի նաև իր առանձին ժողովրդական անունը:

Ներկայումս տներից չորսում գործում է Չամոշի պատմության թանգարանը:

Վիլչեկի տունը (Օրմյանսկա փ., 30) ԺԷ դարի սկզբին պատկանում էր ակադեմիայի ռեկտոր Ադամ Բուրսկուն, 1665-74 թթ. վերակառուցվել է քաղաքային խորհրդական Յան Վիլչեկի կողմից¹²¹: Ներկված է կանաչ գույնով, արտաքուստ հարուստ է զարդաքիվերով, բուսանախշերով, հրեշտակներով, դեկորատիվ որմնասյուներով և որմնախոյակներով: Հարավային ճակատի արևմտյան անկյունում Հովհաննես Մկրտչի կողմից Քրիստոսի մկրտությունը պատկերող, դրանից քիչ ներքև՝ Թովմաս առաքյալի (աջ ձեռքին՝ երեք նետ, իսկ ձախին՝ գավազան), իսկ արևմտյան ճակատի հարավային

120 Fidecka U., Kamienice ormiańskie w Zamościu, Zamość, 1989, էջ 3: 121 Նշվ. աշխ., էջ 31:



Հայկական եռահարկ և երկհարկ տների հատակագծերն ու կտրվածքները (արտատպված՝ Fidecka U., Kamienice ormiańskie w Zamościu, Zamość, 1989 զրքից)

մասում Աստվածածնի և Հովհաննես Ավետարանչի (ձախ ձեռքում՝ սկիհ, աջում՝ օձ) հարթաքանդակներն են: Տարբեր հատվածներում առկա են տանտիրոջ անվան սկզբնատառերով վահանազարդեր՝ IW RZ (Ian Wilczk Rajce Zamojski - Յան Վիլչեկ՝ խորհրդական Չամոշչյան):

Ռուդոմիչի տունը (Օրմյանսկա փ., 28) կառուցվել է ԺՋ դարի վերջին: 1645-57 թթ. վերակառուցվել է ակադեմիայի ռեկտոր և քաղաքի տարեգիր Վասիլի Ռուդոմիչի կողմից¹²²: Նրան որոշ հեղինակներ հայկական ծագում են վերագրում¹²³: Ներկված է դեղին գույնով, առանձնանում է գուսպ արտաքին հարդարանքով և բարձր ատտիկով:

«Հրեշտակի ներքո» տունը (Օրմյանսկա փ., 26) կառուցվել է 1632-34 թթ. հայազգի վաճառական Գաբրիել Բարտոշևիչի կողմից¹²⁴: Հետագայում պատկանում էր նրա որդուն՝ ակադեմիայի պրոֆեսոր Յան Բարտոշևիչին:

Չամոշչի ամենաշքեղ տունն է թե՛ արտաքին, թե՛ ներքին հարդարմամբ: Ներկված է կարմիր գույնով և պատված խաղողի ողկույզներ և ծաղիկներ պարունակող բուսանախշերով: Երկրորդ հարկի որմնախորշում Գաբրիել հրեշտակապետի (ձախ ձեռքին՝ շուշան ծաղիկ) բարձրաքանդակն է: Երրորդ

հարկի երկու եզրերին առկա են կանգնած առյուծների հարթաքանդակներ, իսկ կենտրոնական մասում՝ թևավոր վիշապ:

Ներքին հարդարանքը հիմնականում պահպանված է և բավական հարուստ: Առաջին հարկի հյուսիսասիայաց պատուհանների քարե շրջանակներն ամբողջովին զարդարված են խաղողի ողկույզներով, իսկ ներքևի մասում հրեշտակների որմնաքանդակներ են: Պատուհանների խորշերի վերին հատվածում առկա է չորսական անգուգական վարդյակ: Սենյակի դռան և կից որմնախորշի քարե շրջանակները պատված են հարուստ բուսանախշերով և բազմաշերտ զարդաքիվերով: Երկրորդ հարկի հարավային մեծ սենյակի պատուհանների շրջանակները՝ խաղողի ողկույզի զարդանախշերով և հրեշտակների դիմակազարդերով, գեղեցկությամբ չեն զիջում նախորդներին: Սենյակի հարավային պատին՝ պատուհաններից վերև, Քրիստոս Ամենակալի որմնանկարն է (ձախ ձեռքին՝ խաչակիր գունդ), իսկ արևմտյան որմին՝ առաստաղին հարող հատվածում՝ որսի տեսարան: Այս և արևմուտքից հարող փոքր սենյակի պատերի վերին հատվածն ամբողջությամբ պատված է որմնանկարների՝ գանազան ծաղիկներով և մրգերով պատկերված գոտիով: Փոքր սենյակի չորս կողմերում եղել են Ավետարանիչների որմնանկարները, որոնցից երկուսը (Հովհաննես և Մատթեոս) լավ պահպանված են,

122 Նույն տեղում:

123 Szyszka B., նշվ. հոդվ., էջ 62:

124 Fidecka U., նշվ. աշխ., էջ 33:



Վիլչեկի տունը՝ վերակառուցված 1665-74 թթ. (լուս.՝ Ս. Վարդանյանի, 2014 թ.)



Ռուդոմիչի տունը՝ վերակառուցված 1645-57 թթ. (լուս.՝ Ս. Վարդանյանի, 2014 թ.)

մեկը՝ մասնակի (թևի հատվածը), իսկ վերջինը, ցավոք, չի պահպանվել: Սենյակի միակ պատուհանի խորշի երկու կողմերում սուրբ Վառվառայի (աջ ձեռքում՝ փետուր, ձախում՝ թուր) և սուրբ Եկատերինայի (աջ ձեռքում՝ գիրք, ձախում՝ փետուր) որմնանկարներն են: Տան առաստաղի փայտե որոշ հեծաններից առկա են հավերժության խորհրդանշի մոտիվներով վարդյակներ:

«Ամուսինների ներքո» տունը (Օրմյանսկա փ., 24) կառուցվել է ԺԷ դարասկզբին հայ վաճառական Թորոսի կողմից: Նույն դարի կեսերին նա վաճառել է վոյթ Գաբրիել Արևովիչին¹²⁵:

Ներկված է կապտավուն շափյուղայի գույնով: Երկրորդ և երրորդ հարկերի ստորին հատվածներում զարդագոտիներ են (առաջինը՝ երկրաչափական, իսկ երկրորդը՝ բուսական նախշերով): Երրորդ հարկի կենտրոնական մասում պատկերված է ամուսնական գույգ. տղամարդն առանձնաճակատ է ցցված բեղերով, իսկ կինը՝ երկար վարսերով (ամեն-

նայն հավանականությամբ, խորհրդանշում են Ադամին և Եվային դրախտի պարտեզում):

Ներքին հարդարանքից առանձնահատուկ են առաջին հարկի պատուհանների սյունազարդ շրջանակները և դրանց վերևում գտնվող Քրիստոս Ամենակալի որմնանկարը (գլխին՝ լուսապսակ, ձախ ձեռքին՝ խաչակիր գունդ, իսկ աջ ձեռքը՝ օրհնության նշանով վեր պարզած): Հարավային և արևմտյան պատերի վերին հատվածները հարդարված են բուսանախշերով հարուստ որմնանկարներով:

«Տիրամոր ներքո» տունը (Օրմյանսկա փ., 22) կառուցվել է 1642-57 թթ. հայազգի վաճառական Մուլտան Մախվելովիչի կողմից¹²⁶: Ավելի ուշ պատկանում էր հայազգի Թակիեստովիչներին և Դերբեդրոսովիչներին¹²⁷:

Երկհարկանի տունը ներկված է բաց դեղին գույնով: Երկրորդ հարկում Տիրամոր և մանուկ Հիսուսի

125 Kędzióra A., նշվ. աշխ., <http://zamosciopedia.pl/>:

126 Fidecka U., նշվ. աշխ., էջ 34:

127 Kędzióra A., նշվ. աշխ., <http://zamosciopedia.pl/>:



Գաբրիել Բարտոշկիչի («Չրեշտակի մերթ») տունը՝ կառուցված 1632-34 թթ. (լուս.՝ Ս. Վարդանյանի, 2014 թ.)



Գաբրիել Բարտոշևիչի («Չրեշտակի մերթ») տան երկրորդ հարկի հարդարանքը (լուս.՝ Ս. Վարդանյանի, 2014 թ.)



Թորոսի («Ամուսինների ներքո») տունը՝ կառուցված ժԵ դարի սկզբին (լուս.՝ Ս. Վարդանյանի, 2014 թ.)

գունազեղ հարթաքանդակն է: Տիրամայրն աջ ոտքը դրել է թևավոր վիշապի վրա, գլխին ունի մետաղյա թագ, իսկ ձեռքին՝ մետաղյա գավազան: Վիշապը գլուխը թեքել է վերև, լեզուն դուրս հանել և հայացքն ուղղել Տիրամորը: Հարկերի միջև բուսական գունազեղ զարդագուտի է, իսկ պատուհանների վերին մա-

սում՝ տանտիրոջ անվան հայատառ միացագրով վահանազարդեր, խաղողի և նռան պատկերով բուսանախշեր: Բարոկկո ոճի բարձր ատտիկը զարդարված է որմնասյուներով և խորշերով:

Ներկայումս այս տանը գործում է Բ. Մորանդոյի անվան գեղարվեստի դպրոցը:



Սոլտան Սախվելովիչի («Տիրամոր մերթո») տունը՝ կառուցված 1642-57 թթ. (լուս.՝ Ս. Վարդանյանի, 2014 թ.)



Թաթուլովիչների, Աուբունովիչների, Թոբիաշի կամ Առաքելովիչների և Օվանիշովիչների տները (լուս.՝ Ս. Վարդանյանի, 2014 թ.)

Թոփալովիչների տունը (Օրմյանսկա փ., 20) 1591 թ. պատկանում էր կաֆայեցի հայ վաճառական Դուկասին, իսկ ԺԷ դարում՝ Թոփալովիչներին և Դիլեգևիչներին: Արտաքուստ ոչնչով չի առանձնանում, սակայն առաստաղի փայտե հեծանի վրա պահպանվել է լեհերեն արձանագրություն. *“DOMOWI TEMU Y MIESZKANCOM JEGO 1708 Z.F. R.Z. BŁOGOSŁAW PANIE Z OPATRZENIA TWE.”*¹²⁸ (Նախախնամությամբ քո օրհնի՛ր, տե՛ր, այս տունը և նրա բնակիչներին, Չ. Ֆ. Ռ. Չ., 1708 թ.), ինչը գրեթե նույնական է Ռիմեկ Վիելկի 14 հասցեում գտնվող տան հայերեն արձանագրությանը (տե՛ս հմր. 131 հղման ներքո): Իսկ ZF RZ հապավման պարագայում Վիլչեկի տան նմանությամբ կարելի է ենթադրել, որ առաջին երկուսը տանտիրոջ անուն-ազգանվան առաջին տառերն են (օրինակ՝ Չախարիաշ Ֆարուխովիչ), իսկ վերջին երկուսը՝ նրա տիտղոսը (խորհրդական Չամոչչյան):

Թաթուլովիչների կամ Վարթերեսի տունը (Ռիմեկ Վիելկի հր., 16) կառուցվել է 1591 թ. բաղեշցի հայ վաճառական Մուրադ Քերիմովիչի կողմից: Ամենայն հավանականությամբ, այս տանն է ծնվել նրա որդին՝ Լվովի հայկական տպարանի (1616-

1618 թթ.) հիմնադիր Յան Քերիմովիչը (տե՛ր Հովհաննես քահանա Քարմատանենց):

ԺԷ դարի սկզբներից շուրջ 170 տարի պատկանում էր հայազգի Թաթուլովիչներին¹²⁹: Առանձնանում է մուտքի դռան վահանազարդի հայատառ միացագրով, որը, ըստ տան պատին փակցված տեղեկատվական ցուցանակի, Մուրադ Քերիմովիչին էր: Սակայն հստակ նշմարվող Վ, Ա և Գ տառերը և տան ժողովրդական անվանումը վկայում են, որ այն պատկանում էր ոմն Վարթերեսի:

Ներկայումս այս տանը գործում է «Էֆեմերոս» գրախանութ-սրճարանը, որի պատերը ձևավորված են հայատառ գրություններով:

Աուբունովիչների տունը (Ռիմեկ Վիելկի հր., 14) կառուցվել է 1603 թ. հայազգի Հուլյոբ Գրեհորովիչի կողմից: Հետագայում պատկանում էր Աուբունովիչներին (հնարավոր է Ալբունովիչ կամ Արուբյունովիչ), իսկ ԺԸ դարի սկզբին՝ Բալեյովիչներին¹³⁰:

Առաստաղի փայտե հեծանի վրա պահպանվել է հայերեն արձանագրություն.

*Օրհնեցե՛, տե՛ր ա(ստուա)ծ, գտունս այս եւ գամենայն բնակիչս սորա, ամէն*¹³¹:

128 Трыярски Э., О двух надписях польских армян из города Замостье, «ՊԲՀ», 1971, № 4, էջ 262:

129 Kędziora A., նշվ. աշխ., <http://zamosciopedia.pl/>:

130 Նշվ. աշխ., <http://zamosciopedia.pl/>:

131 Трыярски Э., նշվ. հոդվ., էջ 261:



Առաքելովիչների և Օվանիշովիչների տների սյունասրահը, Օվանիշովիչների տան միջանցքը, Կազիմիր Լուբեցկու («Կազիմիրի ներքո») և Ստանիսլավ Աբրահամովիչի («Մորանդոյի երկրորդ») տները (լուս.՝ Ս. Վարդանյանի, 2014 թ.)

Թորիաշի կամ Առաքելովիչների տունը (Ռինեկ Վիելկի հր., 12) կառուցվել է հայազգի վոյթ Թորիաշ Բոգդանովիչի կողմից: 1608 թ. 600 լեհական ոսկով նրանից գնել է մեկ այլ վոյթ՝ Գաբրիել Արևովիչը¹³², իսկ 1685 թ. նորընտիր վոյթ Ջաքարիաշ Առաքելովիչը 2000 ոսկով՝ արդեն Կիրկորովիչներից¹³³:

1685-1739 թթ. այս տանն էր բնակվում Ջամոշչի ինֆուլանտ և ակադեմիայի ռեկտոր Յակուբ Առաքելովիչը:

Օվանիշովիչների տունը (Ռինեկ Վիելկի հր., 10) կառուցվել է ԺՄ դարի վերջին Ջամոշչի առաջին հայազգի բնակիչներից մեկի՝ թոխաթցի Մուրադ Յակուբովիչի կողմից, որը հիշատակված է Յան

Ջամոյսկու՝ 1585 թ. հայտնի հրովարտական: Հետագայում գնվել է հայազգի վոյթ Օբսենտի Օվանիշովիչի կողմից¹³⁴, վերակառուցվել՝ ստանալով այժմյան տեսքը: Բաց սյունասրահի և առաջին հարկի միջանցքի առաստաղը պատված է նեղ գոտիավոր զարդանախշերով, հրեշտակի գլխով դիմակազարդերով և արծվի պատկերով վարդյակներով, իսկ կենտրոնում լատինատառ IHS միացագիրն է (Iesus Hominum Salvator-Հիսուս՝ մարդկության վրկիչ):

«Կազիմիրի ներքո» տունը (Ռինեկ Վիելկի հր., 8) կառուցվել է Կազիմիր Լուբեցկու կողմից: ԺԷ դարի երկրորդ կեսից մույնպես պատկանում էր հայազգի Օվանիշովիչներին¹³⁵: Երկրորդ հարկի

¹³² Zakrzewska-Dubasowa M., նշվ. հոդվ., էջ 73:

¹³³ Заковска-Дубасова М., նշվ. հոդվ., "Анив", № 34, էջ 8:

¹³⁴ Kędziora A., նշվ. աշխ., <http://zamosciopedia.pl/>:

¹³⁵ Նույն տեղում:



Օրմյանսկա փողոցը և հարավային ներքին բակն ու այնտեղ տանող կամարակապ անցուղին (լուս.՝ Ս. Վարդանյանի, 2014 թ.)

որմնախորշում սուրբ Կազիմիրի բարձրաքանդակն է (աջ ձեռքին՝ խաչ, ձախին՝ բացված գիրք):

«Մորանդոյի երկրորդ» տան (Ստաշիցի փ., 25) շինարարությունը 1590 թ. սկսել է ճարտարապետ Բ. Մորանդոն: Նրա մահից հետո 1612 թ. ավարտին է հասցրել հայազգի փեսան՝ Ստանիսլավ Աբրահամովիչը¹³⁶: Ընդհուպ մինչև ԺԷ դարի վերջը այս և Ստաշիցի փողոցի համար 13 տունը պատկանում էին Աբրահամովիչներին: Երկրորդ հարկի ստորին հատվածում վարդյակներով և դիմակազարդերով հարուստ շքեղ զարդագոտի է: Մուտքի քարե շրջանակի վերևի մասում առկա է հրեշտակի դիմակազարդ, իսկ որմնախոյակների վրա՝ առյուծների գլուխներ:

¹³⁶ Նույն տեղում:

Ներկայումս այս տանը գործում է ռեստորան:

Կիրկորովիչի տները (Գրողսկա փ., 2). հայտնի է, որ ԺԲ դարի կեսերին հայ համայնքի վոյթ, եկեղեցու երեսփոխան և բարերար Վարթերես Կիրկորովիչը եկեղեցուց հարավ ընկած տարածքում կառուցել է հինգ տներ և նվիրել հոգևոր կառույցին: Դրանք ԺԸ դարի երկրորդ կեսին եկեղեցու հետ միասին վաճառվել են քաղաքային իշխանություններին և գործածվել որպես գորանոց: Երկհարկանի են և ներքուստ միակցված իրար:

Հայտնի են նաև Օրմյանսկա փողոցի որոշ տների սեփականատերերի անունները. համար 18 տունը պատկանում էր Մեգերդիշովիչներին և Արևովիչներին, համար 14-ը՝ Չախարիաշներին, Գալուստովիչներին և Դերբեդրոսովիչներին, համար 6-ը՝ Բալեյովիչներին և Հաջիևովիչներին:

Այսպիսով կարելի է փաստել, որ Չամոնչի հայ համայնքը շուրջ երկդարյա գործունեության ընթացքում խորը և անջնջելի հետք է թողել քաղաքի պատմության և մշակույթի մեջ: Հայերի տներն իտալական, լեհական և հայկական մշակույթների յուրօրինակ համադրման փայլուն արդյունք են և արժանի տեղ են զբաղեցնում ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության հուշարձանների ցանկում:

Հայկական եկեղեցի. 1585 թ. հրովարտակով Յան Չամոնյակին հայերին խոստացել էր նաև դավանանքի ազատություն և թույլատրել կառուցել եկեղեցի՝ այդ նպատակով նրանց տրամադրելով բավական ընդարձակ տարածք քաղաքի հյուսիսարևելյան հատվածում:

Ըստ Սադոկ Բարոնչի՝ փայտաշեն առաջին եկեղեցին հիմնադրել և օծել է Չամոնյակու կողմից Լվովից հրավիրված հոգևորական Լուկաշը (Գուկաս)¹³⁷: Պետք է որ եպիսկոպոս եղած լինի: Հնարավոր է, որ նա, որպես Երուսաղեմի հայոց պատրիարքի նվիրակ, 1619 թ. Լվով այցելած նույն Գուկաս արքեպիսկոպոսն է:

Սկսած 1589 թ.-ից՝ եկեղեցին Սբ. Աստվածածին անվամբ հիշատակվում է բազմաթիվ ձեռագրերի հիշատակարաններում¹³⁸:

Փայտաշեն եկեղեցու ճարտարապետության մասին կարող ենք պատկերացում կազմել Չամոնչի՝ ԺԷ դարի սկզբին Յան Բրաունի կազմած նկարագրող քարտեզից (տե՛ս էջ 36), որտեղ կարելի է նշմարել նաև որոշ ճարտարապետական մանրամասներ: Արտաքուստ պարսպապատ համալիրը կազմված է եղել եկեղեցուց, երիցատներից, օժանդակ շինություններից և գերեզմանոցից: Տարածքը ներքուստ ցանկապատով բաժանված էր չորս հատվածների: Կենտրոնական հատվածում բուն եկեղեցին էր, որը արևմուտք-արևելք առանցքով, արտաքուստ շեշտված կիսակլոր խորանով և ուղղանկյուն ավանդատով կառույց էր: Թագանման եռաթև խաչակիր վեղարով պսակված սլացիկ զանգակատուն-աշտարակը եկեղեցուն հարում էր արևմուտքից:

Համալիրի հարավային հատվածում երկու երկհարկանի երիցատներ էին և հյուսիս-հարավ առանցքով միահարկ մի շենք, որը հավանաբար դպրանոցն էր: Հյուսիսարևմտյան հատվածում երկհարկանի, որմնասյուներով զարդարված շինություն էր, տանիքի արևելյան ծայրին ուներ խաչ: Այն, ըստ երևույթին, մատուռ է եղել: Հակոբ Թոխաթեցին 1613 թ. Ճաշոցի հիշատակարանում նշում է. «...ի նորաշեն քաղաքիս Չամոսցա, ընդ հովանեաւ Ս. Աստվածածնին և Ս. Լուսավորչին և այլոց խո-

րանացա...»¹³⁹, իսկ 1617 թ. Հայսմավորքում՝ «...ի նորաշեն քաղաքս Չամոսցա, ընդ հովանեաւ Ս. Աստվածածնին և Ս. Լուսավորչին և այլոց նշխարացա...»¹⁴⁰: Այստեղից կարելի է ենթադրել, որ մատուռը նվիրված է եղել սբ. Գրիգոր Լուսավորչին:

Հայոց գերեզմանատունը գտնվում էր տարածքի հյուսիսարևելյան հատվածում, որտեղ նշմարվում էին 15 տապանաքարեր:

Համայնքի հզորացման հետ մեկտեղ առաջ է եկել նոր, ավելի մեծ և շքեղ եկեղեցու կառուցման անհրաժեշտություն: 1623 թ. Հակոբ Թոխաթեցին սկսել է աղյուսաշեն նոր եկեղեցու համար դրամահավաք և հավաքել 2966 լեհական ոսկի, որի հիմնական մասը տրամադրել է Վարթերես Կիրկուրովիչը¹⁴¹:

Եկեղեցու հիմքերի օժույր տեղի է ունեցել 1626 թ. մայիսի 25-ին Էջմիածնից Մելքիսեդեկ կաթողիկոսի հետ Լեհաստան ժամանած երկու եպիսկոպոսների մասնակցությամբ: Այդ մասին արժեքավոր հիշատակություն կա 1613 թ. ձեռագիր Ճաշոցում. «Թվին Ռ-ՀԵ (1626), մայիսի ԺԹ (19), օրն շաբաթ, եկաք ի Չամոսցա՝ պարոնտեր Մարտիրոս սբ. Էջմիածնացի, և պարոնտեր Եղիա Երզնկացի, և տեր Խաչատուր արեղա Լովցի, վասն նուիրակութեան և հիմնարկութեան սբ. եկեղեցույ, և ի հայրապետութեան տեառն տեր Մելքիսեթ կաթողիկոսին, որ էր ինքն ի Լով քաղաք. և առաքեաց գնդ ի Չամոսցա քաղաք. և ի քահանայութեան տեր Յակոբ քահանային. եկաք հանգեաք ի տուն նորին. Աստուած փառաւորէ զինքն ի հոգի և ի մարմին. ամէն»¹⁴²:

Շինարարությունն ավարտվել է 1633 թ.¹⁴³: Հայերեն շինարարական արձանագրությունը չի պահպանվել, իսկ լատիներենն ունեցել է հետևյալ բովանդակությունը. «*D. O. M. Sub titulo Gloriosissimae Assumptionis B. V. Mariae cura et impensis Nationis Armenae Warteres Kirkuorowicz Tochatensis hanc ecclesiam erexit D. A. MDCXXV Maji 21*»¹⁴⁴. (Աստված կատարյալ մեծագույն, անվամբ փառավոր ավետման սուրբ Կույս Մարիամի եկեղեցին կառուցվեց հայ ազգի համար թոխաթեցի Վարթերես Կիրկուրովիչի կողմից մեր թվարկության 1625 թ. մայիսի 21-ին):

Եկեղեցին օծել է 1645 թ. սեպտեմբերի 14-ին Պուղոսանաց երկրից (Մոլդովա) ժամանած Անդրեաս եպիսկոպոսը¹⁴⁵: Այս փաստը վկայում է, որ Չամոնչի համայնքը հավատարիմ էր առաքելական

137 Barącz S., Rys dziejów..., էջ 178:

138 Տաշան Զ., Յուզակ հայերեն ձեռագրաց կայսերական մատենադարանին ի Վիեննա, Վիեննա, 1891, էջ 22:

139 ԺԷԱ, էջ 508:

140 Նշվ. աշխ., էջ 638:



141 Barącz S., Rys dziejów..., էջ 178:

142 ԺԷԲ, էջ 203:

143 Barącz S., Rys dziejów..., էջ 178:

144 Kaufhold H., Schriftliche Spuren der Armenier in Zamość, Sarmatismus versus Orientalismus in Mitteleuropa, Berlin, 2013, էջ 239:

145 Barącz S., Rys dziejów..., էջ 178:



Սբ. Աստվածածին եկեղեցի. արևմտյան ճակատը, հատակագիծը և կտրվածք դեպի հարավ (չափագրությունները՝ Մ. Բիկշլագերի և Գ. Խալփախչյանի)

հավատքին և բացասական վերաբերմունք ուներ առ Լվովի հայ եպիսկոպոս Նիկոլայ Թորոտովիչը: Միայն 1660-ական թվականներին է տեղի ունեցել անցումը հայ կաթողիկե դավանանքի, ինչն էլ հանգեցրել է արագացված ուժացման:

Եկեղեցին և հատկապես զանգակատուն-աշտարակը խիստ տուժել են 1672 և 1709 թթ. խոշոր հրդեհներից: 1710 թ. արդեն հյուծված համայնքը մեծ դժվարությամբ վերանորոգել է այն: Չամոչչաբնակ 19 հայերի՝ այդ նպատակով հանգանակած գումարը չի բավականացրել, և նրանք ստիպված վաճառել են նաև եկեղեցու արծաթյա իրերը:

ԺԸ դարի երկրորդ կեսին հայ հավատացյալների պակասի պատճառով եկեղեցին սկսել է ծառայել նաև լեհ կաթողիկոսներին: 1784 թ. ավարտիական հանգապետ Յոզեֆ Բրիգիդոյի կատարած եկեղեցական վերափոխումների շրջանակներում Լվովի (Սբ. Հակոբ և Սբ. Աննա), Չրոչովի և Յազլովեցի հայ եկեղեցական ծխերի հետ միասին փակվել է նաև

Չամոչչի ծուխը, և եկեղեցին փոխանցվել է Լվովի հայոց հոգևոր հիմնադրամին¹⁴⁶: Այս ամենի պատճառով եկեղեցական ողջ գույքը, ինչպես նաև սրբապատկերները, սպասքը և իրերը, 1795 թ. աճուրդի են դրվել. մասնավորապես մայր խորանի Աստվածամոր սրբապատկերը վաճառվել է Շեքեչին քաղաքի ֆրանցիսկյան տաճարին, Սբ. Կայետանի հրաշագործ սրբապատկերը՝ Լյուբլինի Սբ. Եկատերինա կաթոլիկ եկեղեցուն¹⁴⁷:

Եկեղեցու շենքը գնվել է Չամոչչի տասներկուերորդ օրդինատ Ստանիսլավ Կոստյա Չամոչսկու կողմից և գործածվել թատերական ներկայացումների համար: 1811 թ. գնել են ռուսական իշխանությունները, որոնց պատվերով 1817 թ. կազմվել է այն երկհարկանի առևտրային կենտրոնի վերափոխելու նախագիծ¹⁴⁸, սակայն կյանքի չի կոչվել:

ԺԹ դարի սկզբին եկեղեցու վերաբերյալ հայր Սինաս Բժշկյանը նշում է. «Ականատր է և քարաշեն եկեղեցին Հայոց, գոր շինեաց ճուղայեցի իշխան ոմն յանուն սուրբ Աստուածածնին. և ունի վանատուն, ուր գրեցաւ Յակոբի սաղմոսարանն, ...Սակայն այժմ չիք անդ Հայ. նմին իրի տէրութիւնն գրաւեաց զեկեղեցին Հայոց...»¹⁴⁹:

Նույնը փաստում է նաև Արշակ Ալթունյանն իր տեղեկագրում. «Դեռ կեցած է հոս Հայոց խիստ մեծ ու փառատր եկեղեցին, որոյ մեծ դրան ճակատը զայդ կառուցանողին անունը փորագրուած է, բայց Հայերն հեռոցեալ տեղացոց մեջ խառնուելով պակսելնուն համար, այս եկեղեցին ալ այժմ Լեհացիք գրաւած են»¹⁵⁰:

Լինելով վթարային վիճակում՝ եկեղեցին հիմնահատակ քանդվել է 1826-27 թթ.: Հիմքերը հայտնաբերվել և ուսումնասիրվել են 1968 թ.՝ նրա տեղում հյուրանոց կառուցելու ժամանակ¹⁵¹: Այժմ եկեղեցու մասին միակ հիշատակությունը հյուրանոցի արևմտյան ճակատին փակցված բրոնզաձուլ երկլեզու հուշատախտակն է՝ հետևյալ բովանդակությամբ. «Այս տեղում 1625-1805 թթ. գտնվում էր հայկական եկեղեցին՝ կառուցված Վարթերես Կիրկորովիչ Թոխաթեցու ծախսով, Յան Չամոչսկու 1585 թ. արտոնությամբ Չամոչչում բնակվող հայերի համար»:

Աղյուսաշեն եկեղեցու ճարտարապետության մասին կարող ենք կարծիք կազմել միայն 1811 թ. Մագնուս Բիկշլագերի կատարած չափագրության շնորհիվ, որը պահվում է Լյուբլինի պետական արխիվում: Այն արևմուտք-արևելք երկայնական առանցքով խաչաձև գմբեթավոր կառույց էր՝ արտա-

146 **Lechicki Cz.**, Kosciol Ormianski w Polsce, Lwów, 1928, էջ 109-110:

147 **Kondraciuk P.**, նշվ. հոդվ., էջ 24:

148 **Халпахчян О.**, Сооружения армянской колонии в Замостье, «ՊԲՀ», 1984, № 3, էջ 170:

149 **Բժշկյանց Մ.**, նշվ. աշխ., էջ 126-127:

150 **Ալթունյան Ա.**, նշվ. աշխ., էջ 135:

151 **Халпахчян О.**, նշվ. հոդվ., էջ 170:

քուստ շեշտված ավանդատնով և յոթանիստ խորանով: Ծավալում ութանիստ թմբուկով գմբեթն ավարտվում էր բրգաձև վեղարով, որը գագաթին ուներ բարոկկո ոճի վեղարով ոչ մեծ սյունաշար ռոտոնդա: Եկեղեցու տանիքը կղմինդրածածկ էր: Միակ մուտքն արևմտյան ճակատից էր: Դռան շրջանակը զարդարված էր բարոկկո ոճի քարե որմնասյուներով և որմնախոյակներով: Վերին մասում հայերեն շինարարական արձանագրությունն էր՝ ուղղանկյուն շրջանակով և եռանկյուն զարդաքիվով: Եկեղեցուն շքեղ տեսք էին հաղորդում որմնասյուներով ու որմնախորշերով զարդարված, խաչակիր, ձևավոր երեք ճակտոնները:

Արտաքուստ հարդարված էր իրարից կանոնավոր հեռավորության վրա գտնվող որմնասյուներով, իսկ տանիքին հարող մասում առկա էր քիվերով երիզվող բազրիքանման զարդագուտի:

Եկեղեցու հյուսիսարևմտյան մասում կցակառուցված էր եռահարկ զանգակատուն-աշտարակը: Քառակուսի հատակագծով առաջին երկու հարկերն ունեին եկեղեցու որմերի բարձրությունը և գրեթե նույն արտաքին հարդարանքը: Առաջին հարկը կամարակապ բաց սրահ էր, իսկ երրորդը ութանիստ էր՝ զարդարված չորս շարք քիվերով, ութ որմնասյուներով և ավարտվում էր բրգաձև վեղարով:

Եկեղեցու սրահի երկարությունը 40, լայնությունը՝ 10, իսկ բարձրությունը՝ 28 լեհական կանգուն էր (1 կանգունը՝ 59,6 սմ)¹⁵²: Լայնական նավը ներքուստ ուներ 22 կանգուն երկարություն և 8 կանգուն լայնություն: Արտաքին չափերն էին՝ մոտ 26 մ երկարություն, մոտ 16,5 մ լայնություն, մոտ 24 մ բարձրություն: Ըստ 1968 թ. կատարված չափագրումների՝ հիմքերն ունեցել են 1,5 մ լայնություն և 2,4 մ խորություն¹⁵³:

Պահպանված երկայնական կտրվածքի շնորհիվ կարող ենք պատկերացում կազմել եկեղեցու ներքին հարդարանքի մասին: Որմերը պատված էին գոթական ոճի սլաքաձև որմնակամարներով ավարտվող որմնասյուներով: Դրանց միջև ուղղաձիգ և վերին հատվածում կիսակլոր կամարներով պատուհաններ էին: Ամենայն հավանականությամբ, եկեղեցու առաստաղը նույնպես գոթական խաչվող թաղերով էր: Հայտնի է, որ ավագ խորանին եղել է «Տիրամայրը մանկան հետ» սրբապատկերը, որում Տիրամայրը և մանուկ Հիսուսն ունեն հայկական ընդգծված դիմագծեր՝ մեծ սև աչքեր և թուխ վարսեր (այժմ գտնվում է Շեքեջին քաղաքի ֆրանցիսկյան տաճարում): Կողային խորաններում պատկերված էին Քրիստոսի խաչելության և պայծառակերպու-

թյան տեսարանները, սբ. Գրիգոր Լուսավորիչը, սբ. Անդրեաս առաքյալը, սբ. Աննան, սբ. Օնուֆրիոսը և սբ. Կայետանը¹⁵⁴:

ԺԸ դարի սկզբին արված քաղաքի հատակագծերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ եկեղեցական համալիրի տարածքը պարսպապատ էր, գլխավոր դարպասը կառուցված էր ուղիղ Օրմյանսկա փողոցի առանցքի վրա: Տարածքի հարավային հատվածի ողջ երկայնքով Վարթերես Կիրկորովիչի կառուցած հինգ տներն էին¹⁵⁵, իսկ հյուսիսարևմտյան անկյունում հավանաբար երիցատունն էր, որն այժմ չի պահպանվել:

Քահանաներ. հայ առաջին հոգևորականը թուրքական հողերից ժամանած *Քրիստափոր (Քշիշտոֆ) Կալուստն* էր, որին Յան Չամոյսկին հիշատակել է 1585 թ. հրովարտակում և խոստացել տարեկան 60 ոսկի աշխատավարձ: Մեծ հավանականությամբ նրա անունը եղել է Խաչատուր, իսկ ազգանունը/հայրանունը՝ Գալուստ: Սաղրկ Բարունչը փաստում է, որ Լվովից հրավիրված հայր Լուկասը (Գուկաս) փայտաշեն եկեղեցին կառուցեց, օծեց և Քշիշտոֆ Կալուստին կարգեց քահանա¹⁵⁶:

1602 թ. Լվովում գրի առնված Կանոնագրքում Հակոբ Թոխաթեցին հիշատակում է *տեր Խաչատուր անունով քահանային*. «...դատաւորութեանն պարոն Էսան պէյին, սորին իսկ ստացողի, որ մեծաւ ջանիւ և թեւկոխութեամբ ի խնդիր ելեալ աստուածապատուէր և դէտաղատ կտակիս նախանձայոյդ եղեալ հայրենի յիշատակացն, եզիտ զգաղափար սորա առ քահանայ մի Խաչատուր կոչեցելոյ. և ծանեաւ որ իւրոց նախնեացն էր, և կամեցաւ առնուլ ի ձեռանէ նորա, և տալ յիշատակ ի նորաշեն քաղաքն Չամօսցա, ի յեկեղեցին Ս. Աստուածածնին: Բայց տէր Խաչատուրն յոյժ գրասէր էր և առաւել ևս հին օրինակաց, վասն այն շատ աղաչեցեալ զպարոն Էսան պէյ դատաւորն, և ետ գրել զսա փոխան նորա, և ետ պարոն Էսան պէյին. վասն զի օրինակն սորա յոյժ ընտիր էր և անսղալ, զի էր երկաթազիր և Խլկցի գրեալ: Եւ առեալ ընկալաւ զսա պարոն Էսան պէյն ի ձեռանէ տէր Խաչատուրին, և եղ յիշատակ անջինջ վասն հոգւոյ իւրոյ...»¹⁵⁷:

Ներսես Ակիմյանը նշում է, որ Խաչատուր քահանան իրեն անձանոթ է և հավանաբար լեհահայ գաղութին չի պատկանում¹⁵⁸: Սակայն ԺԷ դարի սկզբի ձեռագրերի ուսումնասիրությամբ հնարավոր եղավ գտնել Լվովում բնակվող տեր Խաչատուրի մասին մի քանի հիշատակումներ: Այսպես՝ 1603 թ. Գազար Բաբերդցին Հայսմավուրքում նշում է. «Յի-

152 Նշվ. հոդվ., էջ 172:

153 **Chrzaszczewski J.**, Rekonstrukcja wyglądu kościoła ormiańskiego w Zamosciu na podstawie zachowanych Dokumentów i planów, Biuletyn ormiańskiego towarzystwa kulturalnego, N 4, Kraków, 1995, էջ 15:

154 **Kondraciuk P.**, նշվ. հոդվ., էջ 24:

155 **Kędziora A.**, նշվ. աշխ., <http://zamosciopedia.pl/>:

156 **Barącz S.**, Rys dziejów..., էջ 177:

157 ԺԷԱ, էջ 77:

158 **Ալիմեան Ն.**, Ցուցակ հայերեն ձեռագրաց ի Լվով եւ ի Ստամբուլում, Վիեննա, 1961, էջ 26:

շեցեք ի մաքրափայլ յաղօթս ձեր զհոգևոր հայր իմ՝
 Գրիգոր Խաչատուրն...»¹⁵⁹:

1626 և 1630 թթ. տեր Խաչատուր արեղան ինքն
 է երկու հիշատակարան թողել Չամոշչի եկեղեցու
 ճաշոցում. «...և տեր Խաչատուր արեղա Լովցի,
 վասն նուիրակութեան և հիմնարկութեան սբ. եկե-
 ղեցոյ...»¹⁶⁰, և «...զիս մեղաւորս Խաչատուր արե-
 դայս առաքեաց նուիրակ, սրբալոյս մեռնան, ի
 յայս աստուածապահ քաղաքն Չամոսցա...»¹⁶¹:

Այսպիսով կարող ենք փաստել, որ տեր Խաչա-
 տուրը ժԷ դարի առաջին կեսին գործել է Լվովում և
 որոշակի առնչություններ ունեցել Չամոշչի եկեղեցու
 հետ: Իսկ ահա լեհագիր աղբյուրներում նա հիշա-
 տակվում է Քրիստափոր (Քշիշտոֆ) Գլուշկովիչ ա-
 նուն-ազգանունով: Մեծ հավանականությամբ Գլուշ-
 կոն պարզապես Գալուստի ռուսիանցված տարբե-
 րակն է, և հենց նա է Յան Չամոշչկու հրովարտա-
 կում հիշատակված Քրիստափոր Կալուստը:

Քրիստափոր (Քշիշտոֆ) Գլուշկևիչ քահանան
 ազնվական տիտղոս ուներ¹⁶²: Ակտիվորեն պայ-
 քարել է Նիկոլայ Թորոսովիչի դեմ, 1630 թ. մեծապես
 աջակցել կաթողիկոսական պատվիրակ Խաչատուր
 վարդապետ Կեսարացուն, իսկ 1631 թ. դեկտեմբե-
 րին՝ անգամ բանտարկվել¹⁶³: Քահանայությունից
 բացի՝ զբաղվել է նաև առևտրով¹⁶⁴, ցանկացել է Լվո-
 վում կառուցել Սբ. Գրիգորին և Սբ. Սիլվեստրին
 նվիրված մատուռներ¹⁶⁵, սակայն ավարտին չի
 հասցրել: Ապրել է մինչև խոր ծերություն, մահացել
 1651 թ. Լվովում՝ իր արծաթե սկիհը կտակելով Երու-
 սաղեմի հայոց վանքին¹⁶⁶:

Հաջորդ ծխատեր քահանան մեծահռչակ տեր
 Հակոբ Թոխաթեցին է: Լեհագիր աղբյուրներում նա
 ներկայացված է Յակոբ Ալթունովիչ կամ Բոգդա-
 նովիչ ազգանուններով, որոնք հոր՝ Ալթունի և պա-
 պի՝ Աստուածատուր անուններից են ձևավորվել:

Սկսած 1595 թ.՝ բազմիցս հիշատակվում է եկե-
 ղեցական ձեռագրերում:

Ծնվել է 1563 թ. Թոխաթում, 24 տարեկանում
 դպիր էր Չամոշչում, իսկ 27-ում՝ արդեն քահանա:
 Շուրջ 70 տարի Չամոշչի հայկական եկեղեցու
 ծխատեր քահանան էր, իսկ 1657 թ. Նիկոլ երեցի
 Շարակնոցում հիշատակվում է որպես «...աշխա-
 տավոր և ձեռացեալ ալեօք ՂԳ (94) ամեայ...»¹⁶⁷:
 Մեծապես նրան ենք պարտական ինչպես Չամոշչի
 հայ գրական ժառանգության, այնպես էլ աղյուսա-
 շեն եկեղեցու կառուցման համար:

159 ԺԷԱ, էջ 122:

160 ԺԷԲ, էջ 203:

161 Նշվ. աշխ., էջ 369:

162 Korwin L., նշվ. աշխ., էջ 83:

163 Дашкевич Я., նշվ. աշխ., էջ 1149:

164 Barącz S., Żywoty sławnych..., էջ 132:

165 Նույն տեղում:

166 Նույն տեղում:

167 ԺԷԳ, էջ 751:

Տեր Պետրոս քահանան Հակոբ Թոխաթեցու ա-
 վագ որդին էր: 1617 թ. հոր կողմից հիշատակվում է
 ավագանի՝ Գրիգոր անունով, իսկ 1638 թ.՝ որպես
 քահանա. «...յանգ ելա ի վայելումն անդրանիկ որ-
 դոյ իմոյ տեր Պետրոս քահանային. գոր արտասուա-
 թոր մաղթանօք հայցեմ յԱստուծոյ ամենակալէ, զի
 բարով վայելել տացէ...»¹⁶⁸: Նիկոլ երեցի Շարակնո-
 ցի (1657 թ.) հիշատակարանում Չամոշչի քահանա-
 ների ցանկում նա արդեն չկար: Հնարավոր է՝ նրա-
 նից է սերում Դերբեդյոսովիչների ազգեցիկ գերդաս-
 տանը, որը ժԷ դարի վերջին և ժԸ դարի սկզբին մեծ
 դերակատարում ուներ համայնքի կյանքում:

Տեր Անդրեաս քահանան հիշատակվում է եկե-
 ղեցու ճաշոցի՝ տեր Խաչատուր արեղայի կողմից
 1630 թ. գրված հիշատակարանում. «...ի յայս աս-
 տուածապահ քաղաքն Չամոսցա, և ի ժամանակս
 քահանայից տեր Յակոբին և տեր Անտրեասին, որ և
 եկաք և հանգեաք ի տուն տեր Անտրեաս քահա-
 նային. Աստուած զինքն փառաւորէ ի յայս կեանք և
 ի յախտենականս...»¹⁶⁹:

Տեր Նիկոլ քահանայի մասին տեղեկանում ենք
 իր իսկ թողած հիշատակարանից. «Շնորհի Տեառն
 սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցաւ Շա-
 րակնոցս ի աշխարհս Իլախաց՝ Չամոշչայ, ի թվին
 ՌՃԶ (1657), նոյեմբերի Թ (9), օրն երկուշաբթի:
 Բայց գրեցաւ ձեռամբ թերավարժ ձաբրտող մօտ-
 րիս գրչի, հողս մաղապարտ Նիկոլ երեց, կոչեցեալ
 անուամբ և ոչ գործով, ի կարգ քրիստոնեութեամբ,
 անպարսպ անձամբ ձեռնարկեցի...»¹⁷⁰: Նույն հի-
 շատակարանում նա նշում է տարիքը (ծնվ. 1597 թ.)
 և թվարկում ընտանիքի անդամներին. «Նաև թէ ար-
 ժանի համարիք գտկարս անարժան և զփծուն գրիչ
 Նիկոլ երես ցաւակցաբար յիշել ի սբ. և ի փառաւոր
 յատեան. Երես անկեալ կու խնդրեմ զգաղափա-
 րողոյ, որ մեղադիր չլինեիք մօտրիս, զի ձեռացեալ
 ալեօք գծագրեցի Կ (60) ամեայ գոլով. աչքս ի լուսոյ
 էր պակասեալ և զգալարանքս ի յուժոյ. կաղաչեմ
 որ անպարսաւ թողուք, և զմեզ յիշէք յերկնաբացիկ
 աղօթս ձեր, և ծնողս իմ՝ Մուրատն, և զմայրն իմ՝
 Եսիուսն, և զիրիցկինս իմ՝ հանգուցեալ Մա-
 րիամ»¹⁷¹:

Տեր Հովհաննես քահանան հիշատակվում է
 1645 թ. Մարութա դպիր Սերաստացու ընդօրինա-
 կած Մաշտոցում. «...ի վայելումն տեր Յովհաննես
 նորընծա քահանային»¹⁷²: Նիկոլ երեցը 1657 թ.
 նույնպես հիշում է «...տեր Յովհաննես պատուական
 քահանայի, որ է որդի Քրիստոսատուրի Կաֆայի
 քաղաքի»¹⁷³:

168 ԺԷԲ, էջ 718:

169 Նշվ. աշխ., էջ 369:

170 ԺԷԳ, էջ 751:

171 Նշվ. աշխ., էջ 751:

172 Նշվ. աշխ., էջ 196:

173 Նշվ. աշխ., էջ 751:

Այս քահանայի մասին գովեստով է խոսում կաթողիկ միսիոներ Արոյիսիա Մարիա Պիդուն. «...են աստ եկեղեցի մի և քահանայք երկու, որ են Յովհաննէս քահանայ Քիստոստորովիչ, ամաց իբրև 47-ից, ամուրի, այր երևելի մտօքն և առաքինութեամբք, քաջ գիտակ լեզուացն Լատինացոց և հնոյն Հայոց, յոր լեզու գրեալ է խորհրդածութիւնս գիտնականս յոյժ, այլ և կարի փութաջան է ի գործ Ս. հաւատոցն, որոյ ապացոյց են օրինակելի կարգք եկեղեցոյն, որոյ նա է երեց՝ և ժողովուրդն, որ խրատու նորա և յաճախակի քարոզութեամբք վարժեալ է ի ծանօթութիւն եկեղեցոյ: Կամէր իսկ թագուհին Մարիամ Լուդովիկէ (որոյ յիշատակն օրհնութեամբ) ամբառնալ զնա ի պաշտօն նախանդամի ժողովոյ եպիսկոպոսին Հայոց Իվովայ»¹⁷⁴:

Ծնվել է 1625 թ. կաֆայեցի առևտրական Քրիստոսատորի ընտանիքում: 1645 թ. ձեռնադրվել է քահանա, Հակոբ Թոխաթեցու մահից հետո ստանձնել ավագերեցությունը: Մեծ դեր է խաղացել Չամոչչում հայ կաթողիկէ հավատքի ներդրման գործում, որի մասին Պիդուն մասնավորապես նշում է. «Յաւուր 19-րդի կամ 20-րդի յդեաց արքեպիսկոպոսն թուրք առ Յովհաննէս Քիստոստորովիչ, ծխատէր քահանայ եկեղեցոյն Հայոց ի Չամոստիէ յաղագս հարկատր ուղղութեանցն և հնազանդեցաւ քահանայն հրամանին, թէպէտ և տրտնջէին զայնմանէ ժողովուրդն, և մանաւանդ հակառակեցաւ կարի կրօնատրն Հայոց ի Չամոստիէ, Սիմեոն, որ այնչափ ջերմեռանդն էր, զի յաւուր յորում զուղղութիւնն արարին՝ ի մատենի միոջ եկեղեցոյ զայս ինչ նշանակեաց. «Մուծալ այսօր հերետիկոսութիւն յեկեղեցին Հայոց Չամոստեայ»...»¹⁷⁵:

Այս միջադեպից հետո Սիմեոնը հարկադրաբար տեղափոխվել է Լվով, որտեղ ձեռնադրվել է քահանա և ծառայել Սբ. Հակոբ եկեղեցում¹⁷⁶, շարունակելով անխոնջ պայքարը եկեղեցական միության դեմ: Նիկոլայ Թորոսովիչի պահանջով բազմիցս ձերբակալվել է քաղաքային իշխանությունների կողմից և ի վերջո վտարվել երկրից¹⁷⁷:

Տեր Հովհաննէսը մեծ հեղինակություն է վայելել հայ կաթողիկէ շրջանակներում և անգամ դիտվել որպէս Լվովի առաջնորդ Նիկոլայ արքեպիսկոպոս Թորոսովիչի հավանական փոխարինող: Պիդուն,

քվարկելով չորս հավանական թեկնածուներին, նշում է. «...գՔիստոստորովիչ, զհայ երեցն Չամոստեայ, հանդիսացեալ ի փութաջանութեան վասն հաւատոյ և ի գիտութեան լատինական և հայացի ուսմանց, զորմէ ասէին՝ թէ կամիցէ լեալ թագուհոյն Մարիամու Լուդովիկէի ամբառնալ զնա յաստիճան փոխանորդութեանն Իվովայ»¹⁷⁸:

Հետաքրքրական է, որ Պիդուն տեր Հովհաննէսին բնութագրելիս անպայման հիշատակում է Լեհաստանի Մարիա Լուդովիկա թագուհուն (1611-1667 թթ.), որից կարելի է ենթադրել, որ քահանան անձամբ ճանաչում էր նրան և նրա հովանավորյալն էր:

Տեր Պետրոս քահանան (ավագանի անունն է Մելխիոր Նիկոլայոս Արիենովիչ) Լվովի հայ կաթողիկէ պապական դպրոցի սաներից էր: Ազգակցական կապեր ուներ տեր Հովհաննէս քահանայի հետ¹⁷⁹: Ծնվել է 1640 թ.: Հայ կաթողիկէ քահանա է ձեռնադրվել 1668 թ.¹⁸⁰: Պիդուն նրա մասին գրում է. «...Պետրոս քահանայ, այր երիտասարդ, ամաց 32-ուց, որ գիտէ զլեզուս Լատինացոց և զՀայոց և է կաթողիկ ճշմարիտ. և ըստ մերում միջնորդութեան ձեռնադրեցաւ, յետ ուսանելոյ նորա ամիսս ինչ ի պապական դպրանոցին Իվովայ»¹⁸¹:

Հայ կաթողիկէ շրջանի հոգևորականներից տարբեր տարիներին հիշատակվում են Պետեր Գժեգոժ Դավիդովիչը¹⁸² (1679 թ.), Սիմեոն Ստեփանիկիչը (1703 և 1720 թթ.)¹⁸³, Չախարիաշ Քշիշտոֆ Ստեցկովիչը¹⁸⁴ (1725 թ.) և Կայետան Կոսսան¹⁸⁵ (1749-74 թթ.):

Վերջին հոգևորականը *Դեոդատ Շադբեյն*¹⁸⁶ էր, որը քահանայագործել է 1774 թ. և ծառայել մինչև եկեղեցու ծխի վերացումն ավստրիական իշխանությունների կողմից (1784 թ.):

Կրտսեր հոգևորական դասից հիշատակման են արժանի Վարթերես (որդին Ասվատուրի¹⁸⁷, 1642 թ.) և Դավիթ (որդին Գասպարի¹⁸⁸, 1652 թ.) սարկավագները, ինչպես նաև Սիմեոն (որդին Մարտիրոսի, 1584-1639 թթ.), Աստվածատուր¹⁸⁹ (1640 թ.), Մարութա (որդին Ալեքսանոսի¹⁹⁰, 1645 թ.) դպիրները:

178 Նշվ. աշխ., էջ 228:

179 Նշվ. աշխ., էջ 118:

180 Նշվ. աշխ., էջ 128:

181 Նշվ. աշխ., էջ 16:

182 **Суշтан С.**, նշվ. աշխ., էջ 26:

183 Նշվ. աշխ., էջ 27:

184 **Baracz S.**, Rys dziejów..., էջ 178:

185 Նույն տեղում:

186 Նույն տեղում:

187 ԺԷԳ, էջ 49:

188 Նշվ. աշխ., էջ 477:

189 ԺԷԲ, էջ 797:

190 ԺԷԳ, էջ 196:

174 **Պիդու Ա. Մ.**, նշվ. աշխ., էջ 16:

175 Նշվ. աշխ., էջ 39:


176 Նույն տեղում:

177 Նշվ. աշխ., էջ 17:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Մուշեղ Լալայանին՝
հայագիտական մեծաքանակ
գրականություն և
ճարտարապետ
Մարկո Բրամբիլային՝
Յոզեֆ Ստրժիգովսկու
երկհատորյա աշխատությունը,
ինչպես նաև
«Ալիք» օրաթերթի
խմբագրատանը՝
արդեն երրորդ
տարին անընդմեջ
յուրաքանչյուր լույս
ընծայված համարից
հիմնադրամի գրադարանին
նվիրելու համար:

Ջավեն Սարգսյանին,
Ավո Հովհաննիսյանին և
Ջոն Ինգհամին՝
տարիների ընթացքում ստեղծած
իրենց լուսանկարների
հարուստ հավաքածուների
կրկնօրինակները
հիմնադրամի թվային շտեմարանին
նվիրելու համար:



ՀԻՄՆԱԿԱՆ
ԳԳ ԱՇԽԱՏՈՒՅԹ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԻՄՆԱԿԱՆ
ԸՆԴՍՏԱՐԱԿՆԵՐՈՒԹՅՈՒՆ ՆՆ
ՈՒՄՈՒՆԱՍԻԻԿՈՒ
ՀԻՄՆԱԿԱՆ
RESEARCH ON
ARMENIAN
ARCHITECTURE

ԵՐԵՎԱՆ - YEREVAN
2016

